

Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

589

6

Պատկերները բոլոր ձևերնեցի միացեք.

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ ՀԱՅԵԱՍՏԱՆԻ ԿՈՄ. ԿՈՒՑ. ԿԵՆՏՐ.
ԿՈՄԻՏԵՅԻ ՅԵՎ ՀԱՅՍ. ՀՐԱՑ. ԳԻՎ. ԲԱԶՄԱԺՆԻ

ԿԱՐՄԻՐ ԶԻՆՎՈՐԻ ՀՈՒՇԱՏԵՏՐ

1924
ՏՊԱԳՐ. ՏՐԵՆՏՐԻ ԱՌԱՋԻՆ ՏՊԱՐԱՆ
ՅԵՐԵՎԱՆ

355.23
4-33

1 MAR 2010
07 JUN 2005
20 MAY 2009

355.23
4-33

ԸՆԿ.

300
1389-44



ԼԵՆԻՆ
ՆՐԱ
ԿՅԱՆՔՆ ՈՒ ԳՈՐԾԸ

1003
11919


~~1310~~
589

ՀԱՅԿ ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԳԻՐԱՆ
Հ.Ս.Տ.Ր.-Կ ՊԱՐԼԱՄԵՆՏԱԿԱՆ ԲԻՍԿՈՒՊԱԿԱՆ

ՀԱՅԿ ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԳԻՐԱՆ
Հ.Ս.Տ.Ր.-Կ ՊԱՐԼԱՄԵՆՏԱԿԱՆ ԲԻՍԿՈՒՊԱԿԱՆ

ETOS YAM O S

41 297



10

3685-21

4. 100000.

20 MAY 2013

Վ. Ի. ՈՒԼՑԱՆՈՎ-ԼԵՆԻՆ

Լենինը 54 տարեկան եր: Ծնվել է Ռուսաստանի Սիմբիրսկ քաղաքում 1870 թ.: Գյուղական ծագում ունի: Նրա հայրը ուսուցիչ եր: Հայրը լուսավորված մարդ լինելով, փոքրիկ Վլադիմիրին լավ գրագետ է դարձնում: Վլադիմիրն ավարտում է գիմնազիան:

«Ճուտը ձվում կերևա», ասում է մեր գյուղական առածը: Ասում են նա փոքրուց հենց լավ սովորող եր: Ենպիսի բաներ եր գրում, վոր ջահելի գլխի բան չեր:

Համալսարան է մտնում: Չանցած մի ամիս, նրան համալսարանից դուրս են ղցում: «Անհանգիստ է, ուսանողներին խելքից հանում ե», ասում է համալսարանի ղեկավարը, կոռափարության ազենտը: Չորս տարուց հետո գալիս, քննություն է տալիս ու ավարտում համալսարանը: Իրանից հետո գնում է Պետրոգրադ:

ՀԵՂԱՓՈՒՍԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆԷ

Լենինի մեծ յեղբորը թագավորը կախաղան եր հանել: Փորձել եր թագավորին սպանել: Այդ ղեպը ազդել եր յերիտասրդ Լենինի վրա:

Պետրոգրադում ամբողջ որեր պտտում եր



բանվորական թաղերում, կազմակերպում բանվորներին, ընկեր փնտրում: Բայց չկար: Գլխումը քիչ «այբուբենի» կտոր ունեցողը գնում եր պետություն մոտ վարձվում, նրա հրամանները կատարում:

Բայց եղ աշխատանքն յերկար չի տևում: Լենինին բռնում, բանտ են նստեցնում ու աքսորում Սիրի: Ե

Պետրոգրադում կատարած աշխատանքը իզուր չի անցնում: Նրա միջոցով Պետրոգրադի բանվորների մեջ կազմակերպում է հեղափոխական մի խումբ, վորի նպատակն էր լինելու կովել բանվոր դասակարգի ազատագրության համար:

ԱՔՍՈՐՈՒՄ

Լենինը են տեսակի հեղափոխականներից էր, վոր աքսորումն էլ դադար անող չէր: Այնտեղ նա սկսում է գրքեր գրել: Դեռ են ժամանակ պարզ չէր, թե բանվորը իր լծից ազատվելու համար կովի ժամանակ բուրժուաների հետ պիտի ընկերանա թե վոչ: Եսոր եղ հարցը մեզ շատ հասարակ հարց է թվում: Բայց են ժամանակները եղ բանը դեռ մուլթն էր: Կային մարդիկ, վորոնք ասում էին, վոր հեղափոխությունը դա—բուրժուազիայի գործն է, վոր բանվորը իր կոպեկների համար պիտի մտածի:

— Բանվորները պետք է իրենց սեփական կուսակցությունն ունենան, վոր կովեն և թագավորի և բուրժուայի դեմ, ասում է Լենինը:

Հեղափոխականների շրջանում յեկան են յեզրակացություն, վոր Լենինը սովորական մարդկանցից չէ, վոր նա մեծ ապագա յե խոստանում:

ՈՏԱՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ (ԵՄԻԳՐԱՑԻԱՅՈՒՄ)

Թագավորի աքսորից ու բանտից պրծնելու համար Լենինը վորոշում է դուրս գալ Ռուսաստանից, արտասահման գնալ: Առաջին անգամ ոտարություն դուրս գալը լինում է 1890-ական թվականներին: Այնտեղ նա տանում է շատ ու շատ նեղ որեր, բայց յերբեք ձեռք չի քաշում իր հեղափոխական գործերից: Եդտեղ նա հին հեղափոխականների մեջ մեծ հարգանք ու անուն է ձեռք բերում: Լենինը անհաշտ էր թագավորական կարգերի հետ, բայց անհաշտ էր և են «հեղափոխական» կոչեցյալների հետ, վորոնք բանվոր դասակարգին ծուռ ճամբով են տանում: Դրանցից էին և սոցիալիստ-հեղափոխականները: Լենինը դրանց հետ չուներ: Ճիշտ քսան տարի սրանից առաջ նա եղ կուսակցությունը բուրժուազիայի վարձական ագետներ, փողատերերի ծառաներ անվանեց: Նա մարգարե յեր, նրա ասածը ճշտվեց: Եսոր բոլորը գիտեն, վոր չորս

տարի սրանից առաջ սոց. հեղափոխականները ցարի գեներալների կողմը անցած, մեր դեմ կռուում ելին:

Ոտարութեան մեջ Լենինը հրատարակում է «Իսկրա» (Կայծ) թերթը: Կարճ ժամանակից հետո իր շուրջն է հավաքում բավականաչափ յերիտասարդ հեղափոխականներին:

Ն Ո Ր Ճ Ա Ն Ա Պ Ա Ր Հ

Լենինը ուներ ընկերներ, հին հեղափոխականները, որինակ՝ Պլեխանով, Զասուլիչ, Ակսելրոզ, Մարտով, և այլն: Դրանք տարիքով բավական մեծ էին Լենինից: Յերկար ժամանակ աշխատել էին հեղափոխական ասպարիզում: 1903 թվին սոցիալ դեմոկրատական կուսակցութիւնը համագումար է ունենում: (Են ժամանակ բայլշիկ ու մենշեվիկ չկար, յերկուսը սոցիալ-դեմոկրատներ էին կոչվում): Կուսակցութեան ներքին խնդիրները վերաբերյալ վեճ է պատահում:

Եստեղ պետք է ասել, վոր Լենինը խնայող մարդ չէր. Ամենամոտ ընկերն էլ վոր լիներ, յեթե նա հեղափոխութեան վերաբերյալ սխալ էր կատարում, առանց հարց ու փորձ անելու կջախջախեր, կասեր, վոր դու սխալ ես: Մարտով, Ակսելրոզ և ուրիշներից Լենինը բաժան-

վում է ու հիմնում բայլշիկական կուսակցութիւնը:

— Յես մենակ կաշխատեմ, բայց ճիշտ գործ կանեմ:

Նրա ընկերները սկսում են փսփօսել, վոր Լենինը հեռուորդներ քիչ ունի, վոր նրա բանը պրծած է: Դրան Լենինը պատասխանում է, «վոր ճուտերը աշնանն են համարում, կկռվենք, տեսնենք ում հետ կգան բանվորները»:

Լենինը եղ ժամանակ բայլշիկների գըլուխն էր:

ՆՈՐԻՅ ՌՈՒՍԱՍԱՆՆՈՒՄ

1905 թվի հեղափոխութիւնը Լենինին գեպի Ռուսաստան բաշեց: Պետրոգրադի բանվորներն իրենց Խորհուրդներն էլին ստեղծում: Մենշևիկներին վոստիկանութիւնը թողնում էր արքայազարա աշխատել: Բայլշիկներին բոլկոտ էին արել, վոր նրանք «անհանգիստ» մարդիկ են: Լենինի ազդեցութիւնը մեծ էր այդ հեղափոխութեան մեջ: Նա քիչ էր յերևում Խորհուրդների նիստերում, մեր կուսակցութիւնն արգելում էր նրան յերևալ: Բայց նա բանվորներին դասեր էր տալիս, խորհուրդներ էր տալիս՝ ինչ անել: Միևնույն ժամանակ նա լավ հետեւում էր Խորհուրդներին, ևն Խորհուրդներին,

վորոնք Հոկտեմբերյան Հեղափոխությունից հետո յերկրի տերը պիտի դառնային:

Ցարի մտրակը կարողանում է բանվորներին ցիր ու ցան անել, հեղափոխությունը խեղդել: Լենինը թողնում է Ռուսաստանն ու անցնում արտասահման:

Ն Ե Ղ Ո Ր Ե Ր

Դարձյալ սկսվում է անհանգիստ կյանքը: Տկար, միջոցներից զուրկ, բայց չհուսահատված, նա դարձյալ վերցնում է իր մեծ գործը, հեղափոխության գործը:

Պատմում են, վոր նա եղ ժամանակ արտասահմանում ապրում եր ամենավատ կացության մեջ:

Նրա սենյակը համարյա թե չարդախի պես մի նեղ տեղ եր: Գալիս եյին յերիտասարդ, ավելի ջահել հեղափոխականները հուսահատված, բայց Լենինը նրանց հույս եր տալիս, կամք մտցնում նրանց հոգու մեջ:

— Վոչինչ, եսպես ել կլինի, նեղ որերին լեն որեր ել կլինեն: Կանցնի մի առ ժամանակ և մենք հեղափոխության ալիքի բաշին կլինենք:

Շատ ու շատ փոփոխություններ են կատարվում: Մենչևիկիերը վորոշում են ասպարեզ յելնել, ազատ կերպով աշխատել: Դրանով նրանք բոլորովին իրենց վողողում են, ցելը կոխում

ու ցուլց տալիս շատ շատերին՝ ովքեր են իրենք:

ԴՐՈՒԹՅՈՒՆԸ ԳԻՉ ՄԵՂՍՍՅԱՄ

Վրա յե հասնում 1912 թիվը: Դրությունը քիչ լավանում է: Ռուսաստանի բանվորները հավաքում են իրենց ուժերը: Լենինը իր մտքերը ես անգամ քարոզում է թերթերի միջոցով:

Ռուսաստանին մոտ լինելու համար փոխադրվում է Գալիցիա:

Ճիշտ է, Լենինը Ռուսաստանում չեր, բայց բայլևիկական թերթերը նա եր ղեկավարում: Իր սուր հողվածներով աջ ու ձախ շարդում, փշրում է բանվոր ղասակարգի շիտակ ճամփին կանգնողներին՝ բուրժուաներին, մենչևիկներն և եսերներին:

Պատմում է ընկեր Ջինովյեվը, թե ինչպես նա Դումայի համար բանվորներ եր պատրաստում:

Մեզ մոտ եյին գալիս Պիտերի բանվորներից, խոսում, զրուցում ընկեր Լենինի հետ:

— ՎՄԵՆՔ կամենում ենք զբաղվել որենասդրական լուրջ աշխատանքով, մենք պետք է ձեզ հետ խորհրդակցենք բյուլջեյի մասին, բնենք այսինչ որի՞ ագիժը, փողատերերի ես ինչ նա-

թագծի նկատմամբ ուղղումներ մշակենք, ասում էյին բանվորները:

Լենինը փոխանակ պատասխանելու, անկեղծ կերպով ծիծաղում, ծիծաղից թուլանում էր:

— «Աչքի լույս, ինչիդ պետք է ճշտելն», ուղղումը, կողետական որենագիրքը՝ ախր դու բանվոր ես, իսկ Դուման վայրի՝ կատաղած լեզուների համար ե: Դու դուրս արի և ամբողջ Ռուսաստանովը մեկ խոսիր, բանվորներին հեղափոխության կանչիր, Դումայի յերեսովը խփիր, ասա ճանաչողաններ ու շահագործողներ»: Դու նրանց աչքը կոխիր ենպիսի որինագիծ, վոր ճապասեք, մենք յերեք տարուց հետո ձեզ սյունից պիտի կապենք, կախ տանք»: Եդ կլինի իսկական «որինագիծը»:

Եդպիսի դասեր եր տալիս Լենինը բանվորներին:

ՊԱՏԵՐԱԶՄԻ ՏՎՐԻՆԵՐԸ

Համաշխարհային կռիվն սկսվեց: Սահմանը փակվեց, կռիվ եր, արյուն եր հոսում: Լենինը կտրվեց Ռուսաստանից: Յերկրորդ Իստերնացիոնալը (հեղափոխականների, բանվորների միջազգային միությունը) դավաճանեց, Ծեբ, փթած հեղափոխական կոչեցյալները դավաճանեցին բանվոր դասակարգին, անցան կոպոզների կողմը: Միայն բայընիկական կուռակցությունն եր,

վոր բողոքեց կովի դեմ, շարտելով մենշևիկներին յերեսին իրենց արարքը, թե «դուք հեղափոխականներ չեք, դուք փողատերերի լակեյներն եք»:

Եստեղ Լենինը մի լողունգ թույլ տվավ, վոր եդ կռիվը պետք է քաղաքացիական կռիվ փոխվի: Յեվ վերջում եդպես ել յեղավ: Լենինին մեղադրում, լկտի խոսքեր էյին ասում, վոր ինքը հեռու յե Ռուսաստանից, վոր տեղյակ չե Ռուսաստանի կյանքին, հեռու կանգնած խոսում է:

Դրան Լենինը պատասխանում է, վոր «գիտենք ինչ ենք անում. ժամանակը վոր գա, այն դեպքում կտեսնենք մենք աշխատել գիտենք թե վոչ»:

ՓԵՏՐՎԱՐՅԱՆ ՀԵՂԱՓՈՒՍՈՒԹՅՈՒՆԸ

Ժողովուրդը չտարավ թագավորի արարքները: Նա դեն շարտեց թագավորին, բայց նրա տեղ փողատերերը նստեցին ժողովրդի շնքին: Լենինը եդ ժամանակ արտասահմանից Ռուսաստան ճանապարհվեց: Ահ ու գողն ընկավ Միլուկովների, Չխեյիձենների և Ծերեթելիների սիրտը: Սկսեցին վայնասուն բարձրացնել:

— Լենինը Գերմանիայով է յեկել, Լենինը կաշառված է գերմանացիներից:

Կերենսկու կառավարությունը չորս կողմը

հայելով, անհանգիստ կերպով շարունակում էր կռիվը: Հողը դեռ հողատերերի մոտ էր: Ժողովուրդը քանդվել, քայքայվել էր պատերազմից: Սովը աջ ու ձախ իր հուռնան էր անում: Լենինը պատրաստվում էր ցրելու «ուշրեգիլկան» (Սահմանադիր ժողովը):

Յերկիրը ալեկոծվում է: Թվում է, թե ժամանակն է իշխանությունը տալու բանվորի ձեռքը: Բայց Լենինը այստեղ դուրս է գալիս իր մարգարեյական խոսքերով, վոր «վաղաժամ իշխանությունը վերցնելը, — դա պարտությունն է նշանակում»:

— Ֆրոնտավիկները դեռ բոլորը մեր կողմը չեն, հարկավոր է սպասել: Կերենսկին կարող է ֆրոնտից գործ բերել ու բանվորությանը ցաք ու ցրիվ անել, ասում է Լենինը:

Եղպես ել լինում է: Լենինի ասածը կատարվում է:

Մինչդեռ ժամանակը քանի դնում, ենքան հասունանում է:

ՀՈԿՏԻՄԲԵՐՅԱՆ ՈՐԵՐԸ

Ֆինլանդիայից Լենինը հայտնում է մեր կուսակցության Կենտրոնական Կոմիտեյին, վոր ժամանակ է սկսելու: Ու առանց սպասելու նա մենակ ճամբա յե ընկնում դեպի Պետրոգրադ: Կերենսկին հրամաններ է արձակում, զարկում

այս ու այն կողմ, կարգադրում բռնելու Լենինին: Բայց դժվար:

Վրա յեն հասնում Հեկտեմբերյան որերը:

Իշխանությունը անցնում է, բայց Լեիկները ձեռքը: Մի ուրիշը, այդպիսի բալ անողը, յեբեի սարսափեր, վախենար վերցնելու իշխանությունը, ծանոթ լինելով են տեսեսական քայքայված դրության հետ, վորը տիրում էր այն ժամանակ Ռուսաստանում: Միայն Լենինի յերկաթե կամքն էր, վոր տարավ եդ:

ՄԱՀԱՓՈՐԶ ԼԵՆԻՆԻ ՎՐԱ

Բաց դաշտում աշխատավորության թշնամիները պարտվեցին Լենինի յերկաթե բաղուկի հարվածներից: Իրանցից եյին և եսերները: Ու վորոշեցին զիմել դավադիր միջոցի, իսկել Լենինին:

Առաջին մահափորձն աշխատավորության դավաճանները կատարեցին Լենինի վրա 1918 թվին: Նա առողջանում է: Այնուհետև լինում են ելի մահափորձեր, բայց անհաջող:

Ետտեղ կանգ չեմ առնում ես վերջին տարիների արած աշխատանքների վրա: Գրել այդ ամենի մասին, նշանակում է անվերջ գրքեր գրել: Ինչ ասես, վոր կապված չե Լենինի անվան հետ:

Նրա նորտեսական բաղաբականություն-

նը, գյուղացիների մասին գրած շեկրետները, լուսավորութիւնն ասպարիզում արած գործերը, մի խոսքով գործեր ու գործեր, անթիվ ու անհամար գործեր:

Եւ շրջանը մեզ շատ շատերիս ծանոթ է:

*
**

Ֆերկարատն մտավոր աշխատանքից և չափազանց ուժասպառ լինելուց Լենինը անկողին է ընկնում ու 1924 թվի հունվարի 21-ին Մոսկվայի մոտ Գորկա գյուղում վախճանվում: Պետք է ասել, վոր Լենինի մահվան պատճառ է դարձել նաև հակահեղափոխականների մահափորձից ստացած վերքերը:

ԼԵՆԻՆԸ ՉԱՍ, ԲԱՅՑ ԿԱՆ ՆՐԱ ԳՈՐԾԵՐԸ, ԿԱՆ ՆՐԱ ԱՎԱՆԳՆԵՐԸ

Լենինը մեռավ, բայց նրա գործը կենդանի յե: Լենինը հիմք է դրել Կոմունիստական կուսակցութեան, մի կուսակցութեան, վորի անունը հարգանքով են հիշում բոլոր յերկրների բանվորներն ու գյուղացիները:

Բացի դրանից, նա թողել է մեզ ժառանգութիւն— Խորհրդային իշխանութիւնը: Խորհրդային իշխանութիւնը Լենինի փափայանքի առարկան է յեղել: Խորհրդները դեռ փայփայել է 1905 թվից: Եսոր բոլոր յերկրների ժողո-

վորդները, յերբ ազատվեն իրենց փողատերերի, շահագործողների լծից,— Լենինի գծած ճամբով, Խորհուրդների ճամբով պիտի գնան:

Կոմունիստական Ինտերնացիոնալը ընկ. Լենինի ջանքերով է հիմնվել: Նրա վրա էլ շատ աշխատել է ընկ. Լենինը: Եսոր հեռու յերկրների բանվորները ուրախանում, պարծենում են իրենց շահերը պաշտպանող եւ մեծ ուժը տեսնելիս. իրենց ազատվելու հույսը Կոմունիստական Ինտերնացիոնալի վրա յեն-դրել:

Մհա են մեծ ժառանգութիւնը, վոր ընկեր Լենինը թողել է աշխատավորութեանը:

11942
11941

3685-21



ԼԵՆԻՆԸ ՅԵՎ ԳՅՈՒՂԱՑԻՈՒԹՅՈՒՆԸ

Արդյունաբերության շրջանում Լենինը պարզապես պահանջում էր, վոր կապիտալիստները պետք է հեռացվեն և գործարանները պետք է հանձնվեն բանվորներին:

Գյուղատնտեսության շրջանում Լենինի պահանջները միանգամայն դեմ էին մենշևիկների ցանկությանը: Նրանք ասում էին, վոր գյուղացիությունը պետք է ժամանակի ընթացքում արհեստավորի պես զբղվի իր սեփականությունից և կապիտալիստ կալվածատերի մոտ բանվոր մտնի: Յերբ այդ կկատարվի, այն ժամանակ միայն կարելի յե կալվածատերերին հեռացնել և կալվածները հանձնել կալվածքում աշխատող բանվորներին:

Իեռ 1907 թվին Լենինը ապացուցեց, վոր մենշևիկների այդ ցանկությունները վոչնչով չեն տարբերվում նույն ժամանակվա ուսուկան մինխտրների խորհրդի նախագահ, կալվածատերերի յեռանդուն պաշտպան Ստալինի ցանկություններից:

Լենինը ասում էր, վոր պետք է հողը խել

անմիջապես և տալ գյուղացիներին, իսկ պահպանել կալվածատիրությունը, այդ նշանակում է թողնել գյուղացիությանը ճորտատիրական վիճակի մեջ, մի բան, վոր խանգարում է յերկրի արտադրական ուժերի ազատ զարգացման: — Հսկայական թվով գյուղացիությունը չի կարող իր ուժերի շափ ոգնել յերկրի տնտեսության զարգացման, քանի վոր նրա ձեռքին հող չկա, նա կալվածատերի ճորտն է:

Այդ պատճառով էլ Լենինը պահանջում էր, թե պետք է ամեն կերպ ոգնել, վոր զարգանա աղքատ գյուղացիության տնտեսությունը: Իսկ դրա համար ամենից առաջ հողի վրայից պիտի այնպես քշել կալվածատերերին, վոր նրանք մեկ էլ չվերադառնան:

Կալվածատերերի հողերը պետք է խել, դարձնել աշխատավորների պետության սեփականություն և գյուղում ապրող բոլոր աշխատավոր մարդկանց հնարավորություն տալ սեփական ուժերով պարապելու հողագործությանը և ուրիշներից չշահագործվելու:

Լենինի այդ ծրագրի շնորհիվ է, վոր գյուղացիությունը անցավ բալլևիկների կողմը: Նա յեղբայրական ձեռք մեկնեց բանվորությանը: Յեվ գյուղացիությունն ու բանվորությունը միացած բշեցին կապիտալիստներին ու կալվա-

ծատերերին, իրենց ձեռքը գցեցին հողն ու ֆար-
րիկան և կաղմեցին Բանվորա-Գյուղացիական
կառավարութիւն:

ԼԵՆԻՆԸ ՅԵՎ ԳՅՈՒՂԱՅԻՈՒԹՅԱՆ ԱՂԱԳԱՆ

Հոկտեմբերյան հեղափոխութիւնը ֆարրի-
կան տվեց բանվորների ձեռքը, իսկ հողը՝ գյու-
ղացիների ձեռքը:

Գործարաններում բանվորները ազատ հնա-
րավորութիւն ունեն դիմելու դեպի կոմունիզմ,
քանի վոր արդյունաբերութիւնն զարգացումն
այն աստիճանի յե հասել, վոր գործարանները
կարող են բանեցնել ընդհանուր ուժերով ընդ-
հանուրի շահերի համար: Մասնավոր սեփակա-
նատիրութիւնից և դրանից առաջ լեկաժ չա-
րիքներից ազատվել է բանվորութիւնը:

Այդպես չի գյուղացիութիւնն զրութիւնը:

Միութիւնն հողերի հսկայական տարածու-
թիւնը գյուղացիական մանր տնտեսութիւն-
ները բաժանել են իրար մեջ միլիոնավոր մանր
մասերի և ամեն մեկը իր համար առանձին տըն-
տեսութիւնն է վարում:

Նման պայմաններում գյուղացիութիւնն մեջ
վաղ թե ուշ առաջ կգան մասնավոր սեփակա-
նատիրութիւնն բոլոր չարիքները:

Իրա համար ել պետք է աշխատել, վոր
գյուղու մն էլ վերացվի մասնավոր սեփականա-

տիրութիւնը, վոր այնտեղ ել կազմվեն գյու-
ղատնտեսական խոշոր տնտեսութիւններ, ուր
գյուղացիք աշխատեն ճիշտ այնպես, ինչպես
քաղաքում բանվորներն են աշխատում գործա-
րաններում:

Այդ դեպքում միայն կոմունիզմը կտարած-
վի նաև գյուղում և գյուղացիութիւնն ու լրան-
վորութիւնը, ուրեմն և ամբողջ աշխատավորու-
թիւնը կմտնեն կոմունիստական հասարակարգի
մեջ:

ԻՆՉՊԵՍ ԿԱՐՈՂ Ե ԳՅՈՒՂԱՅԻՈՒԹՅՈՒՆԸ ԴԻ- ՄԵԼ ԴԵՊԻ ԿՈՍՈՒՆԻՋՄ

Գյուղացիութիւնն փրկութիւնը մասնավոր
սեփականատիրութիւնից ազատելու և սոցիա-
լիստական տնտեսութիւնն դիմելու մեջն է:

Բայց թե ինչպես պիտի հասնել այդ սո-
ցիալիստական տնտեսութիւնն:

Լենինը յերբեք այն մտքին չեր, վոր կարե-
լի յե վերեւից, զոռով գյուղում մտցնել սոցիա-
լիստական տնտեսութիւնն: Նա այդ քայլը հա-
մարում եր խելագարութիւնն:

Լենինը ասում եր, վոր գյուղացիութիւնն
տնտեսութիւնն ավելի ու ավելի առաջ գնալով
և գյուղացիութիւնը ավելի ու ավելի զարգանա-
լով՝ ինքն իրեն հենց կգիմի սոցիալիստական
տնտեսութիւնն:

ԻՆՉՊԵՍ ԵՐ ԱՊՐՈՒՄ ԼԵՆԻՆԸ

Խորհրդային իշխանության թշնամիները սուտ լուրեր եյին տարածում, վոր Լենինը ապրում ե պալատներում, անում ե ահագին ծախսեր և այլ նման բաներ:

Այժմ, լերբ այլևս Լենինը չկա, արժե, վոր ամեն մեկն իմանա, թե ինչպես եր ապրում նա:

Յերբ Խորհրդային կառավարությունը Մոսկվա տեղափոխվեց, Լենինը իր համար մի սենյակ վերցրեց կրեմլում, կենսագործրկոմի շենքի յերկրորդ հարկում: Այդ սենյակը մոտ հինգ արշին լայնք ուներ և յոթը արշին՝ յերկարություն: Նրա տախտակի հին հատակը սարսափելի կերպով ճոճում եր, իսկ հարևան սենյակների աղմուկը անցնում եր հեշտությամբ սենյակի փայտե պատից: Այդ սենյակում Լենինը և պարապում իր, և՛ քնում:

Ինչքան ասում եյին Լենինին, վոր նրա սենյակը պետք ե նորոգել, նա դրա վրա ուշադրություն չեր դարձնում: Միայն 1922 թ., յերբ նրա առողջությունը վատացավ և յերբ բժիշկները նրան խորհուրդ տվին տեղափոխվել Գորկի, հնարավոր յեղավ նորոգել Լենինի սենյակը:

Լենինը նորոգման ծրագիրը կրճատեց:

Հետագայում, վորքան նորոգող ճարտարապետը փորձեց ավելի հարմարություններ ստեղծել, բայց այդ բանը չհաջողվեց, վորովհետև վոչ վոք չեր համարձակվում Լենինի ցանկության դեմ քայլ անել:

Այդ փոքրիկ սենյակում Լենինը պարապում եր անդադար: Համարյա ամբողջ գիշերը նրա ճրագը վառվում եր: Նա շատ քիչ եր քնում ու անվերջ պարապում:

Լենինը ապրում եր շատ համեստ կերպով: Նույնիսկ նա հրաժարվում եր ամենակենսական պահանջներից: Յերբ ընկերները նրան նվեր եյին բերում, նա այդ նվերը բաժանում եր ծանոթ բանվորներին՝ իր համար շատ քիչ բան պահելով:

Յերբ Լենինը ծանր հիվանդացավ, կարիք դրացվեց մի քանի ձեռք փոխնորդների: Յե՛վ պարզվեց, վոր Լենինը չունի սովորականից ավելի փոխնորդ:

Ահա ինչպես եր ապրում հեղափոխության առաջնորդը, ընկ. Լենինը:

Պ Ա Տ Գ Ա Մ Ն Ե Ր

Ընկեր,

Այսօր դու տուն ես գնում:

Դու բաժանվում ես Բանվորա-Գյուղացիա-
կան կարմիր Բանակից:

Կարմիր Բանակը քո բանակն է: Նա յեղել
ե քո հարազատ ընտանիքը: Նա քեզ դաստիա-
րակել է, կրթել և սովորեցրել:

Կարմիր Բանակում դու ձեռք բերեցիր գրա-
գիտութուն, սովորեցիր գիրք կարդալ և լուսա-
վորել քո միտքը:

Հիշի՛ր, վոր հին բանակում դրանք քեզ տը-
վող չկար:

Կարմիր Բանակը քեզ համար հարազատ հոր
ու մոր դեր է կատարել և նրա տարած հոգսերը
քո վրա դու յերբեք չպիտի մոռացության տաս:

Նրա շնորհիվ դու ծանոթացար քաղաքա-
կան խնդիրների և անցուդարձի հետ, հասկացար
դասակարգային կռվի նշանակութունը, հասկա-
ցար, վոր Հոկտեմբերյան Հեղափոխութունը
հաղթանակեց կոմունիստական կուսակցության

դեկտեմբերյան, վոր այդ Հոկտեմբերյան Հե-
ղափոխութունը քեզ ազատեց խմբապետների և
վաշխառուների ճանկերից: Հասկացար, վոր դար-
ձյալ այդ Հոկտ. հեղափոխութունը իշխանու-
թյունը վերցրեց ու տվեց աշխատավորութանը
և ստեղծեց կ. Բանակ, վորտեղ դու ձեռք բերե-
ցիր շատ գիտելիքներ: Դու նույնպես հասկացար,
թե ի՞նչու պետք է ծառայես կ. Բանակում, ին-
չու և ում դեմ հրացան բռնել պետք է գիտե-
նաս: Դու ծանոթացար կոմունիստական կու-
սակցության ծրագրի հետ, իմացար, թե ինչ
բան է կոմիստերնը և շատ ու շատ բաներ...

Դու կ. Բանակի ղինվոր ես և միշտ պիտի
պատրաստ լինես պաշտպանելու քո իշխանու-
թյունը:

Այժմս դու ուղարկվում ես աշխատանքի
Փրոնտ, բայց կ. Բանակը և կարմիր հրացանը
չպետք է մոռանաս:

Միշտ հաղթող ես յեղել յե՛վ հաղթող ե՛ր
վնացիտ:

ՈԳՆԻՐ ԳՅՈՒՂՆՈՐՅՐԳԻՆ

Հավ իմացիր, վոր յեթե եսօր դու շատ թե
քիչ բան ես սովորել, գրել կարդալ գիտես՝ Խոր.
Իշխանության շնորհիվ ե: Չեր գյուղացիները
նախկին իշխանություններից այդ բանը չեն բա-
տացել: Գյուղ գնալիս դու ամենայնուհանդերձ

գործիչը պիտի լինիս:

Հետեվիւր գյուղխորհրդի աշխատանքներին, նախիր, վոր աշխատեղ չմտնեն կուլակները, վոր աշխատավորների շահերը չվտանահարվեն և վոր Խոր. իշխանության անունը չվարկաբեկվի:

Իսկ, վորպես հասկացող ընկեր, պիտի հետեվես այդ բոլորին և յեթե նկատես մի անարգարացի գործ, պարտավոր ես հայտնել ուր հարկըն ե:

Իսկ պետք ե հետևես նույնպես, վոր զեղծումներ չլինեն և հասարակական գուլքը անտեղի չվատնվի:

Իսկ վորպես յերիտասարդ գործիչ մեծ աջակցութիւն ես ցույց տալու գյուղխորհրդին:

ՀԱՆԻՐ ԳՅՈՒՂԸ ՄԹՈՒԹՅՈՒՆԻՑ

Մեր գյուղացիները մթության մեջ են: Հին կառավարութիւնները նրանց խավարի մեջ են պահել, վորպեսզի լավ շահագործեն:

Այժմ Խ. իշխ. նրանց համար լուսավորության ճամբա յե բաց արել:

Իսկ պետք ե աշխատես, վոր այդ լույսը ներս մտնի և գյուղը: Դրա համար աջակցիւր գյուղում հիմնելու գրադարան, ընթերցարան:

Պետք ե կազմակերպես լրագրերի բարձր ընթերցումներ, ներկայացումներ, զեկուցումներ և այլն:

Դպրոցը նույնպես չպետք ե դուրս մնա ջոռադրութիւնից:

Մի խոսքով, ջո պարտքն ե հասկացնել գյուղացիներին, վոր այդ բոլորը Խ. իշխ. արել ե աշխատավորության համար, վոր ամեն մի աշխատավորի հարկավոր ե լուսավորութիւն, վորպեսզի նա լավ կարողանա կառավարել յերկիրը և մշակել հողը:

ՈՒԺ ՏՈՒՐ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆԸ

Ես ասպարիզում դու ամենից շատ և ամենից մեծ աշխատանք պիտի կատարես:

Քեզ լավ հայտնի յե, վոր մեր գյուղացիները մինչև այժմ բահից ու վեակուց հեռու չեն գնում: Գյուղատնտեսական աշխատանքները մինչ այժմ տարվել են շատ հասարակ գործիքներով, հողը մշակվում ե հին ձեւերով: Դրանից ե, վոր յեկամուտը լինում ե շատ չնչին: Պատահում ե, վոր բերքը ցանածից քիչ ե լինում:

Յեկար գյուղն—անմիջապես հետաքրքրվիր այդ աշխատանքներով և տուր ջո խորհուրդները: Հասկացրու ձեր գյուղացիներին, վոր եդ հին ձևը պետք ե թողնել, հողագործական նոր, կատարելագործված մեքենա ձեռք բերել: Առաջինը դրան դու պետք ե որինակ դառնաս:

Ասա, վոր Խ. իշխանութիւնը շատ ե հետաքրքրվում գյուղատնտեսութեամբ և վարկ

ե բաց թողնում սերմ, գործիքներ, աշխատող անասուններ ձեռք բերելու համար:

Մեր ուժերով պէ՛տք է գյուղատնտեսութիւնը նոր հիմքերի վրա դնենք:

ՈՒՅԲ ԴԱՐՁՐՈՒ ԿՈՊԵՐԱՏԻՎԻՆ

Գյուղ վոր հասնես թե չե՛՛ անմիջապես հետաքրքրվիր, տես ձեր գյուղում կոպերատիվ կա՞ թե վոչ: Յեթե չկա՛ հասկացրու գյուղացիներին կոպերատիվի նշանակութիւնը, թե ինչ ոգուտներ է տալիս կոպերատիվը գյուղին: Առա, վոր նա աղատում է միամիտ գյուղացուն չարչիները ձանկերից և այլն:

Բո այդ գործի ժամանակ հիշիր միշտ ընկեր Լենինի ասածը, վոր կոմունիզմին հեշտ կերպով կարող եք հասնել կոպերատիվի միջոցով ես:

Մեր գյուղերում դաշնակցականների ժամանակից վաս կարծիք է ստեղծվել կոպերատիվի մասին: Թալանչի դաշնակները միշտ կողոպտելիս, կոպերատիվի փողերը ուտելիս են լեղել: Դրանից է, վոր մեր գյուղացին վատ կարծիքի յե դեպի կոպերատիվը: Դու պետք է հասկացնես գյուղացուն ամեն բան, փարատես նրա այդ կասկածը:

Չմոռանաս ասել աղբատ գյուղացիներին, վոր արտելներ, միութիւն կազմեն: Դրանց և

առհասարակ չքավոր գյուղացիներին ոգնութիւն կհասնի մեր Գյուղատնտեսական բանկը: Նա մի բանի տարով թե փող է թե անասուն կտա:

ԿՈՎԻՐ ՆԱԽԱՊԱՅԱՐՈՒՄՆԵՐԻ ԴԵՄ

Դիտես, վոր մեր գյուղացիութեան հետամնացութեան պատճառներից մեկն էլ են է, վոր նա վարակված է նախապաշարումներով, մեծ նշանակութիւն է տալիս տերտերների խոսքին, իսկ եդ տերտերները խո լավ գիտես—ամեն ինչ կանեն, միայն թե մարդկանց խաբեն և փող վաստակեն:

Տանցիք կամ անասունները հիվանդանում են—գեղի մարդիկ ձեռքները յերկինք են բարձրացնում, աստծուն աղաչում: Յերաշտ է լինում, արտերը չորանում—մատաղ են անում, տերտերներին ուտացնում:

Դու նրանց հասկացրու, վոր եդ բոլորը ըստեղծված են գեղացի և բանվոր մարդկանց հիմարացնելու համար:

Վոչ մի աստված, վոչ մի սուրբ և վոչ մի գերբնական ուժ չկա: Եդ բոլորը մի փարդա յե, վորի հետևում թագնված մեզ են կեղերում տգրուկ հոգեվորականները, կուլակներն ու առհասարակ բոլոր տեսակի հարուստ ու ունեվոր դասակարգերը:

Հասկացրու, վոր բնութեան բոլոր աղետներ

րի և չարիքների դեմ, որինակ՝ ժանտախտի, յե-
րաշտի, մարդիկ կովում են զիտության շնոր-
հիվ:

Ինչքան ել ուզում ես աղոթի, յեթե հիվան-
դիդ սառը տեղ պառկացնես, կանաչ մրգեղեն
ուտացնես, սառը ջուր խմացնես և առհասարակ
վատ խնամք տանես—միևնույն է, նա կմեռնի:

Ինչքան ել ուզում ես յեկեղեցի գնա, ծնկնե-
րի վրա ընկիր, գլուխդ թակիր և տերտերներին
մատաղ ուտացրու,—յեթե առուններ չես անց-
կացնի և կանախներ չես փորի՝ յերաշտը արտդ
կչորացնի ու կվառի:

Ինչ վոր գա—մեր ձեռքից կգա:

Լավ աշխատենք՝ լավ հետևանք կստանանք,
վատ աշխատենք—վատ:

ՎԵՐԱՇԻՆԻՐ ՅԵՐԿԻՐԸ

Դաշնակուերի վարած կործանարար կռիվնե-
րի պատճառով շատ գյուղեր ավերված են, տներ
փուլ յեկած, կամուրջներ ու ճանապարհները
քանդված:

Գյուղ հասնես թե չե՝ աջակցիր գյուղիտը-
հուրդին կուեկտիվ աշխատանքներով վերաշինե-
լու գյուղերը, վերականգնելու կամուրջները,
անցկացնելու նոր ուղիներ, կանախներ, առու-
ներ...

Մի խոսքով՝ շինարարական աշխատանք:

Վերաշինիր, վերաշինիր, վերաշինիր:

ՈՎՔԵՐ ԵՆ ԿՈՄՈՒՆԻՍՏՆԵՐԸ

Բանակում դու շատ շփվեցիր կոմունիս-
տական կուսակցության հետ և լավ ճանաչեցիր
նրան:

Ծանոթացար նրա ծրագրի հետ, հասկացար՞
վոր նա պաշտպանում է բանվորի և աշխատա-
վորների շահերը, կազմակերպում է պրոլետա-
րիատին, Խորհրդային իշխանութունը և կար-
միք բանակը:

Փոքր ազգերին նա բերում է ինքնորոշում:

Գիտություն է տարածում ժողովրդների
մեջ, վերացնելով նրանց մտքերում թագավորող
նախապաշարումներն ու կրոնական խավարը:

Նա հակառակ է իմպերիալիստական պա-
տերազմներին և պայքար է մղում նրանց դեմ:

Կոմ. կուսակցությունը յեղել է աշխատա-
վորության շահելի հարազատ պաշտպանը, նրա
գաղափարները քանի գնում ավելի տարածվում
և ժողովրդականանում են, նա իր շուրջը որըս-
տորե ավելի շատ բանվորական մասսաներ է հա-
մախմբում և նրա ղեկավարությամբ է, վոր
պրոլետարիատը կարող է իր վերջնական հաղ-
թանակին հասնել:

ՏԱՐԱԾԻՐ ԼԵՆԻՆԻ ԳԱՂԱՓԱՐՆԵՐԸ

Մեր գյուղացին Լենինին ճանաչում է, գի-

տե, վոր նա դեկավարեց հողագուրկների և բան-
վորների հեղափոխական կռիւլը և հնարավորու-
թյուն տվաւ հող ստանալ ու ոգնեց մեր աշխա-
տավորութեանը ազատվելու դաշնակցական-մա-
ուզերիստների լծի տակից: Պատմիր, վոր Լե-
նինը այդ նույնը ցանկանում էր աշխարհիս բո-
լոր յերկրների գուղացիներին ու բանվորներին,
վոր նա համաշխարհային հեղափոխութեան ա-
ռաջնորդն էր:

Լենինը մի բան չէր սիրում. դա անգրա-
գիտութեանն է: Պատմիր գյուղացիներին, վոր
նա զնալով մի ավանդ է թողել մեզ—վորջան
կարելի յե շուտ վերացնել անգրագիտութեանը:
Դու յեվս աշխատիր այդ գործում: Տարածիր
գյուղում Լենինի են ավանդները, վոր սովորել
ես Կ. Բանակում:

ԳՅՈՒՂՈՒՄ ԱՋԱԿՑԻՐ ԿԱՆԱՆՅ ՅԵՎ ՅԵՐԻՏՎ- ՍԱՐԴՆԵՐԻՆ

Գյուղում կա յերկտասարդական միու-
թյուն: Դրանք մեր գյուղի ապագա հույսերն
են:

Նրանք սովորում են, աշխատում են Խոր-
հրդային իշխանութեան համար: Դու ել գրվիր
նրանց մեջ: Ոգնիր, վոր նրանք լավ տանեն ի-
րենց հեղափոխական գործը: Չմոռանաս և կա-

նանց միութեանը: Մեր գեղի կինը իր կյան-
քում որ ու արե քիչ է տեսել: Խավարը պա-
տել է նրան: Դու նրան հանիր եդ դրութեու-
նից, հասկացրու, ոգնիր նրան, վոր խավարից
ազատվի:

ՈԳՆԻՐ ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿԻՆ

Գիտես, վոր մեր գորքը փոքր առ փոքր
միլիցիոն ձևերին է անցնում: Շուտով կազմ-
կերպելու յենք գավառներում յերկրային զորա-
մասեր:

Մեր գյուղերում դեռ քիչ բան գիտեն եդ
մասին: Հասկացրու, վոր Խարեկան մի 2 ամիս
ամեն մի հասակավոր 23 տարեկանից բարձր՝
զենք պիտի բանեցնի, վոր կատարելագործվի և
չմոռանա զինվորական գործը:

Ասոք, վոր դու աշխատանքից չես զրկվի,
վոր յերկրային զորամասերում լինելու յես այն
ժամանակ, յերբ գաշտային աշխատանքից ա-
զատ ես:

Ասա, վոր այնտեղ ամեն բան կսովորես,
ինչպես դու յես սովորել, լուսավորվել:

Յերբ նրանք զենքին լավ վարժվեն, լավ
սովորեն են «կրակային վաշտը», վորը դու զի-
տես, այն ժամանակ խաղաղութեան ու հաղ-
թանակի կողմից մենք միշտ ապահովված կլի-
նենք:

ՊԱՏՄԻՐ Կ. ԲԱՆԱԿԻՑ

Այս բոլորը և ելի շատ շատ բաներ, վորոնք դու ձեռք ես բերել քո հարազատ Կարմիր Բանակում, հաղորդիք քո գյուղացիներին:

Մի ծուլանար, նրանց հարցերին պատասխանիր, նստիր և մեկ-մեկ պատմիր. նրանք կարոտ են գիտության:

Պատմիր ակումբից, թատրոնից, խմբակներից, ընթերցարաններից, պրագմատիկներից և շատ շատ բաներից:

Պատմիր ձեր զինկոմիտեի, քաղղեկների, նրանց ասածների և պատմածների մասին:

Մեր գյուղացիները դեռ լավ չեն ճանաչում Կ. Բանակը: Ասա, վոր նրանք ունեն հզոր և ստեղծագործող բանակ:

ԿԱՊ ՊԱՅԻՐ ԳՈ ԶՈՐԱՄԱՍԻ ՅԵՎ

«ԿԱՐՄԻՐ ԶԻՆՎՈՐ»-Ի ՅԵՑ

Տուն վոր գնաս, մեզ չմոռանաս:

Միշտ, շուտ-շուտ նամակ կգրես: Կգրես բոլոր ընկերներինդ, զինկոմիտեի, քաղղեկիդ և մենագլխավորը, չմոռանաս գրել քո սիրելի գազեթ «Կարմիր Զինվոր»-ին:

Գրիր գյուղի կյանքից, անց ու դարձից, աշխատանքներից, կուսակցության, կոմսոմոլի և կինբաժնի կյանքից, տավարի, վոչխարի, ձիու, արտի, գութանի, դպրոցի... ել վճրն ասեմ, ամենի, ամենի մասին:

ԻՆՏԵՐՆԱՅԻՈՆԱԼ

Յելիր՝ ում կյանքը անիծվել է,

Ով ճորտ է, մերկ ու անտուն.

Արդեն վառվում են մեր սրտերը,

Արդեն կովի յենք մենք ձգտում:

Սա յե մեր վերջին կռիվը

ՅեՎ պայքարը մեր հին,

Իստերնացիոնալը

Աշխարհը կբերվի:

(Կրկնել)

Այս հին աշխարհը կքանդենք մենք

Մինչև հիմքերը և հետո

Մեր նոր աշխարհը կշինենք

Մենք, ուր վոչ ստրուկ կա, վոչ դժգոհ:

Սա յե մեր վերջին կռիվը... (Կրկնել)

Վոչ վոր չի տա մեզ ազատութուն,

Վոչ խենթ, հերոսը, վոչ աբքան.

Մենք պետք է մեր ազատութունը

Խլենք մեր ձեռքով սեփական:

Սա յե մեր վերջին կռիվը... (Կրկնել)

ՄԴԵՐԹ

Դու զո՞ն ցնացիր
 Կատաղի պայքարում
 Ընդդեմ բռնակալի
 Արյունոտ աշխարհում:

Անվախ նստեցիր
 Դու ցարի բանտում,
 Տարար բռնութունն
 Ու տանջանք աքտորում:

Սարուկ կարգերին
 Պատերազմ հայտնեցիր,
 Բանվոր գյուղացուն
 Մեծ խորհուրդ տվիր:

Արժիվ կոմունար,
 Դու Վլադիմիր Իլիչ,
 Ընկեր ղեկավար
 Դու մեր մեծ ուսուցիչ:

Հյուսիս և հարավ
 Արևելք, արևմուտք,
 Տեսար բարձունքները
 Հզոր Միության:

Յեվ մենք կընթանանք
 Գո գծած ուղիով
 Անվախ, անյերկյուղ,
 Անսասան, համարձակ:

Մեռար դու. բայց քո
 Գաղափարն անմահ
 Ապրում է մեր մեջ
 Ու կապրի հավիտյան:

ԴԵ, ԸՆԿԵՐՆԵՐ, ԱՌԱՋ՝ Ի ՄԻ

Դե, ընկերներ, առաջ՝ ի մի,
 Մենք կամրանանք զոռ մարտում.
 Ազատության ուղին հիմի
 Մեր կրճքովը ենք մենք հարթում:

Մենք վորդիներն ենք հարազատ՝
 Աշխատանքի հաղթական.
 «Յեղբայրութուն և կյանք ազատ» —
 Մեր պահանջն է մարտական:

Շատ ենք տանջվել սոված, անձայն,
 Բիրտ կապանքը մեզ ճնշեց.
 Սև, գառն որերն արդեն անցան,
 Հատուցման ժամը հնչեց:

Փամը հասավ, գործի՛ դուրս գանք՝
Կուռ շարքերով և արի.

Մեզ ամօթ ե՛ թե վոր սոսկանք
Ուժիցն սսածու կամ ցարի:

Նրանց գահերը մենք ենք շինել,
Մեր մեջքերը կուացան...
Այժմ պետք ե մեզ պատրաստ լինել,
Լիք ու պատրաստ հրացան:

Ձուլված իրար ինչպես մի մարդ,
Վառ հավատքով բեռնավոր,
Վես, համարձակ յի՛նենք ի մարտ՝
Ժանտ լծի դեմ բռնավոր:

Հին աշխարհը թող կործանվի
Մեր հարվածից կուռ, վորոշ.
Վողջ յերկրի վրա թող ծածանվի
Աշխատանքի ալ դրոշ:

Թարգմ. Ա. Վշտումի



Յ Ե Ր Գ ԱԶՍԵ ՀԱՅԱՍՏԱՆ

Ով չի տեսել «ազատ» յերկիր,
Թող գա Հայաստան.

Մաուզերիստին ազատ մեյդան,
Իսկ մեզ՝ կախադան:

Խափսովը աշխարհ չափում,
Մեր հողն ե ծախում.

Միամիտների աչքը կապում,
Միթո՞մ ազատում:

Ազատության ձեն ե գալիս,
Սովետի հողից.

Ընկեր Լենին ձեն ե տալիս,
Ռսի լեն չուլից:

—Վոտքի յիլեք բանվոր, գեղան,
Քշեք դաշնակին,
Ու ձեռք տվեք յեղբայրական,
Կարմիր Բանակին:

Հէյ, ձեն տվին Ղազախ, Գյումրի,
Ըսկեր Լենինին.

Քարը բարին չենք թողնելու,
Դահիճ դաշնակին:

Մալիս ամսին կովի յելանք,
Դաշնակը կատողեց.
Հայաստանում թալան գցեց,
Կարծում եր հաղթեց:

Մենք կնքվեցինք կարմիր զինվոր,
Ազիզ բաշխիկ.
Ե՛յ սարսափիր, կարմիր աստղից,
Դաշնակ-Փալշիկի:

Իշխանություն սավեաներին,
Հացը դադողին.
Ես սուրբ խոսքը մեր սրտերում,
Դիփինք դաշնակին:

Գնաս բարով, չգաս տարով,
Պարոն խափսով.
Ես յերկիրը մերն ե հիմա,
Մերն ել կմա:

Խաղաղություն մեր դաշտերին
Ո անշունչ քարին.
Աշխատանք ու ազատություն,
Բանվոր-բաշխարին:



ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿԻՆ

Կարմիր Բանակ,
Կարմիր Բանակ,
Նոր աշխարհի
հիմնադիր,
Թուր ու դանակ,
հուր ու կրակ,
դու հարուստին
դավադիր:
Դու հուրն անցար,
դու սուրն անցար,
կյանքիդ գնով
ըստեղծեցիր
նոր աշխարհ:
Քո մեծ գործը
անմահ գործը
չի մոռանա
պատմությունը
դարեգար:
Ամիսների
Հոկտեմբերդ
կպաշտրվի
հավիտյան.
Ընկան լորդեր,

տաքուկ գորտեր,
գահ ու գայտոն
բանության:
Յեկան ճորտեր—
խեղճ ու անտեր
իրենց հողին,
իրենց ջրին
սիրեցին:
Քուն մանելիս
ու դարթնելիս,
Կարմիր Բանակ,
քո անունը
յերգեցին:
Մեզնից վերև
կարմիր արև:
Մեր թիկունքում
մեն-մենակ
Իրավունքի
տեր ու պաշտպան
դու յես, Կարմիր
կուռ բանակ:
Խոսքդ հատու,
կամքդ ուժեղ.
դու գծել ես

բո ուղին:
Գյուղ ու բաղաք
աշխատանքով
ու քրտինքով
պինդ կապել ես
մայր հողին:
Եսոր, եսոր
քեզ գովելու
ներկայացավ
լավ առիթ:
Դու ջանել ես.

նոր լրացավ
բո ծնընդյան
վեց տարիդ:
Դու մեծացիր
ու բոյ քաշիր,
կարմիր արև,
կուռ Բանակ:
Դու չար սարդին.
հարուստ մարդին
հուր ու կրակ,
թուր-դանակ:
Խնկո Ապեր

ՄԹԱԿ ՀԱՄԲՈՆ ՎԵՐԿԱՅԱՎ
Կ Ա Մ
«ԱՆԳՐԱԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ
ՎԵՐԱՅԱՎ»

Ըստ. Կուսուդիսիոս

Համատարած գյուղ ու շեն
ելի են են, ելի են:
Ուր ել կուգես ման արի՝
Կհանդիպես խամարի:
Զարմանք բան չի. հլատես,
Վոնց ե ապրում պարզերես,
Մի ազգ տգետ, անգրագետ,
Ես ել ազատության հետ:
Ինչպես տեսան պայծառ որ

Յեվ գյուղացի, և բանվոր:
Մի ժողովուրդ, մի հսկա
Ինչպես ապրեց,
Ինքնագլուխ, անտարբեր
Մինչև, մինչև Հոկտեմբեր:
Վոնց լերեկվա ճորտ տղան
Իրար տվեց Յեվրոպան.
Իշխանության տեր ու պետ
Ես ել ճորտն անգրագետ:
Այ քեզ դրան ապացույց
Հեքյաթի պես մի զրույց:

I

ԲԱԽՏԸ ՄԵԱԿԻ—ՁԵՌՔԻՆ Ե ԿՈՒԼԱԿԻ

Ե, ինչ բան կա ամթի.
Գյուղում՝ անունն Անոթի՝
Ապրում եր մի պատանի,
Ես ել Համբո անվանի:
Անհեր, անմեր, անուսում
Յեվ շարունակ, միշտ դրսում,
Տարին բոլոր շորից գուրկ,
Հագին ինչ եղ՝ մի ծակ քուրք,
Փորը սոված, անփեշակ,
Հարուստներին միշտ մշակ:
Հարս ու աղջիկ տեղական
Ամաչկոտներ գեղական
Փախչում եյին մշակից,
Գրող չափում քամակից.

Մերկ եր, մերկ եր մարմինը.
 Չմոռանանք ես մինը.
 Շունն ել վրան չհաջեց.
 Եդտեղ Համբոն ամաչեց,
 Ասավ. «Եսպես չի լինի,
 Եսպես կյանքը չի տարվի.
 Հարուստ մարդ է են Դաշտոն,
 Գնամ խնդրեմ մի պաշտոն,
 Մի գործ իրեն խանութում.
 Անտեր մնաս մերկութուն:
 — Աղա Դաշտո, մի խնդիր... —
 Ասավ Համբոն, — գործի դիր
 Ինձ քո առատ խանութում,
 Ելի քեզնից փրկութուն:
 — Ընդունեցի, այո, քեզ,
 Վոր խանութում ծառայես,
 Վոր խանութիս լավ նայես,
 Քեզ ել, Համբո, լավ պահես:
 Եսպես ասավ են Դաշտոն,
 Տկլոր Համբոն նոր պաշտոն:
 Ահա անցավ մի շաբաթ —
 Աշխատում է անընդհատ,
 Աշխատում է խոնարհ, հեզ՝
 Գութնին լծած յեզան պես,
 Ելի կուշտ չի իր փորը,
 Ելի նոր չի իր շորը,

Ելի դեղին այտերով,
 Ելի լաց-թաց աչքերով,
 Դեմքին տեղ-տեղ ուռուցքներ,
 Շատ է ուտում բուռնցքներ:
 Մի որ Դաշտոն խիստ խմած,
 Քանի ողու շիշ քամած,
 Կանչեց իր մոտ Համբոյին,
 Անգրագետ դմբոյին:
 Հաշվի չոտքը, Համբո, բեր,
 Հաշիվները վեր առ, վեր:
 Համբոն չոտքը խտխտը,
 Կանգնած՝ կախել է քիթը.
 Դաշտոն վոտքով հատակին,
 Գոռգոռալով բատրակին, —
 — Դեհ, դու նստիր ու գրիր:
 Խղճուկ Համբոն. «տեր, ներիր»:
 Խաղեյին ջան... եզպես բան...
 — Ձեռ յտում, հա՛, հրաման.
 Կուլ ես տվել բահի կոթ,
 Ինչ ես ցցվել, այ լակոտ:
 — Վոչ թե, աղա, յես փետ եմ
 Այլ թե գրել չգիտեմ:
 — Ձեռ խմանում դու գրե՛լ...
 Ել ինչ՞ալ յես դու կանգնել,
 Ել ինչ՞ալ յե ձիգն ու կուշ,

Դե գուրս կորի, վոչ ու փուչ.
 Թե չե ես ե, կջարդեմ,
 Դու հո գիտես ինչ մարդ եմ:
 Համբոն նեղը լծվելով,
 Դուրս վանդվեց ծեծվելով:
 Գնաց Համբոն լաց ու թաց
 Ու քթի տակ մրթմրթաց.
 Թե լինելի գրագետ,
 Լավ կգայի քու հախեղ:
 Ե, ինչ անեմ, ուր մնամ,
 Ում հարցնեմ, ուր դնամ:

**ԳՐԵԼ ԿԱՐԴԱԼ ՍՈՎՈՐԻ—ՍԱՎԵՏ-
 ՆԵՐԻՆ ԾԱՌԱՅԻ**

Գյուղն Անոթի յեկավ լուր,
 Գյուղ ու քաղաք հուր ու սուր,
 Բանվորները հաղթել են,
 Իշխանութունը զավթել են,
 Հա գործում ե սուր, սվին:
 Բատրակ Համբոն եղ թվին
 Ինքն իր մտքին համաձայն
 Ճանկեց մի լավ հրացան:
 Ինչպես բատրակ մի զինվոր,
 Քաղցի, ցրտի միշտ սովոր,
 Գյուղ ու ավան հա անցավ,
 Իր պեսներին միացավ

Ու գնացին բազմաթիվ
 Կուպեճների դեմ կռիվ,
 Տեսնենք ով ում կքաղի,
 Կռիվ, կռիվ կատաղի:
 Ել խոսելու ի՞նչ կա հարկ.
 Համբոնների համազարկ,
 Գնդակների տափ-տարափ,
 Վոր գցեցին մահ, սարսափ,
 Սվինների հարվածով
 Արջին հատուկ գոռոցով
 Թողեց, փախավ թշնամին:
 Եղպես մաքրեցին մին-մին
 Ճորտ գյուղացու հողերը,
 Կալվածքները, տեղերը,
 Հաստատեցին Միություն,
 Խորհրդային պետություն,
 Այ, ինչ արին Համբոններ,
 Այ, ինչ արին դմբոններ.
 Յերբ վերջացավ կռիվ—բան
 Մեր Համբոն դեռ վաղ գարնան
 Դարձավ իր գյուղն Անոթի
 Ել բան չկար ամոթի,
 Վոտին կոշիկ, վրեն նոր,
 Արվին, կարգին ամեն օր,
 Գիտեր ումն ե ծառայում
 Յեվ ում համար ինքն ապրում:

Կարմիր աստղը ճակատին
 Գործ եր փնտրում իր հերթին,
 Վոր ծառայի գյուղացուն,
 Դուռ ու դրկից դրացուն,
 Ու գործկոմ ե նա մտնում,
 Ծանոթներն են բարևում.
 —Մեր հերոսը բարով գա,
 Ձեռքն ե սեղմում նախագահ.
 Դու կովեցիք բաշի պես,
 Վոր հինգ նազրատ տվին քեզ.
 Աչքի ընկար բանակում,
 Քեզ բոլորս ենք մենք հարգում»:
 —«Անցավ յերկրի մեծ սովը—
 Յես յեկել եմ գործկոմը,
 Վոր մի գործ տաք ինձ համար»:
 —Բայց ինչ գործ կա քեզ հարմար,
 Ապա նստիր ու գրիր,
 Մեզ պետք ե մի գրագիր:
 Եղտեղ Համբոն այլալվեց,
 Ձեռքով ծոճրակը քորեց.
 Ասավ. «Ընկեր, ինձ ներիր.
 Հանկարծակի ինձ բերիր,
 —Ի՛նչ, դու գրել չըգիտես.
 Վոր եղպես ե, շատ յետ ես.
 Իմ խորհուրդը, ընկեր, քեզ,
 Ենքան լավ, վորքան թեզ,

Ել մի կանգնի, մտորի,
 Առաջ գնա, սովորի.
 Համբոն ընկավ մտքի տակ,
 Դրեց իրեն նպատակ՝
 Գրել կարգալ սովորել,
 Նոր գալ գյուղին ծառայել:
 Ձե, որն յեկավ ու հասավ,
 Համբոն մտքի մեջն ասավ.
 —«Յես հաղթեցի արքային,
 Նրան տվի սև մահին.
 Հիմա ինչ ե այբուբեն,
 Վոր գա կտրի իմ ճամբեն»:
 Համբոն գտավ մի լավ յելք,
 Գնաց քաղաք, բերի խելք:

III

ԳՐՈՂ-ՎԱՐԴԱՅՈՂ—ԲԱՆ ՀԱՍԿԱ-
ՑՈՂ

Ժամանակ ե՛ թռչում ե,
 Ի՞ր անիվը շրջում ե:
 Մեր Համբոյից վոչ մի լուր,
 Են պատանին ուր ե, ուր.
 Խոսքը խոսք եր, վոչ հանաք,
 Գնաց մտավ նա բանակ,
 Բանակից ել դու դպրոց.
 Աշակերտ ե նա գրոց,

Մովորում ե այբուրեն,
 Վոր լալն բանա իր ճամբեն.
 Կուպեծներին հալածի,
 Կուլակներին ջուրն ածի:
 Կարդացել ե քանի գիրք,
 Առաջ չուներ վոչ մի ձիրք.
 Նա մտել ե նոր աշխարք,
 Նա մտել ե մարդու շարք.
 Ել չի ծեծվի Դաշտոյից,
 Չի վռնդվի պաշտոնից,
 Ել չի մտնի նա բատրակ,
 Ել չի ուտի նա ապտակ,
 Ել չի մնա շորից գուրկ,
 Ել չի հագնի պատռած քուրք.
 Հարս ու աղջիկ ամոթից
 Ել չեն փախչի իր մտտից,
 Գլուխ չի տա տերտերին,
 Ել գերի չի իր փորին:
 Ել առաջվա դմբոն չի,
 Ել բան չկա ամոթի.
 Դարձավ գյուղն Անոթի՝
 Ամբողջ գյուղը բերանբաց՝
 Մնացել եր զարմացած.
 Միթե սա մեր Համբոն ե,
 Են առաջվա դմբոն ե.
 ՉԵ վոր մերկ եր, անշապիկ,

Տարին բոլոր միշտ բորիկ.
 Հիմա կրթված, խելյոցի՝
 Յեկ ու պատճառն իմացի.
 Չարմանում ե ունեվոր—
 «Նոր ե ծնվել Համբոն, նոր»:
 Չարմանում ե և տերտեր,
 «Կարճ շապիկը խելքի տեր»:
 Մենակ բանի իմաստը
 Հավ հասկացավ Ալմաստը.—
 —Անուշ Համբո, ես ինչ բախտ,
 Սիրել եմ քեզ ամեն վախտ.
 Սիրաս եր ասում, վոր Համբոն
 Միշտ չի մնա են դմբոն:
 Միշտ ամեն որ պատանին
 Գործկումումն ե իր բանին:
 Մի կողմ դրած թուլություն,
 Մի կողմ դրած ծուլություն,
 Կարդում ե ու աշխատում
 Խրճիթ-ընթերցարանում:
 Փողոցներում բարձրաձայն՝
 Նախագահ ե միաձայն.
 Ուրախ, զվարթ, ժպտերես՝
 Դպրոցումը նրան տես.
 Անգրագետին ուսուցիչ,
 Գյուղի անգին բնակիչ:

Ամենն իրեն տեղումն ե,
 Քանի Համբոն գեղումն ե,
 Թեև կարիքն ե անվերջ,
 Բայց Համբոն ե գործի մեջ.
 Համբոն գեղում գին ունի,
 Արաստի պես կին ունի:
 Մեկը մեկին ջան--ջանիկ:
 Համբոն ուրախ յերջանիկ
 Աշխատում ե հոգատար
 Գյուղի համար անդադար:
 Հիմա վերջը լավ լի՛
 Յեկավ մեկը մայիսի.
 Յեկան յերեք--չորս գեղով
 Ու կաղմեցին գյուղփողով.
 Մարսափելի մի աղմուկ:
 Համբոն յեկավ, գոչեց «Դուք,
 Դու, գյուղփողով ինձ լի,
 Մեզ բողբոխ աչքալույս,
 Եսոր սոնն ե մայիսի,—
 Կանցնի խավար, կգա լույս.
 Թող գա, բերի մեզ ուսում,
 Ազատութիւն ցանկալի,
 Հենց լուսին ենք սպասում
 Եսքան դարեր ցավով լի:
 Թող չլինի այսուհետ
 Մեր գյուղերում անգրագեա.

Քնած միտքը թող զարթնի,
 Թող մեզ կրթի ու հարթի,
 Վոր մենք սիրով միանանք,
 Սիրենք քրտինք, աշխատանք:
 Ով սիրում ե գիտութիւն,
 Ով ատում ե ճորտութիւն,
 Ով դեռ հոգով չի մեռած
 Ու մտքովը խավարած՝
 Ընկերի հետ թև թևի՛
 Թող Համբոյին հետևի»:

ԽՆԿՈ Ա.ԱԿԵՐ



Խ. ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՍՈՑ. ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱ- ԴՐՈՒԹՅՈՒՆԸ

1920 թվի նոյեմբերի 29-ին Հայաստանի գյուղացիներն ու բանվորները դեն շարտեզին դաշնակիների ծանր լուծը և իշխանութիւնն առան իրենց ձեռքը:

Մեր իշխանութիւնը հանրապետութիւն է և կոչվում նրա համար, վոր կառավարվում է վոչ թե մի մարդու, այլ բոլոր աշխատավորների կողմից: Խորհրդային է կոչվում, վորովհետև թե տեղերում և թե կենտրոնում կառավարում են բանվորների, գյուղացիների և նրանց զավակ կարմիր բանակայինների կողմից ընտրված խորհուրդներով:

Վոչ աշխատավորները (բուրժուազիան) Խորհուրդները չեն ընդունում: Այսպիսի կարգը կոչվում է պրոլետարիատի դիկտատուրա:

Դիկտատուրան (այսինքն ուժեղ, հաստատուն իշխանութիւնը) հարկավոր է, վոր կարելի լինի ճնշել կեղեքիչ—բուրժուաներին, վորպեսզի հետո աշխատավորները կարողանան առանց արգելքի սոցիալիստական արդար հասարակարգ հաստատել:

Սոցիալիստական է մեր հանրապետութիւնը, վորովհետև հողը, մեծ գործարաններն ու ֆարրիկաները, բանկերը, յերկաթուղին ու ծովերը ազգայնացված է, այսինքն սոցիալիզացիայի յե յենթարկված և մեկ էլ են, վոր ձգտում է հասնել սոցիալիզմի—հավասարութիւն:

Մեզ մոտ հողը մասնավոր սեփականութիւն չէ, առ ու ծախսի առարկա չի կարող դառնալ, վորովհետև յիթե այդպես չլինի, էլի առաջիկա պես հողը կանցնի մի քանի հարուստների ձեռքը:

Ընտրելու և ընտրվելու, ուրեմն մեր յերկիրը կառավարելու իրավունք ունին միայն բանվորներն ու գյուղացիները. հարուստները, տերտերներն ու վարդապետները, առևտրականները ձայնագուրկ են, վորովհետև յիթե նրանք

կարողանան ընտրել և ընտրվել, կարող են ելի
իրանց ուզածն անել:

Այսպես կշարունակվի, մինչև վոր այլևս
ուրիշի աշխատանքով ապրողներ չլինեն:

Յերբ վոր այդ վերջացավ և ետ վոր աշ-
կխատի, նա ելուտի» խոսքերը բոլորովին կա-
տարվեցին և ել շահագործողներ և կրոնական-
ներ չեղան, այն ժամանակ բոլորն ել կարող են
ընտրել և ընտրվել:

Մեր պետական դրոշակը կարմիր կտորից
ե, վրեն գրած՝ Պրոչեսարևեր բոյոս յերկրևեվի,
միացևմ: Կարմիր ե նրա համար, վորովհետև
մենք մեր ազատությունը ձեռք ենք բերել
բանվորների ու չքավոր գյուղացիների արյունով:

Մեր պետական նշանն ե (գերբ) Մասիսը,
վրան նկարած մուրճն ու մանգաղը, չորս կող-
մը հասկերով պատած: Մուրճն ու մանգաղը եգ
բանվորն ու գյուղացին են, վոր միասին ձեռք-
ձեռքի տված հասնելու յեն կոմունիզմին:

Գյուղ: Գյուղում բարձր իշխանությունն ե
գյուղական խորհուրդը, վոր ընտրվում ե չքա-
վոր և միջակ գյուղացիների կողմից: Յուրա-
քանչյուր 100 ընտրող տալիս ե մի պատգամա-
վոր: Խորհուրդը իր միջից ընտրում ե նախա-
գահ և քարտուղար: Փոքր գյուղերում գործկոմ
չի ընտրվում, այլ խորհրդի նախագահը տա-

նում ե գործկոմի աշխատանք: Մեծ գյուղերում
խորհուրդը իր միջից ընտրում ե գործկոմ Յ
կամ 5 հոգուց, վորոնցից մեկը նախագահ ե,
մյուսը քարտուղար:

Խորհուրդը վճռում ե այն բոլոր հարցերը,
վորոնք ունեն ամբողջ գյուղի համար նշանա-
կություն, որինակ, ճանապարհ շինել: առու
անցկացնել, դպրոց հիմնել և այլն: Գործկոմն ու
նախագահը տանում են ամենորյա աշխատանք-
ները և կատարում խորհրդի բոլոր վորոշում-
ները:

Բոլորն ել ընտրվում են մի տարի ժամա-
նակով և կարող են ժամանակից շուտ փոխվել,
յեթե ընտրողների $\frac{2}{3}$ -ը կամ բարձր կանգնած
որգանը գտնում ե, վոր անհամապատասխան են
և այլն:

Գալվառախա: Գյուղից հետո գալիս ե գա-
վառի գործկոմը, վոր ընտրվում ե գավմասի
խորհրդների համագումարի կողմից: Գավմասի
խորհուրդների համագումարը ընտրվում ե գյու-
ղական խորհրդների կողմից՝ 500 հոգին տալիս
ե մի ներկայացուցիչ: Գործկոմը բաղկացած ե
5-7 անդամից:

Գալվառ.— Գավառի բարձրագույն մարմինն
ե գավառային խորհուրդների համագումարը,
վորը հավաքվում ե տարին մի անգամ և ըն-
տրվում ե գավմասերի հագումարների ներկա-
յացուցիչներից:

Գյուղի «1000» ընտրողը տալիս է մի ներկայացուցիչ, իսկ քաղաքինը՝ « » ընտրողը: Կարմիր բանակայինները մասնակցում են այն խորհրդի ընտրութեանը, վորտեղ իրենք են կանգնած:

Գավառային համագումարը լսում է հին գործկոմի և նրա բաժինների վարիչների զեկուցումները, յեթե կարևոր է համարում, մըշակում է գործկոմի մի տարվա անելիքների ծրագիրը: Հետո այդ բոլորը կատարելու համար ընտրում է գործկոմ 7-15 հոգուց բաղկացած: Համագումարը՝ ընտրում է նաև Համահայաստանյան Խորհրդների համագումարի պատգամավորներ (5.000 ընտրողից մի ներկայացուցիչ):

Գործկոմը իր անդամների մեջ կատարում է աշխատանքի բաժանում, ընտրում է նախագահ, փոխնախագահ և բաժինների վարիչներ:

Համահայաստանյան Խորհուրդների համագումարը հավաքվում է տարին մի անգամ: Ամենաբարձր իշխանությունը Հայաստանում նրան է պատկանում: Համագումարը ընտրում է կենտրոնական Գործադիր Կոմիտե 75 հոգուց բաղկացած: Խորհուրդների համագումարից հետո Հայաստանի բարձրագույն մարմինն է կենտրոնական Գործադիր Կոմիտեն: Կենտրոնական

Գործադիր Կոմիտեն միշտ չի կարող մնալ, վորովհետև 75 հոգու համար անագին ծախսեր կը լինեն, ուստի նա իր միջից ընտրում է նախագահություն 7 հոգուց բաղկացած:

Կենտրոնական Գործադիր Կոմիտեն (կարճ կենտգործկոմ—ՅԻԿ) ընտրում է նախագահ, փոխնախագահ և քարտուղար: Հայաստանի կենտգործկոմի նախագահն է ընկ. Սաքո Համբարձումյանը, փոխնախագահ՝ ընկ. Հայկ Աղատյան, և քարտուղարը ընկ. Հայրապետ Տատյանը:

Կենտգործկոմը ընթացիկ աշխատանքները տանելու համար կազմում է ժողովրդական կոմիսարներ, վորոնք ել կազմում են Ժողովրդական Կոմիսարների Խորհուրդը (Ժողկոմխորհը):

Ժողովրդական Կոմիսարների Խորհրդի նախագահն է ընկ. Սարգիս Սրապիոնյանը՝ Լուկաշինը, քարտուղարն է ընկ. Գաբիկ Պարզյան:

Ժողովրդական Կոմիսարների Խորհրդի անդամներն են կազմում Ժողովրդական Կոմիսարներն ու Անդրկ. Սոց. Ծեղ. Հանրապ. կոմիսարների լիազորները:

Հայաստանի Ս. Խ. Հանրապետության մեջ կան հետևյալ Ժողովրդական Կոմիսարները.—

1) Լուսավորության Ժողկոմն է ընկ. Ասքանազ Մուսվյան:

2) Առողջապահութեան ժողկոմն և ընկ. Սիմեոն Լազարյան:

3) Ներքին գործերի ժողկոմն և ընկ. Շափարշ Ամիրխանյան:

4) Հողժողկոմ՝ ընկեր Արամայիս Յերզընկյան:

5) Արգարադատութեան ժողկոմ՝ Լևոն Վարդապետյան:

Լիազորներ. —

1) Աշխատանքի — Խորեն Հովսեփյան,

2) Ֆինանսական — Պողոսյան,

3) Բանվորա-Գյուղացիական Տեսչութեան — Վահան Հովսեփյան:

Ժողովրդական Տնտեսութեան Խորհրդի նախագահն և ընկ. Հայկազ Բալյանը:

Հայաստանի բանվորներն ու գյուղացիները իրենց ազատութիւնը ձեռք են բերել յերկար տանջանքներից ու կռիւներից հետո: Նրանց այս բոլորի մեջ ղեկավարողն և յեղել Հայաստանի Կոմկուսակցութիւնն էր, վորը այժմ ել հանդիսանում և կառավարութեան միակ ղեկավարողը:

Գալառներում կուսգավկոմներն են լինում, իսկ կենտրոնում Կոմկուսի կենտրոնական կոմիտեն (Յեկա), վորը ռմեն կերպ սգնութեան և գալիս ու ղեկավարում Խորհրդային իշխանութեան աշխատանքները:

Մեր ներքին ու արտաքին թշնամիների դեմ կռուելու և աշխատավորների աշխատանքը պահելու համար Խորհրդային իշխանութեանն ունի 3 հիմնարկութիւն:

1) Արտակարգ Հանձնաժողովը (Չեկա), վորի նախագահն և ընկ. Շափարշ Ամիրխանյանը և նրա տեղակալը ընկ. Մելիք-Հովսեփյանը:

2) Հանրապետութեան Ռազմական Կոմիսարիատը, — ռազմական կոմիսարն և ընկ. Սարատիկյան:

Բացի Ռազմական Կոմիսարիատից, մենք ունենք նաև Հայկական հրացանաձիգ զիվիզիան, վորի ժամանակավոր հրամանատարն և ընկ. Արարատյանը, իսկ ռազմական կոմիսարը՝ ընկեր Հայկ Հովսեփյանը, վորը միաժամանակ զիվիզիայի քաղաքային պետն է:

3) Միլիցիան — պաշտպանում և ներքին կարգ ու կանոնը:

ԱՆԴՐԿՈՎԱՍՅԱՆ Ս. Ֆ. Խ. ԿԱՆԲԱԳԵՏՈՒԹՅՈՒՆ

Անդրկովկասյան Սոց. Ծեղ. Խորհրդային Հանրապետութիւնը ընդգրկում և յերեք ինքնուրույն հանրապետութիւն — Վրաստանը, Հայաստանը և Ադրբեջանը: Նա ունի իր Խորհուրդ-

ների համագումարը, վորը կազմվում է հետևյալ չափով. քաղաքային խորհուրդներից 1 պատգամավոր 3000 ընտրողից և Խորհուրդների համագումարներից՝ 1 պատգամավոր 15.000 բնակչից: Ունի իր հենար. Գործ. կոմիտեն 150 անդամով և 50 փոխանդամով. ունի նաև իր Ժող. կոմ. Խորհուրդը:

Այդ յերեք հանրապետություններն ել, վորոնք կազմում են Անդրկ. Ս. Ֆ. Խ. Հ.-ը, ունին իրենց կենտր. գործ. կոմիտեները, համագումարները և Ժող. կոմ. խորհուրդները: Այդ հանրապետությունների Ժող. կոմ. խորհուրդները բաղկացած են հետևյալ կոմիսարիատներից. ներքին գործերի, արդարադատության, լուսավորության, հողագործության, առողջապահության և սոց. ապահովության: Մնացած կոմիսարիատներից խորհրդակցական ձայնով ներկայացուցիչներ են մտնում Ժողկոմիտեի Խորհուրդը: Հասկանալի յե, վոր առանձին հանրապետությունների բոլոր իշխանություններն ել լենթարկվում են Անդր. Ս. Ֆ. Խ. Հանրապետությունների կառավարության: Անդր. Ս. Ֆ. Խ. Հ. կազմող առանձին հանրապետությունները նույնպես իրենց մեջ ունին ինքնուրույն նահանգներ (բլատներ) և հանրապետություններ: Այսպես Վրաստանը իր մեջ ունի Աբխազիայի խոր. սոց.

ինքնավար հանրապետությունը (գլխավոր քաղաքը Սուխում), Աջարխստանի ինքնավար Խ. Ս. հանրապետությունը (գլխ. քաղաքը Բաթում), Հարավային Ոսեթիայի Խոր. Ս. հանր. (գլխ. քաղաքը Ցխինվալի): Ադրբեջանի մեջ մտնում են լեռնային Ղարաբաղի ինքնավար շրջանը (գլխ. քաղաքը Ստեփանակերտն է) և Նախիջևանի յերկերը (գլխ. քաղաքը Նախիջևան): Հայաստանը ավտոնոմ շրջաններ չունի:

ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՈՒ- ԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ

Խորհրդային սահմանադրությունն այն գլխավոր հիմնական որենքն է, վորով կառավարվում է Խորհրդ. Միությունը:

Չանազան ժողովուրդներ (ուսներ, սկրայինացիք, բելորուսներ, թուրքեր, հայեր, վրացիք), վորոնք առաջ ճնշվում եյին ցարական կառավարության կողմից, այժմ առանձին հանրապետություններ են կազմում և ինքնուրույն կառավարում իրենց գործերը: Սակայն կարևոր հարցերում, ինչպես օրինակ արտաքին պաշտպա-

նության, անտեսական և զրամական գործում, ոտար պետությունների հետ հարաբերություններ ստեղծելու դեպքում և այլն, այդ բոլոր հանրապետությունները միասին են գործում, ինչպես մի յերկիր: Այսպիսի կարգը կազմում է Հանրապետությունների Միությունը:

Բացի գավառակային, գավառային, նահանգական, շրջանային խորհուրդների համագումարից, առանձին հանրապետությունների խորհուրդների ներկայացուցիչներից հավաքվում է խորհուրդների համամիության համագումարը, վորը ամբողջ Միության բարձրագույն իշխանությունն է համարվում: Խորհուրդների համամիության Համագումարը հավաքվում է ամենատուշր տարին մի անգամ: Նա ընտրում է Խորհուրդների կենտրոնական Գործադիր Կոմիտե (կրճատված ասում են կենտգործկոմ): Այն ժամանակ, յերբ խորհուրդների համամիության համագումարներից մեկն արդեն ավարտել է իր աշխատանքը և նորը համագումար դեռ չի հավաքվել, կենտգործկոմն է յերկրի բարձրագույն իշխանությունը: Կենտգործկոմը վճռում է յերկրի ամենակարևոր հարցերը, որինակ՝ նա կարող է որենքներ հրատարակել, կռիվ հայտարարել և հաշտություն կնքել, ոտար յերկրների հետ հարաբերություններ ստեղծել, ընտրել ժողովրդական կոմիսարներ (ժողկոմներ) և այլն:

Ժողովրդական Կոմիսարները միասին կազմում են Ժողովրդական Կոմիսարների Խորհուրդ (Ժողկոմիտե): Նրան յեն թարկվում են բոլոր պետական հիմնարկությունները, վորոնք ժողովրդի զանազան կարիքներն են հոգում: Խորհրդային Միությունը հետևյալ ժողովրդական Կոմիսարներն ունի.—

- 1) Արտաքին Գործերի Ժողովրդական Կոմիսար (Արտգործժողկոմ):
- 2) Ներքին Գործերի Ժողովրդական Կոմիսար (Ներքգործժողկոմ):
- 3) Ռազմա-Մովային Ժողովրդական Կոմիսար (Ռազմժողկոմ):
- 4) Արդարագատության Ժողովրդական Կոմիսար (Արդժողկոմ):
- 5) Սշխատանքի Ժողովրդական Կոմիսար (Սշխժողկոմ):
- 6) Սոցիալական Ապահովության Ժողովրդական Կոմիսար (Սոցապժողկոմ):
- 7) Լուսավորության Ժողովրդական Կոմիսար (Լուսժողկոմ):
- 8) Փոստ Էնուզրի Ժողովրդական Կոմիսար (Փոստհեռժողկոմ):
- 9) Ֆինանսների (զրամական) Ժողովրդական Կոմիսար (Ֆինժողկոմ):
- 10) Ճանապարհների Ժողովրդական Կոմիսար:

11) Հողագործութեան Ժողովրդական Կոմիտեայր (Հողժողովոմ):

12) Արտաքին Առևտրի Ժողովրդական Կոմիտեայր (Արտառժողովոմ):

13) Առողջապահութեան Ժողովրդական Կոմիտեայր (Առժողովոմ):

14) Բանվորա-Գյուղացիական Տեսչութեան Ժողովրդական Կոմիտեայր և Ժողովրդական Տնտեսութեան Գերագույն Խորհուրդ:

Բացի Համամիութեան Համագումարից, Կենսագործկոմից և Ժողովուրդից ուրիշ վոչ մի մարմին իրավունք չունի ընդհանուր պետական նշանակութիւն ունեցող որեւէ բաներ հրատարակել:



Ս Խ Հ Մ

Խորհրդային յերկրում բնակվում են շատ ազգութիւններ, շատ ժողովուրդներ: Բայց զանազան ժողովրդների աշխատավորներն իրար դեմ թշնամութիւն չունեն: Մենք ժողովրդների յեղբայրական հաշտ միութիւն ենք ստեղծել, վորը կոչվում է Սոցիալիստական Խորհրդային Հանրապետութիւնների Միութիւն:

1922 թվին այս Միութեան Խորհուրդների առաջին համագումարում նրա կազմի մեջ մտան

հետեյալ հանրապետութիւնները.—

Ռուսաստանի Սոցիալիստական Ֆեդերատիվ Խորհրդային հանրապետութիւն, (Ռ. Ս. Խ. Ֆ. Հ.) վրի գլխավոր քաղաքն (մայրաքաղաքը) է Մոսկվան:

Ուկրայինայի Սոցիալիստական Խորհրդային հանրապետութիւն (Ու. Ս. Խ. Հ.), մայրաքաղաքը՝ Խարկովը:

Բելոռուսիայի Սոցիալիստական Խորհրդային Հանրապետութիւն (Բ. Ս. Խ. Հ.), գլխավոր քաղաքն է Մինսկը:

Անդրկովկասի Ֆեդերատիվ Սոցիալիստական Խորհրդային Հանրապետութիւն (Ա. Ֆ. Ս. Խ. Հ.), գլխավոր քաղաքն է Թիֆլիսը:

Մեր ամբողջ Միութեան մայրաքաղաքն է Մոսկվան, Խորհրդային Հանրապետութիւններից ամենահինն է Ռուսաստանի Սոցիալիստական Ֆեդերատիվ Խորհրդային Հանրապետութիւնը:

Նրա կազմի մեջ մտնում են շատ հանրապետութիւններ և ինքնավար շրջաններ.— Թուրքեստանի, Թաթարների, զորղզիների, բաշկիրների, բուրյատների, կարելների, յակուտների, մերձվոլգյան գերմանացիների կոմունան, չյուսիսային Կովկասի հանրապետութիւնները և ուրիշները:

Անդրկովկասյան Ֆեդերատիվ Սոցիալիստական Խորհրդային հանրապետութիւնը բաղկացած է յերեք հանրապետութիւններից.— Հայաստանի Սոցիալիստական Խորհրդային հանրապե-

տուլթյուն (Հ. Ս. Խ. Հ.), մայրաքաղաքն և Յե-
րևանը:

Վրաստանի Սոցիալիստական Խորհրդային
Հանրապետուլթյուն (Վ. Ս. Խ. Հ.), մայրաքաղաքն և
Թիֆլիսը

Ազրբեջանի Սոցիալիստական Խորհրդային
Հանրապետուլթյուն (Ա. Ս. Խ. Հ.), մայրաքաղաքն
և Բազուն:

Սմբողջ Միուլթյան Գործադիր մարմինը
Միուլթյան Ժողովրդական Կոմիսարների Խոր-
հուրդն և, վորն ընտրվում և Կենտրոնական
Գործադիր Կոմիտեյի կողմից:

Միուլթյան Կենտգործկոմի նախագահներն
են. Ռուսաստանի Կենտգործկոմի նախագահ Կա-
լինինը, Ուկրայինայի Կենտգործկոմի նախագահ
Պետրովսկին, Բելոռուսիայի Կենտգործկոմի նա-
խագահ Չերվյակովը, Անդրկովկասի Կենտգործ-
կոմի նախագահ Նարիմանովը:

Սոցիալիստական Խորհրդային Հանրապետու-
լթյունների Միուլթյան աշխատավորների ամբող-
կովին ու շխտարարուլթյանն առաջնորդում և
Միուլթյան Ժողովրդական Կոմիսարներին նախա-
գահ ընկ. Ռիկովը:

ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿ

Կ. ԲԱՆԱԿԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ

ԱՌԱՋԻՆ ԿՈՐԻՋԸ

Կ. Բանակը ծնունդ և առել բանվորական
Թաղերում, հազարավոր բանվորների ծոցում,
պակասուլթյան ու կարիքի մեջ: Նրա հիմնադիրը
յեղել և Կոմունիստական կուսակցուլթյունը:

Թագավորին տապալելուց անմիջապես հե-
տո, առաջին անգամ Պետրոգրադի բանվորները
սկսում են զինված խմբեր պատրաստել: Եզ-
որինակին հետևում են Մոսկվան, Կիեվը, Տու-
լյան, Ուճալը, Ադեսան և Բազուն:

— «Կարմիր Գվարդիա», — այսպես են կոչում
բանվորների եզ զինված խմբերին:

Հոկտեմբերին բայշեխկները կառավարու-
լթյունն իրենց ձեռքը վերցրին: Թագավորի գե-
ներալներին մեկը՝ Կրասնովը իր տիրոջ Կերեսու-

կու հրամանով Ֆրոնտից զորք բերավ Պետրոզրադ բալշեփիկներն վրա, բայց Կարմիր Գրվարդիայի կողմից շարդվեց ու ցիբ ու ցան յեղավ:

Ապագա Կ. Բանակի կորիզն եր Կ. Գվարդիան, վոր իր պատվավոր դիրքում կանգնած պաշտպանում եր իր դասակարգի շահերը:

ՍԵՄ ՀՈՎՏԵՍԲԵՐԻՅ ԳՆՏՈ

Փրոնտում թագավորը մինչև 15 միլիոն զորք եր հավաքել: Յերկրում միայն ձերերը, կանայք ու յերեխաներն եյին մնացել, մեկ ել հարուստների զավակները: Թագավորը չկար: Բայց կռիվն ելի շարունակվում եր: Միլիոնավոր զինվորներ հասկացան ում հեա գործ ունին: Իսկույն ըմբռնեցին բալշեփիկների արձակած լոզունգը—կորչի պատերազմը:

Փրոնտներն իրար անցան: Չորքերը առանց կարգ ու կանոնի տուն եյին ցրվում: Հենց այդ ել ուզում եյին բալշեփիկները:

—Հին ալի մեջ նոր զինի չեն ածի, հին զինվորի վրա հույս դնել, հրացանի տակ պահել ալլևս չեք լինի: Պետք եր եդ գրքը ցրվեր և նորը կազմակերպվեր:

Նոր բալշեփիկյան կառավարութունը գորացրում եր հին բանակը, բայց այնպես, վոր զորացրումը անցնի կանոնավոր կերպով: Են

միլիոնավոր հարստությունը, վոր կար Ֆրոնտում, զենքը, թեզանոթները պետք եր իշխանությանը: Չորացրման հեա, Ֆրոնտից յերկրի ներս և քաշվում ապամաթերը:

ՆՈՐ ՎՏԱՆԳ

Ոգտվելով են հանգամանքից, վոր զորքը թողնում և Ֆրոնտը, գերմանացիները սկսում են առաջ շարժվել:

Մեկը մյուսի հետից գրավում են Դվինակ, Պսկով ու շարժվում դեպի Պետրոզրադ: Վտանգը քանի գնում ենքան մեծանում և:

«Սոցիալիստական հայրենիքը վտանգի մեջ և», կոչ և անում ընկ. Լենինը: Կարմիր Գվարդիան ճակատ և ուղարկվում: Գերմանացիները կանգ են առնում: Դրսի թշնամու հեա գլուխ են բարձրացնում յերկրի զանազան մասերում մի քանի գեներալներ ու ատամաններ: Կառնիլովը բանտից փախչելով անցնում և Դոնի կազակների մեջ, զորք կազմակերպում, վոր հարձակվի բալշեփիկների վրա: Նրան ոգնության և հասնում գեներալ Կալենինը, մի ուրիշ գեներալ՝ Դուտովը գրավում և Որենբուրգ քաղաքը:

Պետրոզրադը, Մոսկվան դեպի Դոն և Ուկրայինա յեն ուղարկում բանվորական զինված խմբեր: Կարճ ժամանակից գեներալներն զորքը շարժվում և:

Կ. ԲԱՆԱԿԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԴԵԿՐԵՏԸ

Թեկուզ գերմանացիների առաջխաղացումը կանգ եր առել, բայց ելի յերկյուղ կար: 10.20 հազարանոց Կ. Գվարդիայով վոչինչ չեք կարելի անել. անհրաժեշտ եր ուժեղ Կարմիր Բանակ, փորը ամբողջովին կազմված լինեք շահագործվող, աղքատ գյուղացիներից և բանվորներից:

Բայց ինչ ձևով,— ահա դրանումն է հարցը: Այդ ժամանակ զինվորական պարտադիր ծառայության մասին խոսել չեք լինի: Բանվորը նույնիսկ խրանում եր դրանից:

Մնում եր կամավորական ձեզին դիմել:

Յեզ ահա փետրվարի 23-ին, Ժողովրդական Կոմիսարների Խորհուրդը հրատարակում է Կարմիր Բանակ ունենալու մասին դեկրետը:

ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿԻ ՆԵՐՍՈՒՄ

Կամավոր զորքի թիվը Կ. Բանակում որ որի վրա աճում եր, 1918 թվի ապրիլին Կ. Բանակում կային արդեն 106 հազար կամավորներ: Արյունալի կռիվների փորձը ցույց տվավ, վոր անհրաժեշտ է ներքին փոփոխություններ կատարել: Մինչ այդ կ. զորքերում հրամանա-

տարները ընտրովի եյին: Առաջին հերթին վերացվեց հրամանատարական այդ ձևը: Նշանակվեցին զորամասերի գլուխը բանիմաց, փորձված զինվորականներ, իսկ դրանց գլխին կոմիսարներ:

Ստեղծվեց ռազմական գործողությունների կենտրոն, զինվորական կոմիսարիատներ: Կամավորների համար սահմանվեց ծառայության ժամանակամիջոց, վեց ամիս: Կուսակցությունը զորահամար է անում ու բանակ ուղարկում տասնյակ հազարավոր կուսակցականների: Աստիճանաբար Կարմիր Բանակը զորեղանում, ամրակուռ է դառնում:

Խ. ԻՆՍԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՈՂԱԿԱՆՄ

Յեզուպայի փողատերերը ափաշկարա տանել չեն կարողանում, վոր Խ. իշխանությունը կարող է գոյություն ունենալ: Նրանք ուղղակի թե անուղղակի աշխատում են յերիտասարդ կառավարության վտախ տակի հողը փորել: Վարձում են սպիտակ գեներալներին, զենք, ռազմամթերք, փող, հաց տալիս և ուղարկում Կ. Բանակի դեմ: Գերմանացիների ուժերով Պետլյուրան գրավում է Ուկրայինան և Ղրիմը:

Գեներալ Կրասնովը իր ձեռքն է զցում Դոնի շրջանը (այնտեղ, ուր Դոնի կազակներն են

ապրում): Ուրալի սարերի կողմից գեներալ Կուչակն և գալիս մրացած չեխոսլավակների հետ*):

Հյուսիսում Սպիտակ ծովի վրայով անգլիացիները զորք ևն հանում Արխանգելսկի մոտ: Հարավային ճակատում (Սև ծովի կողմ) սպիտակ զորքերի մոտ սկսում են աշխատել ամերիկական և ֆրանսիական գեներալները:

Ֆրանսիական նավերը պաշար ու ռազմամթերք են հասցնում սպիտակներին:

Այդ դրության մեջն եր 1918 թվի ամառը Խորհրդային հանրապետութիւնը: Ողակված եր ամեն կողմից: Դրաի աշխարհից նա կտրված եր:

Այդ ժամանակ նրա փոկության հույսը միայն կարմիր Բանակն եր: Ու անթիվ ռազմաճակատները պահանջ են դնում Խ. իշխանութիւն առաջ զորահավաքի դիմել: Հուլիսի 28 ին հայտարարվում և առաջին զորահավաք: Այնուհետև սկսվում են կատաղի քաղաքացիական կռիվներ:

*) Չեխոսլավակները գերիներ ելին, վերցված 1914 թվի կռիվներում: Հետո նրանցից կազմվում և Չեխոսլավակների կորպուս, վորոնք ուզում են Սիբիրի վրայով անցնել Վլադիվատոկ, իսկ այնտեղից ել իրենց հայրենիք: Սպիտակները չեխոսլավակներին դուրս են բերում մեր դեմ:

ԳՐԻՎ ԿՈՆԶԱԿԻ ԴԵՄ

1918 թվի ամառը Պենզա-Վլադիվատոկ ճանապարհը չեխոսլավակները բռնում են: Դրանց միանում են սպիտակների հազար ու մի ավազակախմբեր: Շուտով նրանք բռնում են ամբողջ Վոլգա գետը: Դրութիւնը ինչքան զրնում, այնքան լրջանում և: Կարմիր զորքերը այդ կողմն են նետվում: Կարճ ժամանակամիջոցում սպիտակների թափթփուկները Կ. Բանակի ուժի առաջ շարտվում են Ուրալի սարերից մյուս կողմը:

Չմեռը Կոլչակը հավաքում և նոր ուժ, պատրաստվում գարնանը հարձակվելու Վոլգայի շրջանում գտնվող կարմիր զորամասերի վրա: Հարձակումը տեղի յե ունենում մարտին: Մերոնք անսպասելի հարվածից քիչ հետ են նահանջում, կարգի գցում շարքերը ու հակահարձակման դիմում: Թշնամին փախուստի յե մատնվում 2 ուղղությամբ. մեկը դեպի Սիբիր, Ուրալի վրայով, մյուսը դեպի Թուրքեստան:

Հետապնդելով Սիբիր փախչողներին, մերոնք գրավում են Տոմսկ, վերցնելով մեծ աւվար, ռազմամթերք և մեծ քանակությամբ գերիներ:

Միևնույն ժամանակ սպիտակների թիկուն

քում կովում են մեր պարտիզաները: Մրանք հարձակվում են Իրկուտսկի վրա՝ վերցնելով քաղաքը ու Կոլչակին իր մինիստրների հետ:

1922 թվի հոկտեմբերի 25-ին միայն ամբողջ Միբիբը ազատվում է սպիտակներից:

Տաշկենտի բանվորների և Թուրքեստանի աշխատավորութայն միջոցով, յերկար կռիվներից հետո, սպիտակներից Թուրքեստանն էլ ազատվում է:

Սպիտակների վերջին մնացորդ՝ տեղական խաները փախչում, ապաստան են գտնում Պարսկաստանում:

ԿՈՒՎԸ ՅՈՒԳԵՆԻՉԻ, ՊԵՏԼՅՈՒՐԱՅԻ, ԲՈՒՐԺՈՒԱԿԱՆ ԼԵՅԱՍԱՆԻ ԴԵՄ

Արևելքի սպիտակ զորքերի հետ միաժամանակ, անգլիական և ռուս գեներալների զորքերը հարձակվում են հյուսիսից:

Յուգենիչը մեծ չափով ռազմամթերք ու թնդանոթներ է ստանում:

Լիովայի ու Լատվիայի վրայից կռիվները անցնում են Լենինգրադի սահմանները:

Լենինգրադին վտանգ էր սպառնում:

Լենինգրադի բանվորների քաջարի ջանքերով պաշտպանվում է ճակատը, մինչև վոր վրային հասնում 7-րդ և 16-րդ բանակները:

Մեր ուժեղ հարվածի տակ թշնամին փախուստի յե դեմում: Յուգենիչը հողիվ կարողանում է ազատվել Եստոնիայում, վորտեղ նրան զինաթափ են անում:

Յուգենիչի ջարդվելուց հետո ասպարեղ են դուրս գալիս լեհերը:

Միացած Պետլյուրայի հետ նրանք հարձակվում են Ուկրայինայի վրա՝ զրավելով Կիևը:

Ավելի փոքրաքանակ ուժերով մերոնք հարձակման են անցում: Մեր հեծելազորը պատռելով մի քանի տեղ թշնամու ճակատը, խուճապ է առաջացնում պաների զորքերի մեջ:

Թշնամին շփոթված փախչում է: Մերոնք հասնում են Լվովին: Բուդյոննու հեծելազորը մոտենում է Վարշավային:

Չունենալով ամուր, խիտ ճակատ և պահեստի զորք, մեր առաջավոր զորքերը հետ են քաշվում:

1920 թվի հոկտեմբերին զինադադարի պայմանագիր է կնքվում և մարտի 18 ին հաշտություն կնքվում Լեհաստանի հետ:

ԴԵՆԻԿԻՆՆ ՈՒ ՎՐԱՆԳԵԼԸ

Դենիկինն ու Վրանգելը Խ. Իշխանութայն վրա ատամները սրած հարավից արշավող գահաններն են:

Գեներալ Կառնիլովի ջախջախվելուց հետո

կամավորական խմբերի գլուխ և անցնում Դենիկինը: 1918 թ. ոգոստոսին Դենիկինը արդեն հարձակման է դիմում: Մերոնք քիչ հետ են նահանջում: Առաման Կրասնովի ոգնությամբ նրանք փորձում են վերցնել Ցարիդինը, հարավ արեվելքի մեր ամուր կետերից մեկը: Սև ծովի ափ են հանվում Ֆրանսիական և հունական զորամասեր: Մերոնք չկարողանալով դիմանալ զորոհին, ամբողջ ճակատով հետ են նահանջում: Թշնամին կովի ընթացքում գործ է ածում խոշոր հեծելազոր:

— «Պրոլետարներ ձիու վրա» են լողունգն և արձակում ընկ. Տրոցկին: Շտապ կերպով կազմակերպվում են հեծելազնոներ: Մեր ուժեղ հարձակման տակ թշնամին շարտվում է Ռաստովի մյուս կողմը: Յերկբորդ հարձակումով (մարտ, 1919 թ.) թշնամին վերջնականապես ցիր ու ցան է լինում: Նավարասիյսկում նրանց վերջին խմբերը նավ են նստում ու ազատվում կարմիրներից:

Դենիկինի թափթփուկները Նավարասիյսկից նավերով փոխադրվում են Լրիմ: Այստեղ վրանգելը սպիտակների զորքերի գլուխն է անցնում: Մի քանի փորձից հետո, առաջ շարժվելու կամ վերցնելու Ռաստովը, սա էլ շարդվում է, ամանալով Պերեկոպում:

Ուժեղ հարձակումից և հաջող շտուբից հետո Պերեկոպն էլ վերցնում է: 1920 թվի նոյեմբերին հարավային ճակատը վերացված էր: Թշնամին ահազին կոտորած ու գերիներ տալուց հետո փախչում է Պոլիս:

Խորհրդայնացման և յենթարկվում նաև Ադրբեյջանը, Հայաստանը, և 1921 թվի փետրվարին՝ Վրաստանը:

1921 թվի կեսին Խ. Միությունը ամբողջովին մաքրվում է թշնամիներից:



Պարում են «հոյարի» (լագնրում)



Լ. Տրոցկի

ԸՆԿԵՐ ՏՐՈՑԿՈՒ ԶԵԿՈՒՅՅԸ

Ռազմահեղափոխական խորհրդի նախագահ ընկ. Տրոցկու գեկույցն՝ ուղղած 25-րդ հրաձիգ դիվիզիայի վարժական — կադրային գնդի I վաշտի պետին, նույն վաշտի պատգամոր կարծիք բանակային ընտրվելու առթիվ:

«25-րդ հրաձիգ դիվիզիայի վարժական-կադրային գնդի I վաշտի I դասակի կարծիք բանակային նշանակվելու առթիվ և վաշտապետի պահանջմամբ՝ ներկայացնում եմ իմ ամփոփ ինքնակենսագրութունը ծառայության շիրքը մտցնելու համար:

«Յես ծնվել եմ 1879 թվի հոկտեմբերի 26-ին: Սովորել եմ ուսուցական դպրոցում: Հեղափոխական շարժման մեջ եմ մտել 1896 թվից: 1898 թվին ձերբակալվել եմ. 2 և կես տարի նստել եմ բանտում, 4 տարով արտորվել եմ Սիբիր: 2 տարի անց եմ կացրել արտորում. Սիբիրից արտասահման եմ փախել հեղափոխական զաղտնի աշխատանքին մասնակցելու համար: 1905 թվի սկզբներին Ռուսաստան եմ վերադարձել ուբիշի անցագրով: Հեղափոխական աշխատանք եյի կատարում: 1905 թվի դեկտեմբերի 8-ին ձերբակալվել եմ Պետրոգրադի Բանվորական Պատգամավորների խորհրդի ամբողջ կազմի հետ միասին:

15 ամիս նստել եմ բանտում: Դատապարտվել եմ Սիբիր արտորվելու: 1907 թվին փախել եմ Տարուսկի նահանգի Բերյոզովո քաղաքից, վերադարձել Պետրոգրադ, այնտեղից ել արտասահման: Արտասահմանում զաղտնի կերպով դրականութուն եմ հրատարակել: Կովի ժամանակ, 1916 թվին Ֆրոնտալից արտորվել եմ իմպերալիստական կովի դեմ պրոպագանդ մղելու համար: Ձերբակալվել եմ Սպանիայում և արտորվել Հյուսիսային Ամերիկա:

Այնտեղից մեկնել եմ 1917 թվի մարտին: Ձերբակալվել եմ անգլիացիների կողմից և պահ-

վել Կանադայի կոնցենտրացիոն լագերում գերմանական գերի նավաստիների հետ միասին, վորոնց հետ ամենաբարեկամական հարաբերություններ եին ստեղծվել մեզանում: Պետրոգրադի Պատգամավորների հետ Խորհրդի պահանջով ազատվել եմ անգլիական կառավարության կողմից և մայիսի սկզբներին Ռուսաստան վերադարձել: Մասնակցել եմ Հոկտեմբերյան Հեղափոխությանը:

25-րդ հրաձիգ դիվիզիայի վարժական — կադրային գնդի 1-ն վաշտի 1-ն շառասկի կարմիր բանակային 1, Տրոցկի-



ՄԵՐ ԴԻՎԻԶԻԱՅԻ ԱՆՑՅԱԼԻՑ

Մեր դիվիզիան կազմում է Կովկասյան հարմրագրոշ Բանակի մի մասը: Առանձին Կովկասյան Բանակն էր, վոր ոգնեց մեր, Ազրբեջանի և Վրաստանի ապստամբ բանվորներին ու գյուղացիներին ազատվելու դաշնակցականների, մուսավաթիստների և մենշևիկների շփոթ:

Քաղաքացիական կովի նեղ որերին Կովկասյան Կ. Բանակի զորամասերը մեզ հետ եյին, ոգնության եյին հասնում ամեն մի ճակատում: Դաշնակներին ջախջախելու գործում մենք դրժվարություններ շատ կքաշեյինք, յեթե չլինեք այդ ոգնությունը:


Հերոսական կովում կողք կողքի XI բանակի զորամասերի հետ մեր զորամասերը ջախջախեցին դաշնակցական ավազակախմբերին:

Այն ժամասակ մենք ունեյինք մի հեծելազոր և մի հետևակ բրիգադա (դիվիզիայից փոքրը), վորի մեջ եյին մտնում նախկին 2 և 3 հրացանաձիգ գնդերը և մի քանի փոքր զորամասեր:

(2 և 3 գնդերը կային դեռ դաշնակների ժամանակ):
Բրիգադաները կազմվեցին Հայաստանը Խորհրդային դառնալուց հետո, Ռազմժողկոմի № 1 հրամանով:
Փետրվարի 15-ին նրանք արդեն վերակազմ-

ված պատրաստ ելին:

Լուսեր են պատում, վոր ավանայուրիսա
դաշնակցականները մի ինչ վոր բանի պատրաստ
վում են:



Պատրաստ արված

Փետրվարի 14-ին տեղեկութուն է ստաց-
վում, վոր Բաշ-Ի, առնու շրջանում դաշնակցական-
ների բանգասեր են յերևոցել թվով 600 ձիա-
վոր և 400 հետևակ զորք:

Մյուս որը բանգասերի դեմ է ուղարկվում
մեր 2-րդ գունդը: Բայց անհաջողութունների
հանդիպելով հետ են անհանջում:

Փետրվարի 18-ին մեր զորքերը թողնում
են Յերևանը: Այդ որվանից մինչև ապրիլի 2-ը,
ճիշտ 45 որ մերոնք Ղամարլվից անընդհատ
կռիվ են մղում դաշնակցական բանդաների դեմ:
Ամիս ու կեսվա ընթացքում մեր զորամասերը
հերոսական գործեր են կատարում: Բանի-քանի
անգամ մերոնք շախշախել են խելագարի պես
հարձակվող թշնամուն, թեև վերջինս թվով մեծ
է յեղել:

Առանձին կովկաս. Բանակի ոգնությամբ
մերոնք ցիրուցան են անում դաշնակցականներին
և ապրիլի 4-ին մտնում Յերևան:


Կարճ հանգստից հետո բրիգադաները ճա-
նապարհվում են Չանգեզուրի ճակատը:

Այդ ժամանակ լեռնոտ Չանգեզուրում բուն
եր դրել «սպարապետ» կոչեցյալ ավագակապետ
Նժդեհը և «Փրկության կոմիտեն» իրենց արագ
փախչող խմբերով:

Հայաստանի Խ. իշխանութունը ցանկանում
է Չանգեզուրի խնդիրը խաղաղ միջոցներով վեր-
ջացնել: Այի հաջողվում: Դաշնակները կարծում

են, թե սերունք ուժ չունեն, վոր խաղաղ մի-
ջոցների յնն պիմում:

Գնդապետ թորխանովը հարձակվում է
մեր զորամասերի վրա, բայց մի լավ դաս առ-



Լապերում, ճափն

նելուց հետո, առանց հետ նայելու մինչև թավ-
րիզ մեկ է փախչում:

Մերոնք մտնում են Զանգեզուր:

Մասերն իրենց գործը փայլուն կերպով
վերջացնելով ոգոստոսի 20-ին գալիս են Լենի-
նական և Իլիշան հանգիստ առնելու համար:
Քաղաքացիական կռիվները Հայաստանում վեր-
ջանալուն պես ուսուսական զորամասերից շատերը
թողնում են Հայաստանը:


Տեղի յե ունենում յերիտասարդ զինվորա-
ցուների գորակոչ: 1921 թվի դեկտեմբերին յերկու
բրիգադաներից կազմվում է մի հավաքական բրի-
գադա:

Սովի, ցրտի, մերկության մեջ մեր մար-
տիկները կարողանում են ամեն 1921 թվի
ծանր օրերը:

Տասնյակներով լավագույն մարտիկներ զոհ
են գնում այն ժամանակ գոյութուն ունեցող
տիֆլին և զանազան վարակիչ հիվանդություն-
ների:

1922 թ. լավ բերքը Հայաստանին ազատում
է ծանր կացությունից: Մեր մարտիկների զրու-
թյունը լավանում է: Ստանում են բավականա-
չափ ուտելիք և շոր: Զորանոցները մաքրվում,
կարգի յեն բերվում:

Սյդ ժամանակ հավաքական բրիգադան
վերակազմվել էր զիվիդիայի:



Լագերում: Շուքուլ

Սկսվում են ուսման տարիները: Կ. բանակայինը ձեռքն է վերցնում զիբըն ու մատիաը և սովորում:

1923 թվից անցնում ենք թե շարքային և թե քաղաքական ծրագրային աշխատանքի:

1923 թվին մեր դիվիզիան դառավ ամրակուռ, գրագետ (3 տոկոս անգրագետ կար), մարզված ռազմական գործում:

1924 թ. հունվարին տուն արձակվեցին հին կարմիր բանակայինները: Փետրվարին հսկերին փոխարինելու յեկան կամսոմոլիսաները:

Ձեռք առանք նաև թիկունքի, յերկրային և մինչ զինակոչային զորամասեր պատրաստելու գործը, անցնելու ազագայում միլիցիոն սիստեմին:

Փշոտ ու քարոտ ճանապարհներով պատվով տարավ մեր դիվիզիան մեր աշխատավորության ազատագրման գործը: Այսոր նա զենքը ձեռքին կանգնած է վերպես պահապան նրա հալալ աշխատանքին:

ՀՈՂԱՅԻՆ ՀԱՐՑԻ ՄԱՍԻՆ

Կարմիր զինվոր, վերադառնալով գյուղ, դու մի մտանար, վոր գյուղացու գործը կլավանա ու կյանքը կբարելավվի միայն այն ժամանակ, յերբ գյուղում վճռականապես լուծված կլինի հողային հարցը և յերբ գյուղացին կվարի հողագատաբործման այն կարգը, վորը ձեռնտու յե իր շրջանի հողերի համար:

Դրա համար անհրաժեշտ է բեզ իմանալ հետևյալը: Հողը բանվորա-գյուղացիական պետության սեփականութունն է: Նրանից կարող են ոգտվել աշխատավոր հողագործները, նրանց միությունները, քաղաքի բնակիչները, պետական հաստատությունները և ձեռնարկությունները:

Աշխատավոր հողագործը հողից ոգտվելու իրավունքը կորցնում է միայն որեւքի համաձայն այս դեպքերում.

1) Յեթե հոժար կամքով հրատարվում է իր հողից, 2) յեթե կապված չի գյուղի կամ հողի հետ, 3) յեթե ընտանիքի բոլոր անդամները մեռնում են, 4) յեթե ընտանիքը մի ուրիշ տեղ է տեղափոխվում և առաջվա տեղում այլևս տնտեսություն չունի, 5) յեթե հանցանքներ է համար գրկվաց է հողի իրավունքից, 6) յեթե հարկավոր է լինում հասարակական և պետական կարիքների համար գրավել հողը: Բացի այս դեպքերից աշխատավոր գյուղացին պահում է միշտ ել իր հողից ոգտվելու իրավունքը:

Որոնքով արգելվում է հողերը ծախել, առնել, կտակել կամ նվիրել ուրիշին և գրավ դնել և նրանով սպեկուլյացիա անել:

Հողից ոգտվում է միայն նա, ով սեփական աշխատանք է գործ դնում նրա վրա:

Վարձու աշխատանքը (մշակ վարձելը) թույլ է տրվում այն պայմանով, յեթե տնտեսություն աշխատանքի ընդունակ բոլոր անդամներն ել հավասար չափով աշխատեն վարձված մշակի հետ միասին:

Այս ասպարիզում ջո և ընդհանրապես բոլոր գյուղացիների անելիքը ճշտություն վորոշում է մեր «Հողային Որենսգրքը»:

«Հողային Որենսգրքը» գրված է իսկական աշխատավոր հողագործի համար և նա հետևյալ եյական պահանջներն է դնում.

1. Սմեն մի գյուղացի ինքը պիտի մշակի պետությունից շնչաբաժին ստացած հողը:

2. Հողը արենդով տալու իրավունք ունեն մենակ այն սոջատներն ու հիվանդները, վոր իրենք ուժ չունեն հողը մշակելու:

3. Մշակ բանեցնող հողագործն ինքն ել պիտի աշխատի մշակի հետ, թե չե առաջվա նման ինքն աղա դառնալ և ուրիշներին նոջար դարձնել չի կարող:

4. Հողի վրա աշխատանք ազատ կերպով կարելի յե տանել 3 կարգով:

ա) Համայնական-խառը, ինչպես պապերից մնացած մեր գյուղերի հին սովորությունն է,

բ) Առանձնական, յերբ ամեն մի գյուղացի իր տան հողը ստանում է մեկտեղ և ել չի խառնվում հողաբաժանություն, և

գ) Ընկերական, յեթ մի քանի հողագործներ իրենց հողերը միացնում են և վար ու ցանքսը իրար հետ ընկերովի-արկերովի յեն անում:

Այս տեսակներից վորը գյուղացին հավանի և ընտրի, այն ել կարող է կատարել տա գավառի հողաբաժնի միջոցով. մեր խորհուրդն է՝ անցնել վերջին կետում հիշված կարգին:

5. Հողագործի տունը կառավարում է տան գլուխը (մեծը). յեթե տան գլուխը ծուլ է,

հարբեցող, վատնող, անտնտես, և այլն՝ նրան կարելի չե փոխել և նշանակել ծխի մի ուրիշ անդամին:

6. Ծխի անդամները կարող են բաժանվել բայց յեթե նրանց հողը քիչ է և հողակտորները փոքր, այդ դեպքում հողը բաժանել չի կարելի:

7. Յեթե հողագործի կամ նրա գյուղի հողերը ճանապարհի, սահմանների, ջրի, արոտի կողմից անհարժար են, այդ դեպքում նրանք պետք է դիմեն գավառի Հողբաժնին, վորը անպայման պարտավոր է վերացնել հիշյալ անհարմարութիւնները:

8. Ներքին հողաբաժանութիւնը գյուղի հողային կոմիտեն պետք է շատ շուտ վերջացնի, վորպեսզի հողագործը հանգիստ իր գործին անցնի, արտը մշակի, քարից ու տատասկից մաքրի, առուններն ու ճանապարհները շինի:

9. Ներքին հողաբաժանութիւնի ժամանակ գյուղի հողային կոմիտեն պետք է ամենքին հավասար չափով նայի, թե չե նա կպատժվի և կզրկվի հողից:

10. Հողային բոլոր հարցերի համար հողագործը պետք է դիմի գավառի Հողբաժնին և Հողփողկոմատին, իսկ վիճելի և չբավարարված խնդիրների համար՝ հողային դատարանին:

Այստեղ մենք թվեցինք Հողային Որենագրելից 10 հոդված, իսկ Հողային Որենագրելից ունի 234 հոդված, վորոնք բոլորն էլ հողագործի դարդ ու ցուլը հողալու, նրան ճշտ ճանապարհ ցուց տալու համար են գործած Սորհրդային իշխանութիւնի կողմից:

Վերջում Հողային Որենագրելից, ի՞նչ լավ ծանօթացիր նրա հետ և ապա նրա ասածները հակացրու ու տարածիր քո շրջանում, վորպեսզի ազատվեք պատանոկ կեղծ հողաբաժաններից, խարդախ չափրա ներից, տղետ խնդիր գրողներից, ազատ աջակատներից և անպարտաճանաչ պաշտոնյաներից:

Կարմիր զինվոր, ուսումնասիրիր Հողային Որենագրելիցը և հողային հարցը տար քո, աշխատավորի խելքով ու ձեռքով:

ԱՆՏԱՌՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Անտառներն էլ բանվորա-Գյուղացիական պետութիւնի սեփականութիւնն են կազմում, Գետական անտառային ֆոնդը՝ այսինքն անտառները յերկու տեսակի յե լինում.

1) Տեղական նշանակութիւն ունեցող անտառներ և 2) Ընդհանուր պետական նշանակութիւն ունեցող անտառներ:

Նախկին գյուղական, հասարակական անտառները տեղական նշանակութիւն ունեցող անտառներ են կոչվում: Մնացած բոլոր անտառները համապետական են: Այս անտառներում անտեսութիւնները վարում են անտառախնամարմինները:

Այսպիսի անտառներից փայտը ծախվում է նշանակված գներով: Կարմիր բանակայինների ընտանիքներին, գաղթականներին և չքավորներին վառելիքի ու շինութիւն համար հարկավոր փայտը ծախվում է կես գնով կամ գնի մի քառորդով: Այդ պայմանով փայտ ստանալ կարելի յե միայն շրջանային գործադիր կոմիտեաների տված վկայականներով: Ձրի կարելի յե փայտ ստանալ բնութիւն պատուհասներից վրնասված (հրդեհից, սելավից և այլն) մարդկանց, գաղթականների, դպրոցների, հիվանդանոցների և այլ հասարակական պետքերի համար շինութիւններ շինելու նպատակով: Պակաս գնով կամ ձրիապես ստացած փայտը չի կարելի ուրիշին ծախել:

Համապետական նշանակութիւն ունեցող անտառից կողմնակի կերպով ոգտվել (խոտ հրնձել, տավար արածացնել, վորսորդութիւն անել և այլն), կարելի յե Հողժողկոմատի առանձին թույլտվութիւնով կամ փողով:

Կարմիր բանակայինի ընտանիքը զիջումով (պակաս գնով) փայտ ստանալու համար պիտի ներկայացնի անտառապահին շրջանային գործկոմից ստացած մի վկայական, վորի մեջ գրված պիտի լինի, վոր 1) ընտանիքի անդամը ծառայում է Կարմիր Բանակում, 2) տան նորոգութիւն համար փայտ է հարկավոր, 3) հարկավոր փայտը իսկական գնով ընտանիքը չի կարող առնել:

Այդ վկայականով անտառապահը կարող է կես գնով փայտ բաց թողնել: Յեթե ընտանիքը ուզում է փայտը քառորդ գնով առնել նա պիտի դիմի գաղառական հողային վարչութիւնը և ստանա նրա միջնորդութիւնը:



Կողերսցիսն ԳՅՈՒՂՈՒՄ

ԿՈՊԵՐՍՑԻՍՆ ԳՅՈՒՂՈՒՄ

ԻՆՉ ԲԱՆ Ե ԿՈՊԵՐՍՑԻՍՆ

Կոպերացիա խոսքը յեփրոպական խոսք ե և նշանակում ե գործակցութուն, ընդհանուր ուժերով գործել:

«Միությունը ուժ ե»: Կոպերացիայի դրոշակի վրա գրած այս խոսքերը նույն նշանակությունն ունենին նշանակութուն վոր ունեն բանվորների դրոշակների վրա գրված խոսքերը՝ «Պրոլետարներ բոլոր յերկրների, միացե՛ք»:

Կոպերատորները կանչում են միանալու և միասին գործելու բոլոր բանվորներին, գյուղացիներին և նրանց համար, նրանց գաղափարներով աշխատող ուսուցչին, ծառայողին, միլիցիոներին, և այլն:

Խորհրդային յերկրներում չեն կարող լինել սպեկուլյանտներին ծառայող կոպերատիվներ, Կապի-

տախտական յերկրներում, բացի աշխատավորական կոպերատիվներից, կան նույնպես կոպերատիվներ, վոր ծառայում են ուժեղներին, մեծ մասամբ կալվածատերերին, հարուստ գյուղացիներին, սիշակ վաճառականներին և մեծ պաշտոններ ունեցող ծառայողներին: Այդպիսի կոպերատիվները սուտ կոպերատիվներ են, նրանք միանում են բանվորներին կողոպտելու, իսկ մենք միանում ենք, փորպեօզի մեր յերկրի խղճուկ չարչիները մեր գյուղացիներին շողոպտեն:

ԽՆԶԻ՝ ՀԱՄԱՐ ԳՅՈՒՂԱՑԻՔ ՊԵՏԲ Ե ՄԻԱՆԱՆ ԿՈՊԵՐՍՑԻՎԻ ԾՈՒՐԶԸ

Խորհրդային կոպերացիայի գլխավոր նպատակն ե բոլր մանր տնտեսությունները, մասնավանդ գյուղում, միացնել միմյանց և ընդհանուր ուժերով գործ անել, ընդհանուր ուժերով գյուղում հող մշակել, ստացած արդյունքը ծախել և հարկավոր առարկաներ ձեռք բերել գյուղի համար:

Առանց միության ահա թե ինչ ե առաջ գալիս, որինակ, նավթի ֆունար անցյալ փետրվարին Յերեվանում ծախվում եր 7 կոպեկով (որենքով 5 և կես կոպեկից ավելի չպետք ե ծախվեր Յերևանում), իսկ նույն ժամանակ Ղա-

րաքիլիսայում, մասնավոր խանութներում 13 կոպեկ եր, այն ինչ Ղարաքիլիսան նավթի հորերին, Բագվին Յերևանից ավելի մոտ ե:

Գորիսում նույն փետրվարին ծախվում եր նավթի Ֆ. նույնիսկ 16 կոպեկով, այսինքն՝ որինքով նշանակված գնից յերեք անգամ ավելի, իբր թե ճանապարհածախս ֆունտին 10 կոպեկից ավելի յե գնում Յերևանից կամ Բագվից Գորիս...

2թի արշիւնը Յերևանում հունվարին արժեք 54 կոպեկ, իսկ Ղարաքիլիսայում՝ 97 կոպեկ, և այլն:

Տեսնում ենք, վոր գյուղացին շատ անգամ իսկական գնից յերկու, յերեք անգամ ավելի յե տալիս, գյուղի առևտուրը իր ձեռքին պինդ պահող սպեկուլյանտին...

Յեթե սպեկուլյանտի տեղ իսկական լավ կոպերատիվ լիներ, գյուղացին մի շապկի տեղ շապիկ ու կես, 2, յերբեմն ել 3 շապիկ կարող եր գնել:

Ուրեմն, խորհրդային կոպերացիայի գ. խավոր նպատակն ե ընդհանուր ուժերով, կոպերատիվների մեջ մասնելով և մի մեծ ուժ դառնալով, մի կողմից ընդհանուր տնտեսությունն ըստեղծել, մյուս կողմից ել, ձեր կողքին այժմ կանգնած և ձեզ կողոպտող սպեկուլյանտներից գյուղերը մաքրել:

Ձեր կոպերատիվները այնքան ուժեղ պետք ե լինեն, վոր սպեկուլյանտները իբեկնց շունչը փչեն, ինչպես փչում ե իր շունչը ջրից դուրս յեկած և հողի վրա ընկած ձուկը:

ԿՈՊԵՐԱՏԻՎՅԻ ԱՆԵԼԻՔԸ ՄԵՐ ԳՅՈՒՂՈՒՄ

Ամեն մի յերկիր մի տեսակի կոպերատիվ չի պահանջում: Ամեն տեղ իր պայմանների համաձայն կոպերատիվներ ե ունենում:

Ի՞նչ տեսակի կոպերատիվներ են պետք մեր յերկրի գյուղերին:

Մեր գավառների մեծ մասը յերկաթուղիներից հեռու յե ընկած. ուստի, այնտեղ գյուղացուն հարկավոր ապրանքները դժվար են մրտնում, գյուղի ունեցած ապրանքներն ել դժվար են այդտեղից դուրս գալիս ծախվելու: Ահա այս բանը սպեկուլյանտը լավ ե հասկանում և նա մտնում ե գյուղ, գյուղացիք ել իրենց կործանիչին ընդունում են իբրև փրկիչի:

Ի՞նչ ե անում սպեկուլյանտը: Մենք տեսանք նավթի ու չթի որինակից: Նա գյուղացուց վերցնում ե մեկին յերկու, յերեք անգամ բարձր գին:

Այս մի կողմից, յերբ նա գյուղին ապրանք ե ծախում. նա գյուղացուն յերկրորդ անգամ կողոպտում ե, յերբ նրա ապրանքն ե գնում,

յերբ հավաքուած ե նրա բուրդը, մեղրը, գորգերը, կաշիները, ծածուկ կերպով բամբակը, անասունները լուսը, ցորենը, գարին և այլն: Այս ամենը յերկու, յերեք անգամ ավելի ե-
ժան ե գնուած, քան կարող եր գուղացին ծախել, յեթե կոպերատիվ ունենար:

Մրանից յեզրակացութիւն. գյուղը պետք ե ունենա ուժեղ կոպերատիվ, վոր իրեն յերկու կողմից, յերկու միջատով չխուզե մասնավոր վաճառականը: Այդ կոպերատիվը պետք ե գյուղացուն տա ամեն տեսակի հարկավոր ապրանք, չիթ, նավթ, աղ, արոր, գուլթան, գերանդի, մկների դեմ կովոյ միջոց, պարարտացնող նյութեր, սովի ժամանակ հաց և այլուր, և այլն և այլն: Մյուս կողմից նա պետք ե գնի գյուղացու ապրանքները, բուրդը, կաշին, անասունը, յուղը, մեղրը, գորգը, և այլն: Այս ամենը պետք ե ծախի հենց նրան, ում պետք են այդ ապրանքները: Յեթե այդ չի կարելի, դժվար ե, պետք ե ծախի այդ ապրանքները պետական և կոպերատիվ մեր կենտրոնական կազմակերպութիւններին: Գյուղի համար հարկավոր ապրանքներն ել պետք ե աշխատի վերցնել առաջին ձեռքերից, յեթե հնար ե նույնիսկ գործարաններից:

Այնուհետև, գյուղը, մասնավանդ չքավորները, կարիք ունեն վերկի, պարտքով փող կամ ապրանք վերցնելու: Այս գործն ել կարող ե անել միայն կոպերատիվը լավ և արագ կերպով:

Այնուհետև կոպերատիվը ընդհանուր փորձադասեր պետք ե ունենա, ցեղական ցուլեր (բուղաներ) պետք ե պահե և այլն և այլն: Վերջապես՝ կոպերատիվները պետք ե առանձնապես ոգնեն անասնապահներին, այգեգործներին, բամբակագործներին, մեղվաբույծներին, գորգագործներին, շերամապահներին և այլն: **ՄԻ ԿՈՊԵՐԱՏԻՎ ՈՒՆԵՆԱԼ ԳՅՈՒՂՈՒՄ ԹԵ ՄԻ ՔԱՆԻ**

Մի հարց ել կա, ամեն մի գյուղում քանի կոպերատիվ կարող ե լինել: Ցանկալի յե մեկը, վորովհետև մի քանիոր պահել գյուղը չի կարող, բոլորն ել մեծ ծախս կնստեն, թույլ ել կլինեն:

Պետք ե ուժերը միացնել և մի գործող կոպերատիվ պահել, բայց հարմարեցրած տեղական պայմաններին: Այդ կոպերատիվի շուրջը կարող են լինել այգեգործները, բամբակագործները, մեղվաբույծները և այլ խմբեր: Յեթե մի գյուղում, դիցուք, գլխավորապես անասնապահներ են, կոպերատիվն ել կլինի գլխավորա-

պես անասնապահները կոպերատիվ, բայց նա պետք է ծառայի նույնպես մյուս գյուղացիների շահերին:

Կոպերատիվներ կազմակերպելու համար պետք է դիմել մեր կոպերատիվ կենտրոնին, Հայկոպին: Հենց սկզբից պետք է կոպերատիվի կազմը ուժեղ լինի, բարեխիղճ և պատրաստված մարդկանցով: Թե չէ, կոպերատիվը ոգուտի տեղ վնաս կտա.— կզցե կոպերատիվի անունը:

Կոպերատիվը չքավոր և միջին գյուղացիների համար է,— բոլորը նրա մեջ տեղ չպետք է ունենան:

Կոպերատիվի շատ առավելություններից մեկն էլ այն է, վոր նա պետութայն կողմից շատ արտոնություններ ունի: Այսպես, մեր Անդրկովկասի որոշումով, միայն իրենց անդամներին ապրանք ծախող կոպերատիվները (փակ կոպերատիվները) տալիս են հիմնական արհեստագործական հարկի կեսը, իսկ լրացուցիչի՝ 75 տոկոսը: Ուրիշներին, վոր անդամներին էլ ծախող կոպերատիվները տալիս են հիմնական արհեստագործական հարկի 75 տոկոսը և լրացուցիչի՝ 87 և կեսը:


ԿԱՐՄԻՐ ՄԱՐՏԻԿԻ ԱՆԵԼԻՔԸ ԿՈՊԵՐԱՑԻԱՅԻ ՄԵՋ

Կարմիր բանակային ընկերները քաղաքից գյուղ են գնում գիտուն և ուսում առած: Ամեն մի տուն արձակվող բարմիր բանակային կոպերացիայի մեջ ավելի ոգտակար լինելու նպատակով պետք է սկզբից լավ ծանոթանա այդ գործին, կյանքի մեջ ել, զրքերից ել Գրքքեր կարելի է Հայկոպի միջոցով բերել, իսկ գործնականապես՝ քիչ ծանոթ եք այդ գործին, — քաղաքում կոպերատիվներ տեսել եք, ինքներդ ել այցելել եք: Միայն այդ գործը, այդ ծանոթությունը պետք է շարունակել: Հատկապես պետք է մտնեք լավ կոպերատիվները (որ. Յերևանի) և տեսնեք, թե գործը այդտեղ ինչպես է դրված: Գյուղում ընդհանուր գրույցներ կազմակերպելով և ալ միջոցներով պետք է ձեր գյուղացի ընկերների աչքը բաց անեք. պատմեցեք կոպերատիվի տված ոգուտների մասին: Կոպերացիայի մեջ պետք է աշխատեք մտցնել, յիթե կարելի չէ, բոլոր գյուղացիներին, բացի բոլորացիներից, գորբաներից:

Պետք է աշխատել գյուղի տրոհողի, կուսկոմի, գյուղական փոխտգնութայն կոմիտեների և դպրոցների ուսուցիչների հետ միասին: Մի խոսքով, գյուղի ամենապատրաստված մարդ-

կանցից պետք է մի խումբ կազմել և այդ խումբը դարձնել կույտ, առիվ ստեղծելու, ուժեղացնելու և հարատև, մշտական ուժ:

Հիշենք կոպերացիայի սրատգամը. «Ուշժը միւսթյան մեջ ես: Ձեզա ից ամեն մեկը թէջ բան կարող ե անել, բայց լեթե ձեր փորրիկ ուշժերը միացնեք՝ դուք կդառնաք ուժեղ, ձեր ստեղծած գործը, ձեր կոպերատիվը կդառնա մի հզոր հիմնարկություն:



ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԲԱՆԿ

ԻՆՉՊԵՍ ԿԱՐԵԼԻ ՅԵ ՈԳՑՎԵԼ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԲԱՆԿԻՅ

Խորհրդային Հայաստանի կառավարութիւնը բաց է արել Գյուղատնտեսական Բանկը միասին հիմնողներն են՝ մեր հողային կոմիտարիատը (Հողժողկոմը), Հայկուպը, Արարատ արեստը (գործաւանը), Հայառը և Հայաստանի բամբակային գլխաւոր կոմիտեն (չխաւնեք Գրախտի հետ): Բ լորը մի սին այդ Բանկը բաց են արել մի նպատակով—վարկ բաց անել, ողնել մեր գյուղատնտեսության և գյուղատնտեսության հետ կապ ունեցող գործերին (կո-

պերացիայի մի շրջով պանիր, յուղ պատրաստելու, ձիթահան գործարաններ, ջրաղացներ, գոգ գործելու արհեստանոցներ հիմնելու և այլն):

Գյուղատնտեսական Բանկից փոխառություն կարելի է ստանալ մինչև մի տարի ժամանակով,—այդ փոխառությունը կոչվում է կարճ ժամկետային (կարճ ժամանակով): Փոխառություն կարելի է ստանալ մինչև հինգ տարի ժամանակով ել,—այդ փոխառությունը կոչվում է յերկար ժամկետային (յերկար ժամանակով):

Առանձին առանձին գյուղացիներին պարտք չի արվի, այլ պարտք գյուղացիներին Բանկը կտա միմիայն յերեք տեսակի կոպերատիվների միջոցով,— *) 1) գյուղատնտեսական վարկի ընկերությունների (վարկային ընկերություն), 2) գյուղատնտեսական ընկերությունների (ուրինակ՝ միասին ցանքսեր անող ընկերությունների), և 3) գյուղատնտեսական արտադրական ընկերությունների (արտոնների) միջոցով: Այս կոպերատիվը բոլոր փոխառությունը կտա-

Մակար. *) Առհասական տնտեսությունների միմիայն առաձին ղեպքերում է Բանկը վարկ բաց անում այն դեպքերում, յերբ դեռ կոպերատիվ չի կազմակերպված:

նան Բանկից և իրենց կողմից կբաժանեն իրենց անդամներին կամ իրենց ընդհանուր գործի վրա կծախսեն (գլխուք արտելի): Կոպերատիվներին այնքան պարտք կարող է տալ Բանկը, վորքան նախ, Բանկը միջոցներ ունի և, յերկրորդ, այնքան, վորքան պարտքի պատասխանատվութիւնը իրենց վրա կվերցնեն կոպերատիվի անդամները կամ վորքան կոպերատիվը վերցրած պարտքի դիմաց միջոցներ ունի:

Բանկի վարկ բաց անելու այս կետը շատ կարևոր է, ուստի սրա վրա գլուղի ընկերները հատուկ ուշադրութիւն պետք է դարձնեն: Յեթե դուք ձեր կոպերատիվին (որինակ, բամբակագործական, այգեգործական, անասնապահական, կամ վարկային և այլն) իրավունք եք տալիս Բանկից պարտք վերցնելու, դուք ձեր կոպերատիվի կանոնադրութեան մեջ պետք է գրեք, նախ, թե քանի՞ ուրլի վեցնուրու իրավունք եք տալիս ձեր վարչութեանը և ինչի՞ համար, ինչ նպատակով եք վերցնում պարտքը և, յերկրորդ, պետք է գրեք, վոր այդքան ուրլու դիմաց դուք վերցնում եք ձեր վրա պատասխանատվութիւն ձեր ունեցածով:

Մեր Գյուղատնտեսական Բանկը փոխառութիւն տալիս է գյուղատնտեսութեան տեխնիկան լավացնելու (որինակ, մեքենաներ գնելու),

ցանքերի տարածութիւնը մեծացնելու և հողը լավացնելու (շուր անցկացնելով, պարարտացնելով, ճահիճները չորացնելով և այլն), գյուղատնտեսութեան զանազան ճյուղերի պետքերի (բամբակագործութեան, այգեգործութեան, անասնապահութեան, մեղվաբուծութեան, շերամապահութեան, և այլ ճյուղերի պետքերի), զանազան տեսակի գյուղատնտեսական գործարանների, արհեստանոցների (որինակ՝ գորգերի), լավ տեսակի սերմեր գնելու, կթան ու լծկան անասուններ ձեռք բերելու, գյուղատնտեսական գործիքների և այլ նման գործերի համար: Ինչպէս լավ գիտեք, վոր շատ անգամ փողի կարիք ունեք, բայց ձեր ունեցած ապրանքը այդ ժամանակ լավ գին չունի և չի կարելի ծախել ձեզ հարկավոր փողը ձեռք բերելու համար:

Այդպիսի դեպքերում դուք կամ ստիպված ծախում եք եժան գնով ձեր ապրանքը կամ վաշխառուներից պարտք եք վերցնում ձեզ կողմից տոկոսներով: Գյուղատնտեսական Բանկը ձեզ ոգնութեան է գալու նույնպիսի այդպիսի նեղ որերին,—նա ձեզ փոխառութիւն կտա մինչև այն ժամանակ, յերբ ձեր ապրանքը կարելի կլինի լավ գնով ծախել:

Այսպիսի շատ ձևերով մեր նոր Բանկը ուզում է ձեզ ոգնել, գյուղը վտարի կանգնեցնել:

Բանկը մի մեծ պահա՞ջ էլ ունի, վորի չկատարողներինց նա իր ամբողջ փոխառութիւնը, առանց ժամանակը զայուն սպասելու, իրավունք ունի անսիջապէս հետ ստանալու: Այդ այն է, վր Բանկից պէրցրած ամեն մի կոպեկը պետք է կոպերատիվը ծախսե իր նպատակին:

Յեթե փողը ստացված է բամբակի գործի համար՝ բամբակի վրա էլ պետք է ծախսե կոպերատիվը: Վորպեսզի Բանկը առաջ կոպերատիվը ստան զուրս չգա՝ պարտք վերցնողն էլ կոպերատիվին չպետք է վատ դրութեան մեջ դնի: Ու ամեն մեկը կոպերատիվից ստացածը պետք է ծախսե միմիայն այն գործի վրա, վորի համար այդ փոխառութիւնը ստանում է: Չե՞ վոր Բանկի նպատակն է գյուղատնտեսութիւնը վարակենքել, ամրացնել և զարգացնել: Յեթե Բանկից ստացածը ուրիշ բանի գնա՝ նշանակում է Բանկը իր նպատակին չի ծառայում: Ծառայել իր նպատակներին այս Բանկի ամենագլխավոր գործն է: Բանկին կոպերատիվը պետք է մանրամասն հաշիվ տա միշտ, թե ինչպէս է ծախսել իր ստացած փոխառութիւնը:

Բանկի առաջ միշտ պետք է բաց լինեն կոպերատիվի մատանները, վոր Բանկի հսկիչները գան և տեսնեն, թե Բանկի ոգնութիւնը

ծառայել է թե վոչ իր նպատակին: Բանկը այս իրավունքն էլ ունի:

Ուրեմն, ընկերներ, Խորհրդային Իշխանութիւնը մի նոր մեծ գործ արել մեզ համար այդ Բանկը բանալով: Մեր հավատարմութեամբ և ճշտութեամբ ուժեղացնենք այդ գործը...

ՓՈՒՆԱԴԱՐԱԶ ՈԳՆՈՒԹՅԱՆ ԸՆԿԵ- ՐՈՒԹՅՈՒՆ

1. ԻՆՉ Ե ՓՈՒՆԱԴԱՐԱԶ ՈԳՆՈՒԹՅԱՆ ԸՆԿԵ- ՐՈՒԹՅՈՒՆԸ

Մի ձեռքը ծափ չի տա: Մարդն առանց ուրիշի ոգնութեան չի կարող աչրել, թեկուզ յոթ գլխանի լինի:

Այս իմաստուն խոսքերն ով չի լսել, ով չգիտի: Եդ բանը չի պատճառը, վոր մարդկանց ստիպում է ընտանիք կազմել, մեծ-մեծ գյուղեր ու քաղաքներ շինել, հարեվանութիւն ու բարեկամութիւն անել:

Մեր յերկրում, ինչպես և աշխարհի բոլոր յերկրներում ու բոլոր ազգերի մեջ, շատ ընդունված բան է իրար ոգնելը:

Միյեզն ունեցողն ընկերանում է իր նման գրկ ուրիշի հետ — եսոր սրա արան են վարում,

եգուց մյուսի: Մի տղամարդ ունեցող տունը իր հնձի, «բաղաթաղի» և ուրիշ ծանր աշխատանքների ժամանակ—աշխատող ձեռք ե փոխ առնում. ետը հինգ-տաս հոգով մեկի հունձն են անում, եգուց մյուսինը. ետը տաս—քսան հոգով մեկի բաղն են թաղում, եգուց մյուսինը: Համ եղևով են աշխատում, համ գործն են շուտ պրծնում. Բան-փոխից բացի, կա նաև կաթ ու մածնի փոխ, պործիքների ու մեքենաների փոխ և այլն:

Ես ոգնությունը բոլորս ենք անում իրար: Առանց ես ոգնության—վոչ վոք չի կարող յորա գնալ: Սա ամենքիս ե հայտնի: Բայց մեզ մի բան ել ե հայտնի—են, վոր մեր ոգնությունը անկազմակերպ ե լինում, պատահական: Համ ել շատ տարածված չի:

Ես բանը նկատի առնելով Ս. իշխանությունը աշխատել ե ենպես անել, վոր մեկ-մեկու ոգնելը համ շատ տարածվի, համ կազմակերպված լինի, համ ել ամեն գործի վերաբերի: Ու ընկերություն են կազմել՝ մեկ մեկու ոգնելու կամ փոխադարձ ոգնության ընկերություն:

Ձ. ԻՆՉ ՈԳՈՒՏ Ե ՏԱԼԻՍ ՓՈԽԱԳԱՐՁ ՈԳՆՈՒ-ԹՅԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆԸ

Ես հարցի պատասխանը յես արդեն կիսով-չափ տվի. մնում ե, վոր շատերին համոզելու

համար մի քանի որինակ ել բերեմ, վորպեսզի դրանք ել տեսնեն փոխադարձ ոգնության ոգնություն:

Ասենք թե Պետրոսը մի եծ ունի, կամ Սարգիսը յերկու վոչխար. դրանք հո չեն կարող իրանց մի եծի կամ յերկու վոչխարի մի յերկու գրվանքա կաթը ամեն որ յեփել, մածուն շինել կամ ամեն որ պանիր պատրաստել, յուղ ու կարագ շինել. ինչքան ժամանակ պիտի ծախսեն, ինչքան աշխատանք թափեն, ինչքան փայտ ու աթար վառեն—մինչեվ վոր մի - յերկու արատու կարագ կամ պանիր ստանան. Շատը՝ շահված, քիչը՝ թափված: Ես բանը լավ են իմանում մեր գյուղացիք: Ու ամեն կերպ փոխադարձ ոգնություն են անում իրար:

Առանձապես փոխադարձ ոգնության ընկերության կարիք են զգում չունեվոր գյուղացիները: Առաջներում մեր աշխատավոր գյուղացիները անքում ելին պարտքի բեռան տակ: Գալիս եր նորաբերքը: Հաց չկա տանը, սոված ե ինքը, կինը, յերեխան, ձեռքում ուժ չկա մանգաղ բռնելու: Ու հստեղ նա գնում եր վիզը ծըռում հարստին փող, կամ մի քանի փուլթ ալյուր խնդրում, յոլա գնալու համար: Իսկ թե վորքան եր նստում նրան ալդ պարտք վերցրած փողը կամ ալյուրը, ինքն ել չգիտեր: Դրանից հետո նա տարիներով տոկոս եր տալիս, տաս-

նապատիկ վճարում, բայց մայան կար ու կար:
Յերեք տարի յե, ինչ մեր շունեվոր գյուղա-
ցիները դադարել են ունեվորներից պարտք փող
վերցնելու:

«Անեղը» մեր գյուղում իր հետքերը արդեն
ցույց ե տալիս: Չունեվորները ուզում են
դիմել ունեվորներին պարտքի բանի հա-
մար: Պետք ե զգուշ լինել, վոր անցյալի
պատմությունը չկրկնվի, շունեվորը ունեվորի
ձեռքը չընկնի: Իրա համար, հարգելի կարմիր
դինվոր, պետք ե ստեղծել փոխադարձ ոգևութ.
ընկերություններ, դրամարկիներ, վորտեղից շու-
նեվորը նպատակավոր պայմաններով փող վորց-
նի: Փոխ. ոգն. ընկերությունը պիտի ծա-
ռայի չքավորության շահերին: Յեվրոպայում,
որինակ՝ Իանիայում փոխ. ոգն. ընկերություն-
ներ կան բոլոր գյուղերում:

Ամեն մի 50—60 տուն մի ընկերություն
կամ մի արտել ե կազմում. միատեղ են հա-
վաքում դրանք իրանց կաթն ու սերը, ձուն ու
թոշունը, մսացուն ու բուրդը, մի խոտքով են
բոլորը, վոր ծախելու ապրանք ե. թոճադի ծա-
խելուց ավելի թանգ են ծախում, ծախելու
գործը մի յերկու հոգի յե տանում — խնայվում
ե ժամանակը. միացյալ ուժերով պանրի, յուղի
և այլ գործարաններ են հիմնում և լավ տեսակի
ապրանք են պատրաստում, լավ ել ծախում:

Ամեն մի արտելը կամ ընկերությունը իր ան-
դամներին պետք ապրանքը քաղաքից թոճադի
յե առնում — վորն ավելի ե՞ծան ե նստում: Բա-
ցի այդ, մեր գյուղացիների պես մի քանի զըր-
վանքա մածուն կամ կաթ. մի քանի հավ ու
ձու, մի շալակ փայտ և այլն ծախելու և մի
քանի գրվանքա նավթ, մի քանի լուցկի կամ
մի յերկու ար.ին կտորեղեն առնելու համար
ամեն որ ամեն տնից մարդ չի գնում քաղաք,
այլ ընկերությունն ե նրանց տեղ աշխատում:
Բացի այդ, փոխադարձ ոգնության ընկե-
րությունները և արտելները ազնիվ ցեղի պատ-
կանող սերմացու, խոզ, ձի, բուրգա, դոշ և այլ
կենդանի յե պահում ու կամաց կամաց ազնի-
վացնում ե իր ընտանի կենդանիների տեսակը:
Իսկ ազնվացրած կենդանիները ամեն կողմից
ոգտավետ են գյուղացու համար. ազնիվ ձին, ջորին,
եջը արագ ե փախչում, լավ յերիչ ե ունենում, լավ
լուծ քաշում. ազնիվ կովը, այծը, վ չխար ըխոշոր ե
լինում. մեկին յերկու ավելի կաթ ու միս ե
տալիս. ազնվացեղ հավը, բաղը, հնդուն, սագը,
աղամկին — խոշոր են լինում, խոշոր ձվեր են ա-
ծում, թանգ են գնահատվում: Փոխադարձ ոգ-
նության ընկերություններն ու արտելները լավ
խոշոր, համեղ, յուղալի, պտղաբեր հացահատիկ,
բանջարեղեն, ընդեղեն (գազար, կաղամբ, կար-
տոֆի, և այլն), խոտեր (յոնջա, կորընգան), պրտ-
դատու ծառեր, թանգարժեք բույսերի լավ տե-

սակներ (բամբակ, ծխախոտ, թեյ) են բերում: Իսկ թե ինչքան ոգտավետ է սա՝ բարձրին և հայտնի մեր ցորենը մեկին 8 է տալիս, բւղարականը մեկին 20. մեր բամբակը (ղարազոզա) փթին մի քանի մանեթով ամերիկականից եժան է գնահատվում. մեր դուլասարը յեթե արժի 50—60 կոպեկ, լավ տեսակի ծխախոտը 2—3 մանեթ է գնահատվում. մեր կովը տալիս է կես վեզրո կաթ, մայականներինը մեկ վեզրո յե տալիս, իսկ շվեյցարական ու դանիական կովերն իւր ավելի: Մեր պանիրն արժի 15—20 կոպեկ, շվեյցարականը՝ 50—60կ.:

Բայց միայն այսքանը չէ: Փոխադարձ ոգնության ընկերությունները ամբողջ գյուղի համար գյուղատնտեսական մեքենաներ են բերում—ելեքտրական ջրաղացներ, գութաններ, հնձող մեքենաներ, կալտոզներ և այլն—, վերոնք մեր գործիքներից մի քանի անգամով ավելի արագ են բանում ու աշխատանքը համ շուտ է կատարվում, համ ել եժան է նստում:

Կարկտահարության, ժանգի, յերաշտի, ինչպես և դաշտային մկների ու մորեխի, թրթուրի, ցրտահասության, կենդանիների հիվանդությունների և այլ պատահարների ու վնասատուների հասցրած դժբախտության դեպքում մեր գյուղացու տնտեսության սյունը սղոցվում է, սովը դռանն է չորում: Փոխադարձ ոգնության ընկերությունները այդպիսի դժբախտություններ

ըից ապահովագրում են իրենց անդամների ամբողջ տնտեսությունը և այդ դժբախտության որերին վճարում են նրանց վնասների արժեքը:

Մի խոսքով—փոխադարձ ոգնության ընկերությունը գյուղացու համար իսկական փրկության ընկերությունն է:

Ես պատճառով Խորհրդային իշխանությունը չի խնայում վոչ մի միջոց, վոր տարածի եղ ընկերությունները, վոր ամեն գյուղ ունենա եզպիսի ընկերություն:

Ընկ. կարմիր զինվոր, փոխոգնության ընկերություններ մեր յերկրում շատ քիչ գյուղերում կան: Մնացած տեղերում գաղափար ել չունին դրա մասին:

Իո՞ւ պատմի, հասկացրու աշխատավոր գյուղացիներին, վոր իրենք ել այդպիսի ընկերություններ կազմեն, վոր մսակեր մարդ ջանավարերի—չարչիների ձեռքը չընկնեն: Բայց ըզգույշ: Ամեն կերպ աշխատիր, վոր կուլակը մեջը չընկնի, նրանից խեր չկա: Մեջն ընկավ, նշանակում եզտեղ նա իր շահն է փնտրում:



ՄԵՐ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ

ԲԱՄԲԱԿԱԿՈՐԾՈՒԹՅՈՒՆԸ ՅԵՎ ՄՆԵՂԻՔՆԵՐԸ

ԽՈՐՀՐԳԱՅԻՆ ԲԱՄԲԱԿԱԿՈՐԾՈՒԹՅՈՒՆԸ

Պատերազմից առաջ ցարաւան Ռուսաստանում բամբակի գործով պարապում էին յերկու տեղ թուրքեստանում և Անդրկովկասում:

Յանված է դեսյուսիներով

1915 թ. թուրքեստանում 523,559 դես.

1914 թ. Անդրկովկասում 148,900 դես.

Ինչպես տեսնում եք, բամբակի զիւսաւոր տեղը թուրքեստանն է յիսել, բայց Անդրկովկասն էլ բավականին առաջ է դնացել այս գործում:

ՎՈՐԲԱՆ ԵՅԻՆ ՈԳՏՎՈՒՄ ԴՐԱՆԻՑ ԻՐԵՆԺ ՑԱՆՈՂՆԵՐԸ

Բայց գյուղացիք իսկապես շատ ավելի քիչ յին ստանում, վրոով ետև նրանց ձեռքից բամ-

բակը ժամ գնով առնում և գործարաններն թանգ գնով ծախում էյն վաճառականներ, վորոնք, իբր թե, գյուղացիներն ոգնում էյին սկզբից փող աւրով, բայց տվածի դիմաց մեկի շատ անգամ մեկ ուրիշ խոսքով, 100-ին հարյուր տեղոս վերցնելով:

ԲԱՄԲԱԿԻ ԳՈՐԾԸ Խ. ԻԵՄԱՆՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿ

Իմպերիալիստական պատերազմի, քաղաքացիական և ազգամիջյան կռիվների պատճառով բամբակագործութունը շատ է վնասվում: Այսպես, 1922 թվին՝

ցանված էր ստացված էր մադեսյատիններով քրոված բամբակ

1. Թուրքեստանում 51,428 դես. — 600,000 փութ

2. Անդրկովկասում 980 դես. — 7,000 փ.

Ընդամենը 52,408 դես. — 607,000 փ.

Ինչպես տեսնում ենք, բամբակի գործը մեռնելու վրա է յեղել 1922 թվին:

1923 թվին, ոգավելով Խորհրդային յերկրների ընդհանուր խաղաղութունից, բանվորագյուղացիական իշխանութունը գյուղացիության հետ յեռանդուն կերպով ձեռք է զարկում բամբակագործության վերականգնմանը: Խորհրդային իշխանութունը իր կենտրոնական

Բամբակյումի միջոցով գյուղացիներին ոգնելու համար Թուրքեստանում, Ադրբեջանում և Հայաստանում տեղական Խորհրդային իշխանութիւնների հետ միասին հիմնում եւ բամբակային ընկերութիւններ (Հայաստանում «Գրբախտ»-ը)։ Այդ ընկերութիւնները գյուղացուն առաջվա, ցարական վաշխառվի նման վոչ թե 100-ի հասնող տոկոսով պարտք եւ տալիս, այլ տարեկան 10 տոկոսով, եժան ապրանք տալով, և այլ կերպ ոգնելով։

Խորհրդային իշխանութիւնը դրանով չի բավականանում։ Նա բամբակի գործի համար գծել եւ մի ճանապարհ, վորի վերջը պիտի հասնի։ Վճուված եւ մոտավորապես այսպիսի ծրագրով գործել առաջիկա չորս տարին Խորհրդային յերկներում։

Ցանվելու

Սպասվում ե

յե

մաքրված բամբ.

1924 թ. 390 հազար դես. 6.736 հազ. փ.

1925 թ. 510 հազար դես. 9.462 հազ. փ.

1926 թ. 640 հազար դես. 13.113 հազ. փ.

1927 թ. 780 հազար դես. 18.720 հազ. փ.

Իհարկե, չորս տարուց հետո ել մյուս չորս, հինգ և այլ տարիների համար ավելի մեծ ծրագիր կմշակվի...

Շնորհիվ բամբակի գործի այս զարգաց-

ման, Խորհրդային իշխանութիւնը այս տարի մեր գործարանների համար դրսից միայն մոտ 2 միլիոն փութ բամբակ կբերի։

1927 թվին, յերեք տարի հետո, Խորհրդային իշխանութիւնը իր վոսկին վոչ միայն արտասահման չի տանի բամբակ զնելու. այլ և հույս ունի արտասահմանին 2 միլիոն փութից ավելի բամբակ ծախել և այնտեղից բերել վոսկի կամ մեզ հարկավոր ապրանք, գլխավորապես գյուղատնտեսական և այլ տեսակի գործիքներ։

ՄԵՐ ՆՊԱՏԱԿ

Վորքան բամբակի բերքը Խորհրդային յերկրներում սվելանում ե, այնքան կտորեղենն ել եժանանում ե։ Ա. ա մի քանի թիվ։ Խորհրդային Սոցիալիստական Հանրապետութիւնների Միութեան կտորեղեններ, Սինդիկատը՝ ճ.թեղենի միութիւնը Յերևանում ունի բաժանմունք։ Այդ բաժանմունքը պետական մարմիններին և կոպերատիվներին ծախում եր

1923 թ. հոկտեմ.	1924 թ. մարտի 5-ին
բյազի արշինը 50 ¹ / ₂ կ.	29 ¹ / ₄ կ.
մայիսկինի արշ. 81 կ.	45 ¹ / ₂ կ.
չթի » 47 կ.	33 ³ / ₄ կ.

Տեսնում եք, ինչ մեծ ե տարբերութիւնը։ Գուցե դուք ասեք, թե, «մեզ ինչ, քանի վոր

մեր դյուզին չարչին այդ զնով ապրանք չի ծախում .. Այդտեղ արդեն չարչին մեծավոր չենա ամեն կերպ աշխատում ե ձեզ պրոկեր: Ձեր ե պարտականությունն ե կոպերատիվ ունենալ կամ յեղած կոպերատիվը ուժեղացնել, փորձեսզի չարչու փոքրը ձեր գյուղից կարվի, կտորք եժան զնով գյուղը հասնի: Չունենանք շատ բամբակ, եժան զնով կտոր չենք կարող ունենալ:

ԲԱՄԲԱԿԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՅԱՍՍԱՆՈՒՄ

Մեր յերկիրը նույնպես բամբակագործությամբ զբաղվող յերկիր ե: 1914 թվին Նախկին Յերևանի նահանգում ցանված եր 44 հազ. դեսյատին բամբակ, փորից ստացվեց 700 հազ. փթից ավելի մաքրված բամբակ: Մեր այժմյան Հարաստային, Եջմիածնի և Յերևանի գավառներին սրանից բաժին եր ընկնում մոտ 20 հազ. դեսյատին 320 հազ. փթի չափ մաքրված բամբակի բերքով: Համաշխարհային պատերազմը, ազգամիջյան կոիվները, դաշնակցականների քաղաքակառուցությունը մեր յերկրումն ել կատարեցին իրենց սև ու ախուր գործը: Ահա մեր բամբակագործության անկման պատկերը:

Յերևանի նահանգում ցանված եր:

1914 թ.— 44 հազար դես.

1915 թ.— 30 » »

- 1916 թ.— 30 հազ. »
 - 1920 թ.— մեկ » »
 - 1921 թ — վոչ մի դեսյատին
 - 1922 թ.— 630 դեսյատին
 - 1923 թ.— 4300 դես. չափ.
- Բերք ստացվել ե.—
- 1914 թ.— 710 հազար փ. մաք. բամ.
 - 1920 թ.— 11 500 »
 - 1921 թ.— վոչ մի փութ
 - 1922 թ.— 7 հազար փթի չափ
 - 1923 թ.— 60 » » »

Լավ նայեցեք այդ թվերին: Նրանք ցույց են տալիս, փոր բամբակագործությունը Հարաստանում 1914 թվից հետո արագ քայլերով ընկնում ե և 1920 թվին բոլորովին մեռնում ե:

Խորհրդային իշխանության մեր յերկրում հաստատվելուց հետո, նկատում ենք, փոր կյանքի մյուս կողմերի հետ սկսում ե շարժվել և ապրելու նշաններ ցույց տալ նույնպես բամբակագործությունը: Բամբակագործությունը նոր ծնունդ ե առնում: 1923 թվից,— Խորհրդային իշխանությունը, յգտնելով յերկրում նույն իսկ սերմացու, հեռավոր Թուրքեստանից սերմացու յե բերում և ցանել ե տալիս 630 դես. չափ:

«ԳՐԱԽՏՆ» ՅԵՎ ՆՐԱ ՈԳՆՈՒԹՅՈՒՆԸ

1923 թ. մեր կառավարութիւնը կենտ. Բամբակ-կոմի հետ կազմում է «Գրախտ» ընկերութիւնը, վոր տալիս է գ. ուղագիներին 10 տոկոսով դեսյատինին 50 ր. պարտք և ելի գլխավորապես դրսից, Թուրքեստանից բերված սերմացու: Հետևանքը լինում է այն, վոր մենք բոլորս տեսնում ենք, — ցանվում է 1923 թ. վին 4,300 դես. չափ բամբակ՝ մոտ 60 հազար փութ մաքրված բամբակի բերքով... Իսկ այս 1924 թ. վին նույն Գրախտը գյուղացիներին ոգնում է բամբակի ցանքսերը մինչև 16 հազար դեսյատինի հասցնելու Հայաստանում, Եջմիածնի և Յերևանի զավառներում: Կարճ, մեր կառավարութիւնը աշխատում է, վոր բամբակի ցանքսերի տարածութիւնը Հայաստանում նախապատերազմյան 20 հազար դեսյատինի դիմաց 50—60 հազար դեսյատինի հասնի: 20,000 դեսյատինին մենք արդեն այս տարի յենք մտենում:

ՄԵՋ ԼՍ.Վ ԱՌՈՒՆԵՐ ԵՆ ՀԱՐԿՍՎՈՐ

Կառավարութիւնն այս մեծ գործի մեջ պարպ չէ նույնպես գյուղացիութիւնը, — նա ել, բացի իրեն համար բամբակ ցանելուց, անցյալ տարի մաքրեց և այս տարի ել բամբակացանների անդրանիկ համագումարում խոստացավ տասնյակ հազարավոր ձրի աշխատողներ տալով մաքրել

առուները, առհասարակ՝ լավ պահել ջրանքները: Իսկ ջրանցքները հողի համար նույնն են, ինչ մեր մարմնի համար արյունատար անոթները. — ջրանցքը, առուն հողին տալիս է ջուր, արյուն, առանց վորի հողի սիրտը չի գործի...

Այսպիսով, ընկերներ, մեր մեռած բամբակագործութիւնը Խորհրդային Իշխանութիւնն որոք և նրա ու ժողովրդի միացյալ ուժերով կենդանանում է:

ԻՆՉ ԱՆԵԼԻՔՆԵՐ ԿԱՆ

Այս ամենից հետո, ձեզանից, արանի գեղերի ընկերներից շատերը կհարցնեն՝ ինչպես անենք վոր մենք ել բամբակ ցանենք: Կարճ պատասխանենք այս հարցին:

Հայաստանում բամբակ ցանելու համար ոգնութիւնն է տալիս Գոախտ ընկերութիւնը: Այդ, յերեվի, ամենքդ գիտէք: Ոգնութիւնն պայմանները հետևյալներն են.

Գոախտը ամեն մի դեսյատին ցանելու համար տալիս է պարտք 50-60 ռուբլի յերվոնկեցով: 50 ռուբլի ստացողը պարտավոր է Գոախտին աշնանը ծախել ամենաքիչը 30 փ. հունդավոր բամբակ, իսկ 60 ռուբլի ստացողը՝ 40 փութ: 50 ռուբլի ստացողը 30 ռուբլին կստանա պայմանագիրը կապելու միջոցին, 20 ր. ել քաղհանի համար մայիս—հու-

նիս ամիսներին: 60 րուբլի ստացողը սկզբում կատանա 40 ր. և քաղհանի ժամանակ 20 րուբլի: Յուրաքանչյուրը գետյատինի համար կտորվի փութը մեկական րուբլով 5 ու կես փութ սերմացու: Գռախտից փող պարտք չվերցնողներին սերմացու կտորվի պարտք վերցնողներին բավարարելուց հետո փութը 1 ր. 25 կոպեկով: Գռախտը իր տված պարտքի դիմաց վերցնում է տարեկան 10 տոկոս:

Բամբակի գինը կվորոշվի բերքի սկզբին:

Գինը կվորոշի մեր կառավարութիւնը Գռախտի, բամբակագործների, և բամբակագործական կոպերատիվների ներկայացուցիչների հետ միասին: Բամբակի գինը վորոշելու ժամանակ հաշվի կառնեն գյուղում գործածվող առարկաների գները, — կտրեղանի, ցորենի, գյուղատնտեսական գործիքների, անասունների և այլն: Անասուններ չունեցող բամբակագործներին Հաստատանի Գյուղատնտեսական Բանկը մի յերկու տարով պարտք կտա: Վորովհետև Բանկի միջոցները քիչ են՝ նա բոլորին անասուններ տալ չի կարող, այլ կտա մի քանի ընտանիքին մի, յերկու զուգ: Գյուղատնտեսական Բանկում վարկ բացանելու համար ել պետք է ունենալ բամբակագործների կոպերատիվներ: Գռախտը ինքը մրեն համտրում է ժամանակավոր կազմակեր-

պութիւն: Նրա նպատակն է գործը լավ հիւքելի վրա դնել: Գռախտի փութարենն ապագայում գյուղացիներին պարտք տվողը պետք է լինի մեր Գյուղատնտեսական Բանկը: Ուստի ինքը, Գռախտն ել ուզում է, բամբակագործների համագումարն ել վորոշեց, գլխավորը, մեր կառավարութիւնն ել ամեն կերպ նպաստում է, վոր դուք շուտով ունենաք բամբակագործական կոպերատիվներ: Նրանց նպատակը պետք է լինի գյուղացիներին համար վարկ ստանալ, բամբակը հետեւել բամբակի ազնվածուխել, հետեւել բամբակի ազնվածան, սերմադաշտեր, ցուցադաշտեր հիմնել, բամբակը կոպերատիվ ուժերով մշակելու համար միացնել գյուղացիներին, ժանտվանդ չքավորներին, գնել բամբակագործների համար հարկավոր առարկաներ առաջին ձեռքերից, և այլն:

ԳՅՈՒՂ ՎԵՐԱԴԱՐՁՈՂ ԿԱՐՄԻՂ ԲԱՆԱԿԱՅԻՆԻ ԱՆԵԼԻՔԸ

Հատկապես մեծ է ձեր պարտականութիւնը բամբակագործութիւնը առաջ տանելու գործում: Գուք քաղաքումը շատ բան եք տեսել ու սովորել: Գյուղ գնալուց առաջ դուք պետք է մտնեք Գռախտ և լավ ծանոթանաք նրա ոգնութեան պայմաններին: Հետներդ վերց-

ցրեք նրա հրահանգներից, յեթե ունեն նույնպէս բամբակագործութեան գրքեր, խորհուրդներ հարցրեք և այլն: Գյուղ գնալուց հետո ձեր առաջին գործը պետք է լինի գյուղի գործկոմի, կոմբէլի քարտուղարի, փոխոգնութեան կոմիտեաների, ուսուցիչների և այլ բանիմաց աշխատավոր գյուղացիների հետ արագացնել բամբակագործութեան կոպերատիվ ունենալու գործը: Այս կոպերատիվն է լինելու բամբակագործութեանը առաջ քաշող և տեղ հասցնող գլխավոր ուժը, ինչպէս շոգեշարժը գնացքի վազոնների համար: Այնուհետև պետք է ոգնել չքավոր, մանավանդ, անասուններ չունեցող գյուղացիներին, պետք է նրանց հողը, յեթե կարելի յե, ձրի կամ չնչին վարձով վարել: Պետք է Գոախտի ոգնութեան տակից պատվավոր դուրս գալու վճարել նրա պարտքը, քանի վոր նա ել ուրիշից ե վերցնում ձեզ ոգնելու համար, և այլն: Գլխավորը պետք է միմիանց ոգնել, վոր շատ ու լավ ցանեն, — ժամանակին վարեն, ջրեն, քաղհան անեն, հիվանդութիւններ յերեկալու դեպքում նրանց դեմ կովեն, գյուղատնտես հրավիրեն, և այլն, և այլն:

Այսպիսի միացյալ աշխատանքով մենք մեր բամբակագործութիւնը կուժեղացնենք: Ինչպէս գյուղատնտեսութեան բոլոր ձյուղերի, այնպէս և բամբակագործութեան դարգացման ամենագլխավոր միջոցը կը թութիւնը, լուսավորութիւնն է: Այդ յեկա չմոռանաք:

ՄԵՐ ԳՅՈՒՂԸ ՅԵՎ ՆՐԱ ՏՆՏԵ-ՍՈՒԹՅՈՒՆԸ ԶԲԱՆՄՈՒՆԸ

Մեր յերկիրը գյուղատնտեսական յերկիր է, շատերից լսած կիինես այս խոսքերը: Նրա բընակչութեան 100-ից մոտ 90-ը զբաղվում է հողագործութեամբ, այգեգործութեամբ, անասնապահութեամբ, Արանի դաշտերի գյուղացիների գործն է այգեգործութիւնն ու հողագործութիւնը: Անասուն արանի յերկրում պահում են շատ քիչ, վոչ ենքան, ինչքան մեր սարի գավառներում: Սարի գավառներում զբաղվում են հողագործութեամբ ու անասնապահութեամբ, լսան: Չի կարելի ասել վորն է սար յերկրում առաջին տեղը բռնում — անասնապահութիւնը, թե՛ հողագործութիւնը:

Հ Ո Ղ Ը

Յերկրի տարածութեան մեծ մասը բռնում են սարեր, յալլաղներ, ժայռեր ու անջրդի հողեր: Գիչ մասը նրա պետքական է հողագործութեան. սա յե պատճառը, վոր Հայաստան

նում ներսի, տեղական հացը չի բավականաց-
նում և մենք ստիպված ենք հեռու յերկրնե-
րից հաց բերելու:

Տեսնենք այժմ, թե վարելու ինչ տեսակի
հողեր կան Հայաստանում: Իսկական սեահող,
Հայաստանում շատ յիչ գեպքում և պատա-
հում: Լավ բերրի հողերը տափօրակ տեղերում
են գտնվում, վորոնցից շատ մասը Շուր և Եր-
հանջում: Լավ սեահողին հավասար հողեր կան
նաև սարի յերկրում, բայց նրանք չեն ոգտա-
գործվում, այնտեղ միայն լավ խոտ և լինում:

ԻՆՊԵՍ ԵՆՔ ԲԵՐՔ ԱՏԱՆՈՒՄ և ՄԵԿԻՆ ՔԱՆԻ

Բա եզ ինչպես և, կասեն շատերը, բերրի
հող քիչ ունենք արանում, սարի ուժեղ հողն ել
չի մշակվում, բայց գյուղացին վար ու ցանքս
և անում, հաց ստանում հողից:

Ստանում և, ճիշտ և, բայց վայ են ստա-
նալուն: Մեր գյուղացին վարում ու ցանում և
սարերի լանջերի հողերը: Իսկ գիտեք սարի
լանջի հողը ինչ տեսակի կլինի: Այդ հողի մեծ
մասը ավազ և, վորովհետև հարյուրավոր տա-
րիներ անընդհատ հորդ անձրևն ու քամին պո-
կել տարել են սարի լանջի հողի պտղատու, ու-
ժեղ մասը: Յերբ լսում ենք, վոր այսինչ տեղը
արտը բավ, մեծացավ, բայց վոչինչ չավազ,

Թող շատերին դարմանալի չլծվա:

Մեր սարի գավառներում բերքը մեկին
ստացվում և յերկու կամ յեր՝ք, շատ քիչ դեպ-
քերում չորս: Ահա թե ինչու մեր գյուղերում
տա ին յերկու յերեք ամիս լավ շ հացի, մա-
քուր հացի յերես հազիվ են տեսնում:

Յ Ե Լ Ք Ը

Վորն և սրա պատճառը, հարց կտան շա-
տերը:

Պատճառը նրանումն և, վոր մեր գյուղա-
ցին պահանջում և հողից այն, ինչ հողը չունի
տալու: չգիտե ստանալ այն, ինչ հողը ընդու-
նակ և տալու: Պարզ, մեր սարի յերկրի հողե-
քը աղաղակում, բողբոմ են, ասելով, վոր
մենք անասնապահական հողեր ենք, մեզնից
լավ խոտ պահանջեք:

Իսկ գյուղացին դեռ շարունակում և սա-
բոտ տեղը գարի ցանել: Յեվ կարկուտը ամեն
տարի ձեծում և նրա արտը:

Անասնապահություն լեռներում, բամբակա-
գործություն և այգեգործություն արանի յերկ-
րում, սա յե պահանջում մեր հողը:

ԿԱԹՆԵՂԵՆ, ԲԱՄԲԱԿ, ԳԻՆԻ, ԹԵ ՀԱՑ

Իսկ հացը... դարձյալ հարց կտան մեզ:

Դա յե, վոր շշկլացրել ե մեր գյուղացուն: Դաշնակցականների որոք նա մի վատ դաս առավ, տեսավ, վոր հացից լավ բան չկա: Բամբակի, թուխունի հողերը, այգիները գարու արտեր դարձրեց... վարովհետև սահմանները փակելին:

— Իսկ այժմ ել փակ ե: — Վոչ:

— Հարա ինչու յե շարունակում, — վորովհետև չգիտե, թե կարելի յե միայն յուղ ու պանիր, գինի կամ բամբակ ունենալ, ու դրանով լավ հաց գնել:

Ահա սա պետք ե հասկացնել գյուղացուն, վոր արանում զբաղվի զուտ այգեգործությամբ ու բամբակագործությամբ, սարի յերկրում անասնապահությամբ, իսկ վորտեղ հողը լավ հաց ե տալիս՝ հողագործությամբ:

ՄԵՐ ԳՈՐԾԻՔՆԵՐԸ

Չուխ, յեղան, կամն, մանգաղ, ցաքանը, խնոցի և այլն և այլն, սրանք են մեր գյուղատնտեսական գործիքները: Ես գործիքներից վորն ուզում եք վերցրեք, չուխը, յեղանը, խընոցին, բոլորն ել հին, նահապետական ժամանակից մնացած գործիքներ են: Այդ գործիքներն այժմ վերացել են Յեվրոպայում ու նրբանց տեղը նորը ստեղծվել:

Գիտե՞ այդ մասին մեր գյուղացին, գիտե՞ն ինչ ե սեպարատորը (յուղ շոկելու մեքենա), բացի մի յերկու վայրերից:

Գյուղացու կաթը անտեղի փչանում ե: Նրբան հարկավոր ե յելք ցուլց տալ, ասել՝ կաթնատնտեսական ընկերություն կազմակերպիր, միացիր սեպարատոր, կալսող, խոտ բաղող մեքենա գնիր, վոր չվնասվես:

ԱՆԱՍՈՒՆՆԵՐԻ ԿԵՐԸ

Մինչև այժմ մեր գյուղերում են կարծիքը կա, վոր տավարը կարելի յե պահել միմիայն խոտ ու դարմանով: Եդ միևնույն ե, թե մարդուն բացի ցամաք հացից՝ ուտելու ուրիշ վոչինչ չտալ: Շատ քիչ գյուղերում տավարին քուսպ են տալիս: Անհրաժեշտ ե գյուղում հասկացնել, վոր բացի քուսպից տավարին տալու ել ավելի լավ բան կա և վոր մեր միջոցները կրնան: — Դա ճակնդեղի տակն ե, ահա առ հասարակ արմատիք, վոր ուժեղ կերպով և տավարին չաղացնում և լավ կաթ ե տալիս: Այդպես ե այժմ նաև Յեվրոպայում: Ճակնդեղ ցանելով մեր գյուղացին յերկու ոգուտի կտիրանա: Առաջինը, վոր նրա հողը կսերմնափոխվի, յերկրորդը, վոր նա տավարին ուտեցնելու բոլ կերկունենաս, ու տավարը սոված չի պահիլ: Իսկ

տավարը սոված պահել գետեք խոժ, վոր նշանակում է տավարի մեջքը կտորել:

ԶԱՆՍԶԱՆ ՊԱԿԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Մեկ առ մեկ հաշվել, թե մեր գյուղում ինչն է պակաս, անհնարին է, վորովհետև պակասությունները անթիվ են: Շատ գյուղերում գյուղացու խմելու ջուրը լավը չի, հիվանդոտ է, գյուղի շուրջը ծառեր չկան (իսկ ծառերը խոժ գիտեք, թե ինչքան նշանակութուն ունեն առողջության, գյուղի ոգի վրա), գյուղը կեղտոտ է, տները մութ, գետնափոք, խոնավ, ճանապարհները քարոտ, հողը անուժ և այսպես անթիվ ու անհամար պակասություններ:

ԳՈ ՊԱՐՏԲԸ

Դարձյալ քո պարտքն է, տուն վերադարձող ընկեր, վոր ինչքան ուժդ պատի վերացնես ես պակասությունները: Քեզ տվել է կարմիր Բանակը, դու ել գյուղին տուր ստացած լուսավորությունից: Գո աշխատանքի ժամանակ դրժվարություններ կտեսնես, բայց չվհատվես, լուսավորության գործումն էլ ունեցիր ճակատի կարմիր զինվորին վայել տոկունություն:

ԳՅՈՒՂԻ ԲԱՏՐԱԿՆԵՐԸ (ՄԵԱԿՆԵՐԸ)

Գյուղացու տնտեսությունն էլ զգալիորեն քարձրացել է ներկայումս. նոր տնտեսական քաղաքականության հետևանքով ուժնացել են գյուղի ունեւորները: Հասկանալի յե, վոր ինչքան զորեղանում է կուլակը՝ ենքան նրա ախորժակը ավելի լեն է բացվում, ենքան ուղում է լայնացնել իր տնտեսության սահմաններն ու շատացնել իր յեկամուտը:

Կուլակը, իհարկե, մեն մենակ չի կարող իր տնտեսության վրա աշխատել, նա իր մեծացրած տնտեսությունը կառավարելու, նրա ոգուտը ա վելացնելու համար պետք ունի աշխատող ձեռքերի, վորոնց վարձում ու շահագործում է:

Ովքեր են եղ շահագործվող աշխատավոր ձեռքերը գյուղում:

Դա գյուղի չքավորութիւնն է, գյուղի բատրակութիւնը:

ԿԱԶՄԱԿԵՐՊԵՆՔ ԲԱՏՐԱԿՆԵՐԻՆ

Ներկայումս մեզ մոտ Հայաստանում ունենք բավական թիւով բատրակներ, այսինքն այնպիսի մարդիկ, վորոնք ձի, կով և նույնիսկ սեփական մի քողտիկ չունեն բնակվելու. ահա սրանք են, վոր վարձու աշխատանք են կատարում հարուստ անասնապահների, բամբակատերերի, այգետերերի և այլ մեծ տնտեսութիւններ ունեցողների մոտ:

Մեզ մոտ Հայաստանում խոշոր չափով բատրակներ կան Շիրակում, Յերևանի գավառում, Լոռու և ապա նաև Հայաստանի մյուս գավառներում:

Գյուղացի բատրակները վարձված են աղաների և հարուստ տնտեսատերերի մոտ և շնորհիվ իրենց անկազմակերպութեան՝ շատ խեղճ ու թշվառ են ապրում:

Աղաներն սև տնտեսատերերը, իհարկե, նրանց վարձում են այնպես, ինչպես վոր իրենց ձեռնտու յե: Աշխատանքը վերջանալուց հետո նրանք բատրակին դուրս են անում, առանց ապահովելու նրանց ապագա կյանքը: Բատրակները այնուհետև թափառում են գյուղերը և մի

կտոր հացի համար չնչին գնով վաճառում իրենց աշխատանքը:

Բատրակները մեր գյուղի ամենահետամնացներն են: Նրանք ճանձերի նման կոտորվում են մալեարիայից, թորախաից և այլ հիվանդութիւններից: Յեթե բատրակը հիվանդանում է՝ նրան ուշադրութիւն դարձնող չկա, նա զրկվում է աշխատանքից ու ամբողջ ընտանիքով ընկնում սովի գիրկը:

Ինչ անել նրանց այդ դրութիւնից փրկելու համար:

Նրանց այդ դրութիւնից փրկելու միակ միջոցը—նրանց կազմակերպելն է Հող-անտառ արհեստակցական միութիւն մեջ:

Յերբ բատրակը Հող-անտառ միութեան անդամ կգրվի՝ նա կարող է ավելի հեշտ աշխատանք գտնել իր միութեան միջոցով. բացի այդ՝ միութիւնը հիմնովելով բատրակներին աշխատանքի պաշտպանութեան վերաբերյալ խորհ. կառավարութեան հրատարակած դեկրետների վրա, կապում է տնտեսատերերի հետ պայմանագիր, վորով ապահովում է բատրակի բոլոր իրավունքները:

Յերբ բատրակը դառնում է Հող-անտառ միութեան անդամ՝ նա ապահովում է իրան ամեն կողմով.— ազատվում է վաշխառուի աշ-

հագործումից, իսկ հիվանդ դեպքում ՚րան օգ-
նում ե ապահովագրական գանձարկը, վորով
և թե ինքը և թե իր ընտանիքը ազատվում են
սովի ճանկը ընկնելու վտանգից:

Ահա ես բոլոր բաները պետք ե հասկա-
նան ու ըմբռնեն մեր բատրակ ընկերները և որ
առաջ կազմակերպվեն Հող-անտառ միության
մեջ:

Դրա մեջն ե կայանում միայն բատրակի
փրկությունը:



ԱՇԽԱՏԱՆՔԸ ԳՅՈՒՂԻ ԽՆԴ- ՃԻԹ-ԸՆԹԵՐՑԱՐԱՆՈՒՄ ԱՆԿՐԱԿԻՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱՑՈՒՄԸ

Անգրագիտությունը մի մեծ ցավ ե մեր
Խորհրդային իշխանության համար: Ամենքը
շատ լավ գիտեն, թե վորքան դժբախտություն-
ների պատճառ են դառնում սգիտությունն ու
նախապաշարմունքը:

Այդ պատճառով ել Խորհրդային իշխանու-
թյունը վճռել ե, ինչ ել վոր լինի, մինչև 1927
թիվը, այսինքն մինչև Հոկտեմբերյան հեղափո-
թյան 10-րդ տարեդարձ, Խորհրդային Ֆեդերա-
ցիայում իսպառ վերացնի անգրագիտությունը:

Ներկայումս սմբողջ Խորհրդային Ֆեդե-
րացիայում կան 17 միլիոնի չափ անգրագետ-
ներ: այս բոլորին գրագետ դարձնելը, իհարկե,
դժվար խնդիր ե, բայց ինչ գնով ել լինի՝ պետք

ե իրագործել, քանի վոր դա մեզ համար մահու
և կյանքի խնդիր ե:

Մի պարզ որինակ բերենք, վոր համոզիչ
լինեն մեր ասածները:

Բելգիայում ամեն մի հազար հոգու մեջ
կա 2 անգրագետ, այնտեղ մեկ գեսյատինից ըս-
տացվում ե 147 փութ բերք, 10 հազար մար-
դուց մեռնում ե 58 հոգի:

Իսկ մեզ մոտ Հայաստանում և Ռուսաս-
տանում ինչպէս ե:

Մեզ մոտ հազար հոգուն ընկնում ե 768
անգրագետ, 1 գեսյատինից ստացվում ե 51 փ.
բերք, 10 հազար մարդուց մեռնում են 635 հո-
գի:

Տեսնում եք, թե վորպիսի մեծ տարբերու-
թյուն կա գրագետ յերկրի բնրքի ու մահացու-
թյան թվերի մեջ՝ համեմատած անգրագետնե-
րով լիքը յերկրի հետ:

Ահա այս չարիքը պիտի աշխատել արմա-
տախիլ անել. կառավարութիւնը տրամադրում
ե գյուղին թե ուսուցիչ և թե գրենական (մա-
տիտ, տետր և այլն) պիտույքներ, մնում ե, վոր
գյուղացիք, առավելապէս ըստրակները ըմբռ-
նելով գիր ու գրականության ոգուտը, մտնեն
ա յգ անգրագիտության կայաններն ու սո-
վորեն:

ԻՆՉՊԵՍ ԿՍԶՄԱԿԵՐՊԵԼ ՅԵՎ ԱՇԽԱՏԵԼ ԽՐՃԻԹ-ԸՆԹԵՐՑԱՐԱՆՆԵՐՈՒՄ

Կարմիր բանակայինը յերբ գյուղ ե վերա-
դառնում, նա պիտի աշխատի իր գիտեցածն ու
սովորածը սովորեցնել նաև գյուղացիներին,
գեղջկուհիներին և յերեխաներին:

Գյուղում քաղաքական ու կրթական աշ-
խատանքների կենտրոնը լինելու ե խրճիթ-ըն-
թերցարանը, ենտեղ գյուղացին պետք ե ստա-
նա իրեն հետաքրքրող բոլոր հարցերի պատաս-
խանը:

Վոչ մի գյուղ չպետք ե մնա առանց խըր-
ճիթ-ընթերցարանի:

Դեռ 1922 թվի մայիսին Ռուսաստանի Կո-
մունստական Կուսակցության Կենտրոնական
Կոմիտեն հրամայեց կուսակցական բոլոր կազ-
մակերպութիւններին և քաղաքական լուսավո-
րության վարչութիւններին անպայման գյուղ-
դերում կազմակերպել խրճիթ ընթերցարաններ:

Մեզ մոտ արդեն այդ աշխատանքը սկըս-
ված ե այս տարի միայն Յերևանի գավառն
արդեն ունի 65 խրճիթ-ընթերցարան. ամբողջ
Հայաստանում կազմակերպված են 200-ից ավելի
խրճիթ-ընթերցարաններ. բայց այդ, իհարկե, դեռ
չի բավարարում յեղած պահանջին:

Ինչպես ասացի՞ք, սիրտի աշխատել, վոր ամեն գյուղ ունենա իր խրճիթ-ընթերցարանը: Խրճիթ ընթերցարան ունենալը բավական չե. պիտի ախատել նախ ունենալ խրճիթ-ընթերցարանի հատուկ շինք և ապա ստեղծել մի վարչութուն, վորը մշտապես ղեկավարի խրճիթ-ընթերցարանի աշխատանքները, իսկ մեկին պիտի նշահակել վարիչ, վոր մշտապես նրա տեղի խրճիթ ընթերցարանում ու հսկի:

Բացի այդ պիտի աշխատել ստեղծել խրճիթ-ընթերցարանի ֆոնդ՝ հատկացնելով վորոշ հողամաս, վորպեսզի միանգամ ընդմիջտ ապահովեք նրան նաև տնտեսապես:

ԻՆՉ ԱՆԵԼ ԽՐՃԻԹ ԸՆԹԵՐԳԱՐԱՆԸ ՈԳՏԱՎԵՏ ԴԱՐՁՆԵԼՈՒ ԿԱՄԱՐ

Վորպեսզի խրճիթ-ընթերցարանը միայն անուճով չլի՞ի խրճիթ-ընթերցարան, անհրաժեշտ է.

1) Գյուղի միջոցներով ձեռք բերել լրագիրներ, առաջին հերթին «Մաճկալ»-ը և ապա նրա հրատարակած գրքերը, վորոնք վերաբերում են գյուղատնտեսական զանազան ճյուղերի գիտականորեն մշակելուն:

2) Վորովհետև բոլոր խրճիթ-ընթերցարան-

ները չեն կարող ունենալ այնպիսի գրքեր, վոր բավարարեն գյուղի պահանջներին, այդ պատճառով խրճիթ-ընթերցարանի վարիչը պետք է շարունակ կապ պահպանի շրջալի բոլոր կազմակերպություններին և սրանց միջոցով գավառայինի հետ՝ ստանալով համապատասխան նոր գրականություն:

3) Ամեն որ կազմակերպել բարձրաձայն ընթերցում խրճիթ-ընթերցարանը գրավելով անգրագետ գյուղացիներին: Այդ նպատակով պետք է գյուղի սեփեղ գրագետներից կազմել ընթերցողների խմբակ, վորի անդամները հերթով պետք է գյուղացիների համար կարդան որվա լրագիրներն ու ապա փոքրիկ գրքերը՝ բացառելով նրանց ելութունը:

4) Ընթերցումից հետո պետք է կազմակերպել զրույցներ. զրույցի նյութը կարելի յե վերցնել թե՛ լրագրներից և թե՛ գրքերից:

5) Խրճիթ-ընթերցարանի վարիչը զեկուցման, զրույցի, ընթերցման և քաղաքական լուսավորության ձեռնարկների համար ագիտացիա մղելու նպատակով պետք է սգտագործի գյուղը մտնող ամեն մի հրահանգչի, դասախոսի, քաղաքի բանվորի, կոպերատիվի, հարկային լիազորի, գյուղատնտեսի և կամ արձակուրդով յեկած կարմիր ուսանողի:

6) Պիտի աշխատել բոլոր գյուղացիներին տալ իրենց հուզող հարցերի պատասխանը: Չը պետք է գլխին զոռ տալով հնարել ենպիսի հարցեր, վորոնք պուղին քիչ են զբաղեցնում ու հետաքրքրում:

Խրճիթ-ընթերցարանի գլխավոր հոգսը պիտի լինի գյուղացիների մեջ տարածել գյուղատնտեսական գիտելիքներ և հոգուտ գյուղատնտեսական կոպերացիայի պրոպագանդա մղել: Այդ նպատակի համար պիտի ոգտագործել, ինչպես վերելը ասվեց, «Մաճկալ»-ը և գյուղատնտեսական գրքերը:

ՆՈՐ ԿԵՆՑԱԼԸ

Մեր գյուղը, վոր շատ հետամնաց է, պետք է իսկապես վոր մի քիչ թափ տալ՝ սովորեցնել նոր կենցաղին:

Այդ պատճառով պիտի հաճախ կազմակերպել նոր կենցաղի յերեկոներ, ինչպիսիք են՝ հասարակական կնուները, զվարճութունները, ևայլն, աշխատելով մասնակից դարձնել գյուղի կանանց և աղջիկներին:

Տոներին պիտի կազմակերպել քաղդատեր, վորի միջոցով ավելի հեշտ կլինի գյուղացիությանը ծանոթացնել զանազան յերեկոյթներին հետ:

Տեղերում առաջ բերել ուժեղ նախաձեռնություն, վորից հետո կենտրոնը իր հերթին կզա նրանց աջակցության:

ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄՆԵՐ ՅԵՎ ՅԵՐԵԿՈՒՅԹՆԵՐ

Խրճիթ ընթերցարանում կենցաղային տարրը ուժեղացնելու և աշխատավոր մասսային խրճիթ-ընթերցարանին ավելի սերտ կապելու համար պիտի հաճախ կազմակերպել գեղարվեստական յերեկոներ. այդ պատճառով անհրաժեշտ է —

1) Բեմադրել նոր պիեսներ (վերջերս Հայաստանի քաղրուսվարը հրատարակել է իրեք ագիտ-պիեսներ, վորը և ուղարկված է տեղերին):

2) Աշխատել բազմացնել և ունենալ նաև նոր յերգեր՝ կազմելով աշակերտությունից յերգեցիկ խմբեր:

3) Տեղի ընդունակ և աչքի ընկնող աշակերտությունից կամ գյուղի յերիտասարդներից կազմել թատերական խումբ՝ մշտապես ներկայացումներ տալու համար:

ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՋՈՐԱՅՐՎԱԾ ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿԱ- ՅԻՆՆԵՐԻՆ

Չորացրման պատճառով տունն արձակվող կարմիր բանակայինները իրավունք ունեն։---

Գործ գտնելու համար Աշխատանքի Բորսայում ցուցակագրվելու դեպքում, աշխատանքի ուղարկվել հերթից դուրս այն պայմանով, վոր Աշխատանքի Բորսայում ցուցակագրված լինեն արձակուրդ ստանալուց հետո յերկու ամսվա ընթացքում։

Աշխատանքի բորսաները, յերբ միլիցիայի պաշտոնների ցուցակ են կազմում, պարտավոր են միլիցիոնների պաշտոններին ուղարկել առաջին հերթին տունն արձակված կարմիր բանակայիններին։

Կոպերատիվ ընկերություններին տունն ար-

ձակված կարմիր բանակայինները անդամագրվում են առանց մուտքի վճարի։

Առողջապահական բաժնի տեղական մարմիններից ձրիապես բժշկական ոգնություն են ստանում թե իրեն համար և թե իր խնամքի տակ բնտանիքի բոլոր անդամների համար։

Վերև հիշված իրավունքներից ոգտվում են բոլոր տունն արձակված կարմիր բանակայինները։ Բացի այդ, չթավսրության դեպքում, նա իրավունք ունի։

Ազատվել տուրքերից ու հարկերից։ Չըվճարել ձեռնարկային տուրքը, յեթե մտնում են աշխատավոր արտելների մեջ։ Հողժողկոմի վարձու կայաններից ձրիապես և արտոնյալ ձևով ոգտվելու գյուղատնտեսական մեքենաներից և գործիքներից։ Հողժողկոմի Անտառային Վարչության տեղական մարմիններից կես գնով շինության համար փայտ վերցնել։

Գյուղացիական փոխադարձ ոգնության կոմիտեներից ամեն տեսակի ոգնություն ստանալ իրենց չթավոր տնտեսությունը վերականգնելու համար։

Վերև հիշված բոլոր արտոնություններից ոգտվելու համար գորացրված կարմիր բանակայինները պարտավոր են իրենց հետ ունենալ

նագմա-հաշվեառման անձնական գրքույկներ, իսկ չքավորները, բացի այդ, իրենց չքավորութեան մասին պիտի տեղական Գործկոմից կամ Սոց. Ապահովութեան մարմիններից վերցրած վկայականներ ունենան:

Վերև հիշված այս բոլոր վերոշումները հաստատված են բարձրագույն հիմնարկների կողմից:

ԲԱՆԱՁԵՎ

ԸՆԳՈՒՆՎԱԾ Հ. Հ. ԳԻՎԻԶԻԱՅԻ ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿԱՅԻՆ ԱՆԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՒՄԱՐՈՒՄ Ս. Թ. ՄԱՐՏԻ 21-ԻՆ

Հսելով ընկ. Սաֆրազրեկյանի գեկուցումը տուն արձակվող կարմիր բանակայինների և բանակի 7-րդ տարվա խնդիրների մասին, համագումարը գտնուեմ է, վոր բանակի 7-րդ տարին կարմիր բանակայինների համար անցնելու յե ապագայի և բարձրագույն ուսմունքը խորացման նշանի տակ:

Մեր թշնամիների կողմից իրավական ճանաչումը մեր շարքերում ազգական ուժի վոչ մի թուլացում չպիտի առաջացնի: Խորհրդա-



Հ. Հ. ԳԻՎԻԶԻԱՅԻ Կ. ԲԱՆԱԿԱՅԻՆ ԱՆԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ 3 րդ ԿԱՐՄԱՐԵՄԱՐԻ
ԵՊԱՏՔԱՄԱՎՈՐՈՒՄԵՐԸ 20 մարտի 1924 թ. ՖԵՐԵՎԱՆ

յին լերկրների հիմնական ապահովութիւնը ինչպէս առաջ ասն պես ել հիմա պետք է վնասել կարմիր Բանակի ուժի մեջ

Տուն արձակվող կարմիր բանակայինները հիմնական խնդիրներն են լինելու կարմիր Բանակում ձեռք բերած գիտելիքները դյուզերում տարածելը:

Զորացրման յենթարկված կարմիր բանակայինը դյուզում պետք է լինի խորհրդային իշխանութիւն կառուցման գործում ամենաակտիվ քաղաքացին:

Լենինի ավանդներն անմիջական կիրառողները գյուղում պիտի բանակից տուն արձակվող կարմիր բանակայինները հանդիսանան:

Կեցցե՛ խորհրդային յերկրների պաշտպան կարմիր Բանակը:

Կեցցե՛ կարմիր բանակայինը, վոր գյուղերում Լենինի ուսմունքի շահակիրն է լինելու:



ԲԺՅԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐ

Խորհրդային իշխանութիւնը աշխատավորների առողջապահութիւն մասին շատ է հոգում: Նա վոչ մի ջանք չի խնայում բազմական քանակութեամբ դեղեր ու բժիշկներ հասցնելու գյուղացիներին: Բայց ինքը՝ գյուղացին ևս պետք է հասկանա, թե ինչ պիտի անի առողջ լինելու համար, կամ ուրիշ խոսքով, կատարի առողջապահութիւն պահանջները:

ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՎԱՐԱԿԻՉ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ամեն մի վարակիչ հիվանդութիւն իր ձեւի մանրեներն (աչքով անտեսանելի կենդանիներ) ունի: Մարդ վորևէ վարակիչ հիվանդութեամբ հիվանդանում է միայն այն ժամանակ, Լերը մանրեները նրա արյան մեջ են մտնում և այնտեղ բազմանում: Մանրեները կարող են մարդուս արյան մեջ մտնել ողի, ջրի և կե-

ըրակրի միջոցով: Մանրենները մտնում են նաև միջատների ու վերքի միջոցով, վոշիւր, լուն, մոծակը կծում են հիվանդին, անցնում առողջի մարմնի վրա և վարակում առողջին:

Բայց վարակված մարդը միտոեասակ չի հիվանդանում: Դիցուք վարակված վոշիւր կծել է յերկու առողջ մարդու, նրանցից մեկը կարող է հիվանդանալ և մեռնել, մյուսը ամենևին չհիվանդանալ. ինչիցն է դա: Դա նրանից է, վոր առաջինի մարմինը թույլ էր, նրա առողջությունը քայքայված էր, նա կեղտոտ և ընդհանրապես վատ պայմաններում էր, չկարողացավ դիմադրել մանրենների հարձակմանը: Սրանք հաղթեցին, մտան արյան մեջ, արագ բազմացան և զավթեցին մարդուն: Մյուսը ավելի առողջ էր, դիմացկուն, մաքուր էր, և նրա մարմինը կովեց մանրենների դեմ, չթողեց վոր սըրանք ներս մտնելով բուն դնեն և բազմանան և... առողջ մնաց: Մարդիկ այդ մանրենների և մարմնի կռիվը չեն զգում, նրանք չեն իմանում, վոր ամեն որ նրանք թշնամու հարձակման են յենթարկվում, չեն հասկանում, թե վտանգը յերբ և վորտեղ է վրա հասնելու, դրա համար էլ միշտ պիտի պատրաստ լինեն, այսինքն միշտ զգուշ պիտի լինեն և իրենց առողջության վրա ուշք դարձնեն:

Գիտության ձեռքին մի ուժեղ զենք էլ կա

վարակիչ հիվանդությունների առաջն առնելու, նրանց դեմ կովելու համար. դա նախազգուշացան պատվաստումն է: Ով պատվաստված է նա այդ հիվանդությամբ վարակվել չի կարող: Պատվաստումները սեղանում յեղան միայն ծաղիկ հիվանդության համար:

Այժմ արդեն պատվաստում են ծաղիկի, խոլերայի, տիֆի, կատաղության, բուզուռոցի և մի քանի ուրիշ հիվանդությունների դեմ: Պատվաստել նշանակում է մարդու արյան մեջ մտցնել հիվանդության ուժեց ընկած կամ մեռած մանրենները Պատվաստումից հետո մարդկանց մարմինը սովորում է մի քանի տարի շարունակ հաջողությամբ կովել մանրենների դեմ, և այն հիվանդությունը, վորի վարակը պատվաստված է այդ մարդուն, այլևս չի ազդում նրա վրա:

Թ Ո Ք Ա Ն Տ Ը

Վարակիչ հիվանդություններից ամենասարսափելին թորախտն է (չախտական): Գիտության ասելով մարդկության մի յոթերորդ մասը վարաված է թորախտով:

Առանձնապես շատ է վարակվում այդ հիվանդությամբ չբավոր, աշխատավոր դասակարգը: Թորախտից վարակվում են մեծ մասամբ ողով: Հիվանդի խորխի (բղամի) մեջ

մեծ քանակութեամբ թողախտի մանրենիք են լինում. նա թքում ե գեանին, խորխը չորանում ե, մանրենները փոշու հետ բարձրանում են ողի մեջ և մանում առողջների թոքերը: Բայց այդ մանրենները կարող են ըն նել և աղիքները, այդ դեպքում առաջացնում են աղիքների բարակացավ, վոսկորի մեջ առաջ են բերում վոսկրակեր (իլանջուղ): Նա թեև ծանր հիվանդութունն ե, բայց նրանց կարելի յե բժշկել: Դեղերը այդ հիվանդութիան վրա այնքան չեն ազդում, ինչքան լավ սնունդը, հանգիստ կյանքը, մաքուր ոդը:

Թոքախտը շատ մեծ չարիք ե և նրա դեմ պիտի կռվեն բոլորը: Իսկ լավ գիտակցելով այդ հիվանդութիան տարածվելու պատճառը, նրա դեմ կռվելը դժվար չե: Դրա համար ամենից առաջ մաքրութունն ե պահանջվում. մաքուր բնակարան, մաքուր ոդ, մաքուր մարմին և մաքուր հագուստ: Վորովհետև վարակը խորխի միջոցով ե տարածվում, չպիտի յերբեք թքել գեանին կամ ուրիշի բերանի գդալը գործածել:

ՄԱԼԵՐԻԱ (ԳՈՂԵՐՈՑԲ)

Հայաստանում թոքախտից պակաս չափով չի տարածված, գուցե նրանից և շատ ավելի՝ մալերիան: Ճիշտ ե, այդ հիվանդութունը թոքախտի պես վտանգավոր չե, վոչ ել այնքան

մահացու, բայց նույնպես սաստիկ վնասներ ե հասցնում բնակչութիանը: Նա հալումաջ ե առնում հիվանդին և չափազանց թուլացնելով նրա մարմինը, հետ ե գցում աշխատանքից: Բացի այդ, ինչպես տեսանք վերը, ուժից ընկած մարդը շուտ ե վարակվում զանազան հիվանդութիւններով և չի դիմանում հիվանդութիանը: Այնպես վոր՝ մալերիան սկիզբ ե դառնում զանազան հիվանդութիւնների:

Մալերիայի վարակողը մի տեսակ մոծակ ե, վորը կծելով, հիվանդից վարակը տանում և առողջին ե տալիս: Այդ պատճառով ամենալավ միջոցը մալերիայի դեմ կռվելու համար մոծակներից պաշտպանվելն ու նրանց կտորելն ե: Մոծակներին կարելի յե կտորել նապթ լքցնելով այն լճերն ու ճահիճները, վորտեղ սովորաբար նրանք իրենց ձվերն են դնում: Իսկ ավելի լավ միջոցն ե չորացնել ճահիճները: Հիվանդանալու դեպքում չպիտի հիվանդութիան վրա թեթև աչքով նայել, չպիտի ասել «Ինքն իրան կանցնի», այլ հարկավոր ե բժշկին դիմել և յերկար ժամանակ ամենապակասը մի յերկու ամիս կանոնավոր բժշկվել:

ՄՈՂԵՐԱՆ

Սուր վարակիչ հիվանդութիւններից մեկը խոլերան ե:

Վերջին 10 տարվա ընթացքում Ռուսաստանում մեծել է խոլերայից հարյուր հազար մարդուց ավելի: Քաղաքակրթված յերկրներում խոլերան այլևս չի կարողանում այդպիսի հունձ կատարել, Ինչո՞ւ. վորովհետև նրանք կարողացել են հաջողութամբ կռվել խոլերայի դեմ և իրենց յերկրներին դուրս բերել այդ հիվանդութունը:

Խոլերայով չի կարելի վարակվել ուղիւ: Խոլերայի մանրէներն անպատճառ պիտի ընկնեն ստամոքսի մեջ, վոր վարակեն: Նրանք ստամոքսը մտնում են սնդեղենի (ուտելիքի), մանավանդ, սրգեղենի, հում ջրի և այլ կերակուրների միջոցով:

ԻՆՉՊԵՍ ՊԻՏԻ ՊԱՇՏՊԱՆՎԵԼ ԽՈԼԵՐԱՅԻՑ

Խոլերայի ժամանակ պիտի միշտ հիշել հետևյալ կանոնները.

1) Հետևել շարունակ, թե ինչպես է գործում ստամոքսը (ստամոքսի փոքրիկ հիվանդության ժամանակ անմիջապես բժշկի դիմել)

2) Այսպիսի կերակուր չբանեցնել, վորը կարող է ստամոքսը խանգարել (փորացավ առաջացնել):

3) Չյեռացրած հում ջուր չխմել:

4) Միայն լավ յեփած կերակուր ուտել:

5) Կերակուրը և ամանեղենը ծածկել ճանձերից:

6) Ուտելուց առաջ ամեն անգամ սապոնով լավ լվանալ ձեռքերը:

7) Ամանեղենը լվանալ տաք ջրով:

8) Արտաքնոցները լավ մաքուր պահեք և շարունակ կիր լքցրեք:

9) Խոլերա յերևացած որից պատվաստվեցեք խոլերայից:

ԲՄԱՎՈՐ ՏԻՓ

Պատերազմից անմիջապես հետո 1919, 1920, 1921 թվականներին Հայաստանում սարսափելի չափերով տարածվեց բժավոր տիֆը: Բայց միայն Հայաստանումը չեր նա. Ռուսաստանում այդ նույն տարիներում բժավոր տիֆով հիվանդացավ 6 միլիոնից ավելի ժողովուրդ: Բժավոր տիֆի վարակողը վոշին է: Ուրեմն, յեթե ուզում ենք կռվել այս հիվանդության դեմ, մենք բոլորից առաջ մեր կռիվը պիտի սկսենք վոշիների դեմ, վորովհետև, յեթե մեզ հաջողվի վոշնչացնել վոշիլը, մենք դրանով արդեն վոշնչացրած կլինենք հիվանդության տարածվելու միջոցը: Իսկ ինչպես կարելի յե կռվել վոշիի դեմ: Մաքրությամբ և միայն մաքրությամբ: Վոշիլը միայն կեղտոտ մարդանց վրա յե լինում: Հարկավոր է շուտ-շուտ լողանալ, սպիտակեղենը ժամանակին փոխել, մազերը խու-

զած պահել: Այն օրը, յերբ մեր յերկրից վերանա կեդարը, կվերանա փոշիլը. և այն ժամանակ բժավոր տիֆ ել չի լինի:

Բժավոր տիֆով հիվանդացողներից նույնպես հավասարապես բոլորը չեն մեռնում: Դարձալ հիվանդութեանը դիմանում ե նա, ով ամրակազմ մարմին ունի, առողջ թոքեր ու սիրտ, մի խոսքով նա, ով հիվանդանալուց առաջ ուշք ե դարձրել իր առողջութեան վրա: Այդ հիվանդութեան ամենեւին չեն դիմանում մանավանդ հարբեցողները, վորոնց մարմինը խմելուց ջայթած ե լինում, թեկուզ տեսքով առողջ ել յերևալիս լինին:

ՎԵՆԵՐԱԿԱՆ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Վարակիչ հիվանդութիւնների թվին են պատկանում նաև վեներական հիվանդութիւնները: Սրանք այն հիվանդութիւններն են, վորոնցով մարդիկ հիվանդանում են կամ վարակում իրար մեծ մասամբ կանանց հետ սեռական հարբերութիւն ունենալու ժամանակ: Վեներական հիվանդութիւնները խոր արմատ են գցել քաղաքներում, մանավանդ չքավորների մեջ և ավելի մեծ վրասներ են հասցնում մարդկութեան, քան թե խոլերան կամ բժավոր տիֆը: Նրանց դեմ կռիւլը շատ ավելի դժվար ե, քան

թե մյուս վարակիչ հիվանդութիւնների դեմ: Ինչո՞ւ. վորովհետև հիվանդը ամաչում ե իր հիվանդութիւնից, բժշկի չի դիմում, տարիներ շարունակ տանջվում ե և շարունակ ուրիշներին վարակում: Յուրաքանչյուր գիտակից քաղաքացի պիտի միշտ հիշէ, վոր հիվանդութիւնը խայտառակութիւնն չե, այլ դժբախտութիւն, վոր ամոթ ե վոչ թե բժշկին դիմելն ու ցավը բժշկելը, այլ իր հիվանդութիւնը ուրիշներէջ ծածկելը: Ծածկելով հիվանդութիւնը և բոլորից թագուն ուրիշներին վարակելով հիվանդը մարդասպանութեան հավասար հանցանք ե կատարում: Բանի դեռ հիվանդը կատարելապես չի առողջացել և բժշկից թույլատվութիւնն չի ստացել, նա չպիտի վոչ մի կնոջ մոտենա:

Միայն բոլորի կողմից այսպիսի գիտակից վերաբերմունքի շնորհիվ մենք կարող ենք ընդհանուր օւժերով կռվել վեներական հիվանդութիւնների դեմ:

ՏՐԻՊԵՐ (ՍՈՒՍՆԱԿ)

Վեներական հիվանդութիւններից չափազանց տարածված ե նաև տրիպերը (սուսանակը): Նա նույնպես տարածվում ե մանրէների միջոցով, վորոնք առողջ մարդու մարմնի մեջ մտնում են միայն սեռական հարբերութեան միջոցով:

Վարակվելուց 2-5 որ անց միգասեռական անցքերից սկսում է թարախ դալ. անդամը կարմրում է և միզելու ժամանակ ցավում: Բայց յերկար ժամանակ թե թարախը և թե ցավը այնքան չնչին են լինում, վոր հիվանդին շատ չեն անհանգստացնում: այդ պատճառով ել հիվանդության վրա ուշադրություն չեն դարձնում ու բժշկի մոտ չեն գնում: Բայց քանի գնում հիվանդությունը ավելի յե հիմնավորվում և յերկարատեպ է դառնում: Հնացրած հիվանդությունը ավելի դժվար է բժշկվում: Նա շատ ծանր հետևանքներ ել է ունենում: Ամենավտանգավորն այն է, վոր թարախը ձեռքի միջոցով հանկարծ կարող է ընկնել աչքը և կուրացանել հիվանդին: Տրիպերը ուրիշ շատ ծանր հետևանքներ է ունենում, վորոնք քայքայում են հիվանդի առողջությունը: Տրիպերը բժշկվում է և քանի շուտ է հիվանդը բժշկին դիմում, այնքան շուտ ել նա բժշկվում է:

Ս Ի Փ Ի Լ Ի Ս

Վններական հիվանդությունների մեջ ամենատարածվածը և վտանգավորը սիֆիլիսն է: Ինչպես վերև ասացինք՝ հիվանդները թագցնում են իրենց հիվանդությունը և այդ պատճառով ճիշտ հաշվել, թե ինչքան մարդ է դրանով հի-

վանդ, դժվար է, բայց յեղած տեղեկություններով, այդ հիվանդությունը որ որի վրա աճում է:

Ինչպես և բոլոր վարակիչ հիվանդությունները, սիֆիլիսն ունի իր մանրենները, վորոնցով և վարակվում են մարդիկ: Վարակվուց մի երեք շաբաթ անց վարակված տեղում մի փոքրիկ ամուր վերք է առաջանում: Քանի գնում մարմինն ամբողջովին սկսում է թունավորվել և քայքայվել: Չանցած մի 6 ամիս, վարակվածի մարմնի վրա պղուկներ են դուրս գալիս, հետո ել վերքեր, վորոնցից կարող է փթել և ընկնել քիթը: Սիֆիլիսը կարող է նաև խելագորություն առաջացնել:

Բոլորից շատ սիֆիլիսով հիվանդանում են վարակված կնոջ հետ սեռական հարաբերություն ունենալուց: Բայց սիֆիլիսը ուրիշ ճանապարհներով նույնպես կարող է տարածվել: Հիվանդի բանեցրած շորերը, սպիտակեղենը, մանավանդ յերեսաբրիչը, ամանեղենը, գդալը, գավաթը, բոլորն ել կարող են վարակել: Ինչպես, հիվանդի գործածած իրերի վրա կարող են մնալ մանրեններ, վորոնք հետո անցնում են առողջի բերանում կամ կաշվի վրա գտնված մի չնչին վերքից, ճեղքվածքից: Այս ձևով կարելի յե նաև

վարակվել համբուլրի միջոցով, ծխախոտից և այլն:

Սիֆիլիսի ամենավատ հատկութիւնն ել նա յե, վոր այդ հիվանդութիւնը ժառանգական ե. այսինքն հիվանդ ծնողներից հիվանդութիւնը նրանց զաժակներին ե անցնում և դեռ լույս աշխարհ չեկած յերեխան արդեն հիվանդ ե լինում:

Սիֆիլիսը այժմ բժշկվում ե, բայց դրա համար հարկավոր ե, վոր հիվանդը չհնադնի իր հիվանդութիւնը, կամ ուրիշ խոսքով՝ չթողնի, վոր նրա ամբողջ մարմինը թունավորվի և հետո միայն բժշկի դիմի: Քանի շուտ նա սկսի բժշկվել, անքան ավելի շուտ կազատվի այդ ցավից: Բժշկութիւնը յերկար ժամանակ ե պահանջում, շատ անգամ կանոնավոր բժշկվելու համար տարիներ են պետք:

Բայց հիվանդը դրանից չպիտի հուսահատվինա պիտի հիշի, վոր բժշկվելով նա ազատում ե վոչ միայն իր սեփական կյանքը, այլ այն հարյուրավոր մարդկանց կյանքերը, վորոնց նա կարող ե վարակել, յեթե լուջ կերպով չբժշկվի:

ԻՆՉ ԿԱՐԴԱԼ ԳՅՈՒՂՈՒՄ

1. Ինչ ե ասել Լենինը գյուղացիներէ— Տերյան
2. Գյուղական կոմունա— Բիլ
3. Կարմիր դրոշակ և ազգերի յեղբայրութիւն— Պետրովսկի
4. Ինչ անել գյուղում.
5. Հարկավոր ե արդյոք բանվորներին և գյուղացիներին սեփական զօրք և ինչի համար— Տոպոլեվ
6. Դեպի Միութիւն կարմիր դրոշակը— Սկար
7. Կոմունիզմի այբուբենը — Բոխարին յեվ Պրյորաժեկսկի
8. Գյուղական համայնքից դեպի սոց. կոմունա— Բիլ
9. Քաղաքական գրագիտութիւն— Կոլչաշենկո
10. Ովքեր են կոմունիստները— Պանիկուկ
11. Ինչու յես սովետական կառավարութիւն պաշտպան դարձա— Բյուկին
12. Ինչու համար յես կոմունիստ դարձա— Բերվշինա
13. Կոմունայի նահատակները— Արևո
14. Ազգային հարցը և կոմունիզմը
15. Ինչպես են ծնվում աստվածները՝ Յարոսլավսկի
16. «Մահալ»-ի գրադարան №№ 1, 2, 3, 4, 5, 6,
17. Ն. Լենին— Զինովյեվ
18. Վլադիմիր Իլիչ Ուլյանով— Լաշո

ՄԻ ՔԱՆԻ ԿԱՐԵՎՈՐ ՀԱՍՑԵՆԵՐ

ԳՐԻՐ — ԿՊԱՏԱՍԽԱՆԵՆ

«ԿԱՐՄԻՐ ԶԻՆՎՈՐ»-ի և «ՄԱՃԿԱԼ»-ի խմբագրու-
թյուն, Յերևան, Ռուբենի փ. № 2

Հ. Հ. ԴԻՎԻԶԱՅԻ ՔԱՂԲԱԺԻՆ, Յերևան

Լենինի փ. № 44

ՀՈՂԺՈՂԿՈՄՍ, Յերևան, Աբովյան № 18

ՀԱՅԿԵՏԳՈՐԾԿՈՄ, » Լենինի № 49

ԶԻՆԿՈՄԻՍԱՐԻԱՏ, » Գնունի № 8

ՀԱՅԿՈՊ, » Զափարիձեյի

հրապ. № 3

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍ. ՔԱՆԿ, » Նալբանդյան № 2

ԳՐԱԽՏ, » Աբովյան № 18

ԼՈՒՍԺՈՂԿՈՄՍ, » Նալբանդյան № 62



ՀԵՂԱՓՈՒՈՒԹՅԱՆ ՈՐԱՑՈՒՅՑ

1919 թ. հունվարի 18. Այդ որը Բերլինի
բանվորները Խորհրդային իշխանություն ստեղծելու համար ապստամբություն բարձրացրին: Այդ կռիվներում ընկան հազարավոր բանվորներ: Գերմանական հեղափոխական բանվորների ղեկավարները՝ Կարլ Լիբկնեխտը, Ռոզա Լյուկսեմբուրգը և Տրչկո Յոդիենտը:

1924 թ. հունվարի 21. Մոսկվայից 40 վերստ տարածության վրա, Գորկա գյուղում մեռավ Ն. Լենինը, նա, վորը կանգնած էր հեղափոխության գլուխը, ապստամբ բանվորներին և գյուղացիներին կովի լողուններ էր տալիս, նեկավարում, նա, վոր յերկաթե ամբողջուն տվավ բաղնիկական կուսակցության ու վերջապես ստեղծ ց խորհրդային կարգեր:

1905 թ. հունվարի 22 (հին տոմարով հունվարի 9): Պետերբուրգ քաղաքի բանվորները

մեծ բազմութեամբ գնացին կայսր Նիկոլայ II-ի մոտ խնդրելու, վոր իրենց ծանր դրութիւնը թեթեւացնի: Նրանք հավատում էին ցարին, ու քահանաների առաջնորդութեամբ խաչ ու խաչվառով նրա մոտ գնացին: Ցարը հրամայեց կրակել խաղաղ բանվորներին վրա: Տեղնուտեղն ընկան շատ սպանվածներ ու վիրավորներ: Բանվորներն այդ գնդակահարութեանը գործադուլներով պատասխանեցին ամբողջ յերկրում: Հունվարի 22-ը համարվում է 1905 թ. Ռուսագոտանի առաջին հեղափոխութեան սկիզբը:

1918 թ. փետրվարի 23. Այդ որը հրատարակեց Խորհրդային իշխանութեան առաջին դեկրետը (որենքը), հեղափոխական բանվոր-գյուղացիական կարմիր բանակ ստեղծելու մասին, աշխատավորների բնդհանուր գինվորական ծառայութեան հիմունքներով: Փետրվարի 23-ը համարվում է կարմիր բանակի հիմնելու որը:

1919 թ. մարտի 5. Այդ որը Մոսկվա քաղաքում հավաքվեց հեղափոխական բանվորների համաշխարհային առաջին կոնգրեսը (համագումարը): Այդ մեծ ժողովում կոմունիստական Իստերնացիոնալի, բանվորների միջազգային ընկերութեան հիմքը դրվեց: Նրա գոյութեան հնգամյակը տոնվեց 1924 թ. մարտի 1-ին:

1917 թ. մարտի 12. Այդ որը Պետրոգրադի

քաղաքի բանվորներն ու գինվորները բացարձակ ապստամբութեամբ տապալեցին ցարի իշխանութիւնը, վորը ճնշում, հարստահարում էր միլիոնավոր բանվորներին ու գյուղացիներին: Այդ հեղափոխութեանից հետո իշխանութիւնն անցավ գործարանատերերի ձեռքը: Բանվորներն իրենց իշխանութիւնը ստեղծելու համար կազմեցին Խորհուրդները:

1871 թ. մարտի 18 (այսինքն 50 տարուց ել ավելն առաջ), Ֆրանսիայի մայրաքաղաք Պարիզի բանվորները ապստամբութիւն բարձրացրին բուրժուազիայի դեմ և կազմեցին առաջին կոմունան: Գեներալ Գալլիֆեն շարժեց Պարիզի այդ կոմունան: Տասնյակ հազարավոր բանվորներ գնդակահարվեցին և վոչնչացան առժամանակիբ աշխատանքատեղերում:

1912 թ. ապրիլի 17 (հին տոմարով 4), Այդ որը Լենայի (Սիբիրում) վոսկու արդուներութեան հանքերի բանվորներն ընդհանուր գործադուլի ժամանակ հավաքվելով խաղաղ ժողովի՝ գնդակահարվեցին ցարի զորքերի կողմից, ժամադրմերիական սպայի հրամանատարութեամբ:

Մայիսի 1-ը, Այդ որը բանվորների համաշխարհային տոնի որն է, վորը հաստատված է 35 տարի առաջ 1889 թ. համաշխարհային բանվորների կոնգրեսում (վեհաժողովում): Այն

յերկրներում, վորտեղ իշխանութիւնը գտնվում է գործարանատերերի ձեռքին, բանվորներն այդ որը ցուցի յին գուրս գալիս, պահանջելով ութ ժամվա բանվորական որ և բուրժուական բանակների վոչնչացումն:

Կոմունիստական Առաջին շարժումը Հայաստանում: Շարժումը անմիջապես խեղդվում է, առաջնորդներից շատերը զազանաբար սպանվում են կամ բանտեր նետվում:

1923 հուլիսի 6. Սոց. Խոր. Հանրապետ. Միութիւն կազմելու որը, վորը բաղկացած է 1) ՌՄՖՍՀ Հան., 2) Ուկրաինայի ՍՄՀ, 3) Բելուսուսիայի ՍՍՀ Հանրապետ., 4) Անդրկովկասյան ՍՖՍՀ Հանրապետութիւններից, վորոնք ազատվել են ցարի, կալվածատերերի ու կապիտալիստների ճնշումից: (Այդ մասին ավելի մանրամասն տես «Իշխողութիւններ»-ի 71—76 կետերը):

Նոյեմբեր 7. Մեր Հոկտեմբերյան Մեծ Հեղափոխութիւնն առնելով, բուրժուազիայի ժամանակավոր կառավարութիւնն տապալումը, Խորհուրդների իշխանութիւնն հիմնվելով: 1917 թ. այդ որը (հին տոմարով հոկտեմբերի 25) առաջացավ Պետրոգրադի բանվորների ու կարմիր զինվորների ապստամբութիւնը և իշխանու-

թիւն գրավումը բանվորների ու կարմիր զինվորների Պետրոգրադի Խորհրդի կողմից:

Ամբողջ աշխարհի բանվորներն ու հեղափոխական գյուղացիներն այդ որը տոնում են վորպես համաշխարհային պրոլետարական հեղափոխութիւնն սկիզբը, վորը կազատե ամբողջ աշխատավորութիւնը կապիտալի ճնշումից:

1920 թ. Թվականի Նոյեմբերի 29-ին: Այդ որը Հայաստանը խորհրդայնացման յենթարկվեց: Դաշնակցականներից շատերը թողին Հայաստանը: Յերկիրը անցավ Կոմունիստական կուսակցութիւնն ձեռքը:

1920 թ. դեկտեմբերի 6: Այդ որը հիմք է դրվել Հայաստանի Կարմիր Բանակին: Այս տարի տոնեցինք դիվիզիայի յեռամյակը:



1 9 2 4

Ո Ր Ե Ր	ՅՈՒՆՎԱՐ	ՓԵՏՐՎԱՐ	Մ Ա Ր Տ
Կիրակի	6 13 20 27	3 10 17 24	2 9 16 23 30
Յերկուշաբթի	7 14 21 28	4 11 18 25	3 10 17 24 31
Յերեքշաբթի	1 8 15 22 29	5 12 19 26	4 11 18 25
Չորեքշաբթի	2 9 16 23 30	6 13 20 27	5 12 19 26
Հինգշաբթի	3 10 17 24 31	7 14 21 28	6 13 20 27
Ուրբաթ	4 11 18 25	1 8 15 22 29	7 14 21 28
Շաբաթ	5 12 19 26	2 9 16 23	1 8 15 22 29

Ո Ր Ե Ր	ՀՈՒԼԻՍ	ՈԳՈՍՏՈՍ	ՍԵՊՏԵՄԲԵՐ
Կիրակի	6 13 20 27	3 10 17 24 31	7 14 21 28
Յերկուշաբթի	7 14 21 28	4 11 18 25	1 8 15 22 29
Յերեքշաբթի	1 8 15 22 29	5 12 19 26	2 9 16 23 30
Չորեքշաբթի	2 9 16 23 30	6 13 20 27	3 10 17 24
Հինգշաբթի	3 10 17 24 31	7 14 21 28	4 11 18 25
Ուրբաթ	4 11 18 25	1 8 15 22 29	5 12 19 26
Շաբաթ	5 12 19 26	2 9 16 23 30	6 13 20 27

Թ Ի Վ

ԱՊՐԻԼ	ՄԱՅԻՍ	ՅՈՒՆԻՍ
6 13 20 27	4 11 18 25	1 8 15 22 29
7 14 21 28	5 12 19 26	2 9 16 23 30
1 8 15 22 29	6 13 20 27	3 10 17 24
2 9 16 23 30	7 14 21 28	4 11 18 25
3 10 17 24	1 8 15 22 29	5 12 19 26
4 11 18 25	2 9 16 23 30	6 13 20 27
5 12 19 26	3 10 17 24 31	7 14 21 28

ՀՈԿՏԵՄԲԵՐ	ՆՈՅԵՄԲԵՐ	ԴԵԿՏԵՄԲԵՐ
5 12 19 26	2 9 16 23 30	7 14 21 28
6 13 20 27	3 10 17 24	1 8 15 22 29
7 14 21 28	4 11 18 25	2 9 16 23 30
1 8 15 22 29	5 12 19 26	3 10 17 24 31
2 9 16 23 30	6 13 20 27	4 11 18 25
3 10 17 24 31	7 14 21 28	5 12 19 26
4 11 18 25	1 8 15 22 29	6 13 20 27

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

I. ԼԵՆԻՆ. ՆՐԱ ԿՅԱՆԲՆ ՈՒ ԳՈՐԾԸ

- Յերես
1. Լենինի նկարը 3
 2. Վ. Ի. Ուլյանով Լենին (Կենսագր.) 5
 3. Լենինը և գյուղացիությունը 18
 4. Ինչպես էր ապրում Լենինը 24

II. 5. ՊԱՏԳԱՄՆԵՐ

III ՀԵՂԱՓՈՒՆ. ՅԵՐԳԵՐ ՅԵՎ ԲԱՆԱՍԵՂ-ՄՈՒԹՅՈՒՆՆԵՐ

6. Ինտերնացիոնալ 37
7. Սգերգ 38
8. Դե՛հ ընկերներ, առաջ է մի 39
9. Ազատ Հայաստան (մաճկալ Զուբարի յերգը) 41
10. Կարմիր Բանակ 43
11. Մշակ Համբուն վեր կացավ կամ անգրագիտությունը վերացավ 44

IV Խ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

12. Հայաստանի Ս.Խ Հանրագ. սահմանադրութ.
13. Անգրկովկասյան Ս.Ֆ.Խ.Հ. սահմանադրութ.
14. Սոց. Խ.Հ.Միության սահմանադրութ. 65
15. Ս. Խ. Հ. Մ. 68

« Ազգային գրադարան



NL0185606

V. ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿ

16. Կարմիր Բանակի պատմութիւնը 71
 17. Ընկ.Տրոցկու գեկույցը(ինչնակենսագր.) 82
 18. Մեր զիւրիգիտայի անցյալից 85

VI. ՀՈՂԱՅԻՆ ՀԱՐՑ

19. Հողային հարցի մասին 93
 20. Անտառների մասին 93

VII. ԿՈՊԵՐԱՅԻՆ

21. Կոպերացիան գյուղում 100
 22. Գյուղատնտեսական բանկ 108
 23. Փոխադարձ ոգնութեան ընկերութիւն 113

VIII ՄԵՐ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ

24. Բաժնակագործութիւնը և մեր անկիւք 120
 25. Մեր գյուղը և նրա տնտեսութիւնը— 131
 26. Գյուղի բառակները (մշակները).— 137

IX ԽՐՃՈՒԹ-ԸՆԹԵՐՑԱՐԱՆ

27. Աշխատանքը գյուղի խնայութեան հարանում— 141
 28. Արտոնութիւնները զորացրված կ. Բանակայիններին— 148
 29. Բանաձև— 150

X ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ

30. Բժշկական խորհրդներ. — 153
 31. Ինչ գրքեր կարդալ գյուղում. — 165
 32. Մի քանի կարևոր կարգերը. — 166
 33. Հեղափոխութեան սրահույցը. — 167